全国百佳图书出版单位
时代出版传媒股份有限公司
安徽人民出版社

Հրատարկությունն իրագործվել է
Անհույի ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/
թույլտվությամբ և աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

中国民俗文化丛书——节庆卷；董强，编著

DONG QIANG

FESTIVALS

/Armenian Version/

Translator - Christine BALAYAN

Stepanakert 2017

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

ՓԱՌԱՏՈՆԵՐ

Թարգմանիչ՝
Քրիստինե ԲԱԼԱՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 391/398(=581)
ԳՄԴ 63.5(5Չ)
Ք 530

«Գեղarm» հանդեսի մատենաշար

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ
Ք 530 **Փառատոներ**: Թարգմ. անգլերենից՝ Ք. Բալայան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 96 էջ:

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Փառատոներ» գրքում ներկայացված են «Երկնատակի» այն բազմազան ու շքեղ ավանդական ծեսերը, որոնք չինական մշակույթի կարեւոր ու անբաժան մասն են: Փառատոնային հարուստ ավանդույթներով չինացիները ի ցույց են դնում իրենց կենսունակությունն ու կյանքի հանդեպ լավատեսական հայացքը, ինչպես եւ շարունակաբար հաստատում են ուրախ, գեղեցիկ ու լիարժեք ապրելու իրենց ձգտումը:

Գիրքը կհետաքրքրի ազգագրագետներին ու պատմաբաններին, բանահավաքներին ու հասարակագետներին, ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 391/398(=581)
ISBN 978-9939-1-0651-9 ԳՄԴ 63.5(5Չ)

© Anhui People’s Publishing House
Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է
Անհույի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2017/

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ

Լապտերների տոնը ավանդական մեծ փառատոն է, որը սովորաբար համընկնում է առաջին լուսնային ամսվա տասնհինգերորդ օրվան, և հանդիսանում է ամենամյա Գարնանային փառատոնների հերթական կարևոր տոնը: Շատ վայրերում մարդիկ սեղան են նստում չինական Ամանորի նախաշեմին և սկիզբ դնում Գարնանային փառատոնների շրջանին: Այդ շրջանը եզրափակվում է Լապտերների տոնով: Հետեւաբար, շատերի համար Գարնանային փառատոնը չի ավարտվում, մինչև չեն նշում Լապտերների տոնը: Չինաստանն ունի հսկայական տարածք և երկար պատմություն, այդ պատճառով երկիրը հարուստ է բազմազան սովորույթներով, որոնք զվարճալի են դարձնում Լապտերների տոնը. դրանցից են քաղցր խմորագնդիկները, լապտերներով տեսարանները, վիշապների ու առյուծների պարերի ցուցադրումը:

1. Ծագումը

Ասում են՝ Լապտերների փառատոնը ծագում է բուդդայական արարողություններից: Ըստ բուդդայական վարդապետության՝ թռչող լույսերը խորհրդանշում են Բուդդայի վեհությունը: Այսպիսով, բուդդայականները լապտերներ են վառում ի տուրք Բուդդայի: Նույնիսկ բուդդայական օրա-

ցույցով, ամեն տարի դեկտեմբերի 30-ին լուսավառ լապտերներով մեծ արարողություն է անցկացվում՝ ցուցադրելու համար իրենց նվիրվածությունը Բուդդային: Պարզ զուգադիպությամբ բուդդայական օրացույցի այդ օրը համընկնում է լուսնային օրացույցի հունվարի 15-ին, այնպես որ՝ բուդդայականները եւ սովորական քաղաքացիները համատեղ տոնական մեծ միջոցառում են անցկացնում: Ուստի՝ այդ փառատոնը դարձել է համաժողովրդական:

Չինական ժողովրդական բանահյուսության մեջ կա ևս մի զվարճալի պատմություն Լապտերների փառատոնի մասին: Ըստ այդ պատմության՝ շատ տարիներ առաջ վայրագ գազաններն ու թռչունները տարբեր վայրերում հարձակվում էին մարդկանց ու անասունների վրա, և մարդիկ ստիպված միացել են? պայքարելու նրանց դեմ: Մի օր մի սուրբ թռչուն, ճանապարհը կորցնելով, իջնում է երկիր ու պատահաբար սպանվում մի որսորդի կողմից: Լսելով թռչնի մահը՝ Յու Դի կայսրը այնքան է զայրանում, որ անմիջապես հրաման է տալիս, որպեսզի աստվածային զորքերը իջնեն երկիր և հունվարի 15-ին այրեն բոլոր կենդանի էակներին: Յու Դի կայսեր դուստրը, սակայն, բարի էր և չէր ուզում, որ տառապեն անմեղ մարդիկ: Նա, վտանգելով իր կյանքը, գաղտագողի իջավ ամպերի միջով և մարդկանց հաղորդեց այդ նորությունը: Լսելով լուրը՝ մարդիկ քարացան: Ամբոխից մի ծեր մարդ դուրս եկավ եւ ասաց. «Հոգ մի արեք: Մենք կարող ենք զարդարել երկիրը ձողերի վրա ամրացված լապտերներով և հրավառություն անել, որպեսզի կեղծ տպավորություն ստեղծենք կայսեր համար, իբր բոլորս մահացել ենք լուսնային օրացույցի հունվարի 15-ին»: Մարդիկ համաձայնվեցին նրա հետ ու սկսեցին նախապատրաստվել նշված կարգով: Երբ օրն եկավ, և Յու Դի կայսրը երկիր իջավ՝ ստուգելու, թե ինչպես են կատարել իր հրամանը, նա հեռավորության վրա տեսավ միայն կարմիր լույսեր և խառնաշփոթություն, որը տևեց մի քանի օր շարունակ, ուստի կայսրը հավատաց, որ մարդիկ բավականին տուժել են և նրա վիրավորանքը անհերքելիորեն վերացվեց: Մարդիկ նույնպես շատ ուրախ էին, որ իրենց կյանքը փրկված

էր, իսկ գույքը՝ պաշտպանված: Եվ այս հաղթանակը տոնելու համար, ամեն տարի, լուսնային օրացույցով հունվարի 15-ին բոլոր ընտանիքները լապտերներ են կախում և հրավառություն կազմակերպում, հիշատակելու համար այդ պատմական իրադարձությունը:

2. Ավանդույթները

Ժողովրդական բանահյուսության մեջ հիշատակվում են հանդիսանքային բազմազան գործողություններ, ինչպիսիք են լապտերների մասին հանելուկների գուշակումը, քաղցր խմորագնդիկների ու լապտերներով տեսարանի վայելումը, վիշապի ու առյուծի պարերի կատարումը և այլն:

Երկտող ոտանավորներ

Լապտերների վրա ուղղահայաց գրված տողերը կոչվում են լապտերային տողեր: Լապտերների տոնի ժամանակ մարդիկ հաճույք են ստանում գունավոր լապտերների բազմազանությունից: Երկտողեր են գրվում միայն որոշ լապտերների վրա: Պատմության ընթացքում շատ գիտնականներ ու բանաստեղծներ գրել են բազմաթիվ սիրված ու հետաքրքիր բանաստեղծություններ, որոնք տեղադրվում են լապտերների վրա, դրանցում արտահայտված են իրենց հաճելի զգացմունքները:

Տոնական լապտերներ

Տոնական լապտերները ավանդական ժողովրդական արվեստի գործեր են, որոնք հայտնի են որպես չինական ավանդական մշակույթի կարևոր խորհրդանիշ: Այն ծագել է Հան դինաստիայում: Հետագայում փառատոնը հարստացել է տարբեր տեսակի զվարճանքներով: Լապտերներով փառատոնի մեկնարկից հետո պալատում ապրող մարդիկ հանդի-

սավոր արարողություն էին անցկացնում առավոտից մինչև երեկո: Պալատի ամեն մի անկյուն զարդարում էին լուսավորված լապտերներով: Հետագայում լապտերները լայն տարածում գտան՝ որպես Լապտերների տոնի մի մաս: Գոյություն ունի գունագեղ լապտերների լայն տեսականի, հիմնականում օդային տաղավարների և պագոդաների1 կամ ծաղիկների, թռչունների, ձկների և միջատների թեմաներով: Դրանք ներկված են այնպիսի խառը գունային երանգներով, ինչպիսիք են կարմիրը, դեղինը, կանաչը, կապույտը և այլն: Հին Չինաստանում մարդիկ ոչ միայն հաճույք էին ստանում լապտերներից, այլև լապտերների մասին հանելուկներ գուշակելուց, որոնք հավելվել են հետագայում: Սովորաբար մարդիկ հանելուկներ էին գրում լապտերների վրա և հրավիրում հետիոտներին՝ կռահելու դրանք: Ով տալիս էր ճիշտ պատասխանը, ստանում էր գեղեցիկ նվեր: Այն նաև լավ հնարավորություն էր երիտասարդների համար, որ նրանք հետևեն ամսաթվերին ու վայելեն լապտերների տեսարանը: Որոշ աղջիկներ լապտերների վրա նույնիսկ նկարագրում էին իրենց սիրած էակներին՝ հանելուկի ձևով և թողնում, որ մարդիկ գուշակեն դրանք: Որոշ վայրերում կարելի էր նաև փեսա դառնալ՝ լապտերների վրա հանելուկները գուշակելով: Աղջիկների ծնողները կախում էին հանելուկները փողոցների աչքի ընկնող մասերում գտնվող լապտերներից՝ երիտասարդ տղամարդկանց ուշադրությունը գրավելու համար: Եթե տղան կարողանում էր լուծել հանելուկները, ծնողները ամուսնության թույլտվություն էին տալիս նրան:

Քաղցր խմորագնդիկներ

Քաղցր խմորագնդիկները չինական յուրատեսակ խորտիկներ են, որոնք ունեն երկար պատմություն: Դրանք առաջին անգամ պատրաստվել են Սոնգ դինաստիայում և շատ հեշտ ձևով: Մարդիկ պարզապես կտրտել են մրգերը, բրնձի ալյուրով խմորագնդիկներ են պատրաստել և լցոնել թակած պտուղներով: Դրանք ուտում էին եփելուց հետո: Հետագայում այդ արհեստավարժությունը դարձավ ավելի ու ավելի բարդ, խմորագնդիկները լցոնվում էին քնջութի, նուշի, ընկուզենու, վարդի և քաղցրաջրած լոբու

մածուկով: Թեև լցոնված մածուկը քաղցր է լինում, մարդիկ հակված են ապուրը պատրաստել սպիտակ կամ կարմիր շաքարով: Շատ վայրերում քաղցր խմորագնդիկները տապակվում են յուղով: Կան վայրեր, որտեղ քաղցր խմորիկների փոխարեն գնդիկներ են պատրաստում:

Ուտեստներ

Քաղցր խմորիկներից բացի, կան նաև այլ ավանդական ուտեստներ: Չինաստանի հյուսիսային մասում ապրող մարդկանց համար Լապտերների փառատոնի ժամանակ կարևորագույն ուտեստներից մեկը համարվում է արիշտան: Փառատոնի ժամանակ, երեկոյան ընտանիքի բոլոր անդամները նստում են սեղանի շուրջ և միմյանց հետ զրուցում՝ վայելելով համեղ արիշտան, որն անդադար ուրախություն է խորհրդանշում: Հարավային Չինաստանում մարդիկ սիրում են ուտել բրնձի տորթեր, այսինքն՝ ուտեստներ պատրաստված բրնձի ալյուրով: Դա տարեցտարի զարգանալու խորհրդանիշն ունի, այսինքն՝ մարդիկ իրենց աշխատատեղերում և կյանքում աստիճանաբար կատարելագործվում են: Ավելին, որոշ տեղերում մարդիկ ուտում են նաև գարու նրբաբլիթ, չինարեն «Da Maibing», որն երջանիկ վերամիավորման իմաստ ունի:

Առյուծապար

Առյուծի պարը ժողովրդական արվեստ է, խորհրդանիշն է ինչպես չինական ինքնության, այնպես էլ ավանդական չինական մշակույթի: Երբ Լապտերների տոնը կամ ուրիշ այլ մեծ հանդիսություն է մոտենում, մարդիկ պետք է միմյանց հրավիրեն՝ ներկայացնելու առյուծապարը, տոնախմբության հաճույքը կատարյալ դարձնելու համար: Առյուծի պարը առաջացել է երեք թագավորությունների ժամանակաշրջանում: Բուդդայականությունը Չինաստանում ներկայացվել է որպես իշխող կրոն: Արդյունքում, այդ ժամանակից ի վեր չինացիների վրա մեծ ազդեցություն է թողել բուդդայական մշակույթը: Երկար պատմության ընթացքում առյուծապարը, ինտեգրվելով չինա-

կան մշակույթին, խոր արմատներ է ձգել: Կան առյուծապարերի ներկայացման տարբեր ձևեր: Պարողները կրում են առյուծի դիմակներ և իբրև առյուծներ, երաժշտության նվագակցությամբ, կատարում տարբեր շարժումներ: Ասում են՝ այդ շարժումներով նրանք հեռացնում են չարիքները:

Նավապար

Նավակապարը ևս չինական եզակի ժողովրդական արվեստներից է: Ասում են՝ որպեսզի Յու Մեծը ջրհեղեղները վերահսկելու գործում հաջողություն ունենա, մարդիկ պետք է կատարեն այդ պարը: Նավակը իրական չէ, այլ ձեռքի ինքնաշեն ցուցանմուշ: Աղջիկները բամբուկի ձողին փաթաթում են գույնզգույն կտորներ, հետո դրանք կապում իրենց գոտկատեղով: Ընդհանրապես, այդ պարը կատարում են կանայք, ովքեր պետք է նստեն փայտե թիակներով ցուցադրական նավակում և ստանան թիավարման կեցվածք: Որոշ վայրերում թիավարման ժամանակ երգում են նաև գեղեցիկ երգեր՝ արտահայտելով իրենց լավագույն ցանկություններն առ երջանիկ կյանք:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼԻԱԼՈՒՍՆԻ ՓԱՌԱՏՈՆ

Փետրվարյան երկրորդ լիալուսնի փառատոնը ավանդական հանդիսություն է, որը նշվում է լուսնային օրացույցով փետրվարի 2-ին: Տոնը կոչվում է նաև Կանաչ խոտով քայլելու տոն, Վիշապի տոն ու Վիշապի գլուխբարձրացման տոն: Այդ օրը կազմակերպվում են ժողովրդական տարբեր միջոցառումներ: Հանդիսության ժամանակ կազմակերպվում են նաև ոչ ավանդական, նորաստեղծ միջոցառումներ, հատկապես ուշագրավ է վիշապապարը:

1. Ծագումը

Ժողովրդական ավանդության համաձայն, երբ Վիշապ թագավորը գլուխը բարձրացնի ամբողջ աշխարհում՝ անձրև կտեղա: Իսկ դա կլինի չինական լուսնային տարվա փետրվարի 2-ին: Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնը հին Չինաստանում կոչում էին «Ժոնգե»: Ըստ հին չինական լեգեն-

դի՝ Վիշապ թագավորը ամեն տարի, լուսնային օրացույցով փետրվարի 2-ին, երբ բարձրացնում էր իր գլուխը, անձրև էր գալիս: Այդ ժամանակից ի վեր չինացիները վիշապը համարում են գերբնական մի էակ, որը կարողանում է կառավարել ամպերն ու անձրևը: Վիշապագլխի բարձրացումը նշանակում է? ձմռան քնից հետո բոլոր միջատներն ու բույսերը կյանքի կկոչվեն: Այդ պատճառով Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնը կոչվում է

նաև Վիշապի գարնանային տոն: Թե ինչու մարդիկ ցանկանում են, որ հենց վիշապը բարձրացնի գլուխը՝ պատճառը վիշապի հեղինակությունն է: Մարդիկ հավատում են, որ վիշապը գերբնականորեն ազդում է միջատների վրա: Երբ վիշապը բարձրացնում է իր գլուխը, միջատներն ահ ու դողով թաքնվում են այս ու այն կողմ: Մարդիկ ակնկալում են, որ վիշապը կարողանում է վերակենդանացնել միջատներին, որոնք ապահովում են առատ բերք, ինչպես նաև՝ մարդկանց աշխուժությունն ու անասունների բազմացումը: Միևնույն ժամանակ, այդ օրը մարդիկ տնկում են բրնձի սածիլներ: Տոնը կոչվում է նաև Գարնանացանի օր, որովհետև գարունը տաքացնում է հողը և ձյունը հալչում է, որն ամենաբարենպաստ պայմանն է հողամշակության համար: Ասում են՝ եթե աշխարհը կյանքի չի կոչվում, ապա գարնանային բուռն որոտները արթնացնում են նրան:

2. Ավանդույթները

Մարդիկ տոնում են Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնը՝ նախապատրաստվելով տարբեր միջոցառումների: Չինաստանի հյուսիսային մասում, Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնական օրը վաղ առավոտյան յուրաքանչյուր ընտանիք պետք է գնա ջրհոր կամ գետ՝ ջուր բերելու վառված լապտերներով: Երբ նրանք վերադառնում են տուն, պետք է խունկ վառեն՝ իրենց նախնիներին սգալու համար, հետո պետք է լապտերը կախեն դռան ամենավերևի մասում՝ ցույց տալու իրենց երջանկությունը:

Մարդիկ պատրաստում են մի շարք համեղ ուտեստներ, որպեսզի հյուրասիրեն իրենց ընկերներին ու բարեկամներին: Զարմանալիորեն՝ այս օրը պատրաստված բոլոր ուտեստները պետք է կապված լինեն վիշապի հետ:

Վիշապաբեղի նման արիշտա

Վիշապաբեղի նման արիշտան շատ հայտնի է հյուսիսային Չինաստանում: Այն իր երկար ու բարակ ձևով վիշապի բեղիկներ է հիշեցնում: Սովորության համաձայն՝ այս կերակրատեսակը նրանք պատրաստում են չինական լուսնային տարվա փետրվարի 2-ին: Ըստ ժողովրդի մեջ տարածված պատմության՝ Մինգ դինաստիայի կայսրը վատ տրամադրության պատճառով կորցրել էր ախորժակը: Նախարարները շատ էին անհանգստանում, որովհետև կայսրը օրեցօր նիհարում էր: Նոր աշխատող խոհարարը որոշեց պատրաստել մի այնպիսի կերակուր, որ կայսրը բավականություն ստանա: Թեև նախարարները այնքան էլ չէին վստահում նոր խոհարարին, նրանք այլընտրանք չունեին և ընդունեցին նրա առաջարկը: Երեկոյան, երբ կայսրը պետք է ընթրեր, խոհարարը մի մեծ ափսեում բերեց այդ ուտելիքը: Կայսրը հարցրեց իր ներքինիին. «Ի՞նչ է սա: Ես չեմ ուզում ուտել: Տարեք սա»: Խոհարարը նրան ասաց. «Այս ափսեի մեջ գտնվող ուտելիքը Ձեր երկիրն է»: Սա լսելով՝ կայսեր մոտ հետաքրքրություն առաջացավ: Նա բացեց ափսեն ու տեսավ, որ այնտեղ սովորական արիշտա է: Կայսրը զայրացած ասաց. «Միթե՞ սա սովորական արիշտա չէ: Ինչու՞ ես դու դա իմ երկիրն անվանում: Ես կպատժեմ քեզ, եթե դու ինձ հիմնավոր պատճառ չասես»: Խոհարարը ծնկի եկավ ու ասաց. «Ձերդ Մեծություն, այս արիշտան սովորական չէ ամենևին: Երկիր ասելով՝ ես ի նկատի ունեի Մինգ դինաստիային, որն անծիր արիշտայի է նման ու որն էլ կհարատևի: Կասեմ ավելին՝ արիշտան նման է վիշապի բեղերի, և դրանք կարող են ուտել միայն իսկական կայսրերը»: Կայսրը հիացավ այս խոսքերով և մեծ ախորժակով կերավ արիշտան:

Վիշապի հետ կապված այլ ուտելիքներ

Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոն օրվա ժամանակ օգտագործվող շատ կերակրատեսակներ կապված են վիշապի հետ: Այդ օրը մատուցվող գարնանային նրբաբլիթը կոչվում է «վիշապի կշեռք», մատուցվող բրինձը կոչվում է «վիշապի որդիներ», պատրաստված պելմենները կոչվում են «վիշապի աչքեր», քաղցրաբլիթը, որն ուտում են այդ օրը, կոչվում է «վիշապի ականջ»: Մարդիկ այդ օրն ուտում են բարակ նրբաբլիթներ:

Ըստ լեգենդի՝ Փետրվարյան 2-րդ լիալուսնի օրը Արևելյան ծովի Վիշապ թագավորի ծննդյան օրն է, այսպիսով նրբաբլիթն ուտելով, նրանք համարում են, որ ուտում են Վիշապ թագավորի մարմինն ու այնուհետև զգում նրա աղետը: Նրբաբլիթը դեն նետելը՝ նշանակում է թաղել Վիշապ թագավորի ընկերքը: Մարդիկ հուսով են, որ ուտելով նրբաբլիթը՝ նրանք արթնացնում են թագավորին՝ աղոթելու իրենց առողջության ու անվտանգության համար: Ինչևիցե, վիշապի հետ կապված կան նաև սուրբ հավատալիքներ: Որոշ վայրերում կանայք չպետք է այդ օրը ասեղ օգտագործեն հագուստ կարելու համար, որովհետև դա կարող է վնասել վիշապի աչքը: Այլ վայրերում մարդիկ չպետք է հագուստ լվանան, որովհետև դա կարող է վնասել վիշապի մաշկը: Վաղ առավոտյան մարդիկ, արթնանալով, տներում լապտերներ են վառում՝ մրմնջալով. «Թող լույսի հետ վերջապես տնից հեռանան բոլոր կարիճներն ու հազարոտնուկներն այս փետրվարյան 2-րդ լիալուսնի օրը»:

Խոզի գլուխ

Հին Չինաստանում մարդիկ խոզի գլուխ էին զոհաբերում աստվածներին, երբ մեծ շուքով սգո միջոցառում էին անցկացնում: Խոզի գլուխը սովորաբար չէին ուտում: Այն կարելի էր ուտել միայն դեկտեմբերի 23-ին, երբ դժվար ու ծանր տարուց հետո սովորական ընտանիքներում նախապատրաստական միջոցառումների նախօրյակին խոզ կամ ոչխար էին մորթում ճաշկերույթի համար: Լապտերների և Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոների նախօրյակներին խոզի միսը համարվում է գլխավոր կերակրատեսակը: Հատկապես չինական Նոր տարվա նախաշեմին, երբ ընտանիքի բոլոր անդամները հավաքվում են միասին ճաշելու, սեղանից անպակաս պետք է լինեն պելմենները: 1-ին լուսնային ամսվա 15-րդ օրից հետո գրեթե խոզի միս գրեթե չի մնում, փետրվարյան 2-րդ լիալուսնի օրն արդեն միայն խոզի գլուխն էր մնում ուտելու: Վիշապ թագավորի պատասխանատվության տակ էր գտնվում անձրևի գալը, այդ պատճառով էլ գյուղացիները ստիպված զոհեր էին մատուցում նրան՝ հաջորդ տարի ավելի լավ բերք ու երջանիկ կյանք ունենալու համար:

Ամուսնացած աղջիկներին տուն հրավիրելը

Գունայնայ - սա Չինաստանում ընդունում են՝ որպես ամուսնացած աղջիկների հասցե: Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնին ամուսնացած աղջիկները վերադառնում են հայրական տուն՝ իրենց միությունը կրկին տոնելու համար: Այդ օրը նրանց ծնողներն ու ընտանիքի բոլոր անդամները վաղ առավոտյան արթնանում են և մանրակրկիտ հավաքում տները՝ դիմավորելու իրենց դուստրերին: Տարբեր վայրեր ունեն տարբեր սովորույթներ, բայց կան նաև ընդհանուր ընթացակարգեր: Չինական սովորույթի համաձայն՝ ամուսնացած աղջիկներին չի թույլատրվում լուսնային օրացույցով հունվար ամսին գոնե մեկ օր մնալ իրենց ծնողների տանը: Նրանք, ծնողներին այցելելուց հետո, պետք է վերադառնան իրենց ամուսինների տուն նույն օրը: Բայց Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոն օրերից հետո նրանք կարող են մնալ իրենց ծնողների մոտ մի քանի օր և նույնիսկ կես ամիս: Իրենց ամուսինների ընտանիքներում գարնանային հանդիսությունների բազմապիսի նախապատրաստությունից հոգնած՝ ամուսնացած աղջիկները կարող էին Փետրվարյան տոնից հետո վերջապես հանգստանալ իրենց հայրական տանը: Երբ Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոնը գալիս է, նրանք կարող են այցելել իրենց մանկության ընկերներին ու երկար զրուցել, որովհետև նրանց ծնողները շատ հազվադեպ են թույլատրում, որ իրենց դուստրերը զբաղվեն տնային գործերով:

Հողագործություն

Փետրվարյան 2-րդ լիալուսնի տոն օրը արքունական պալատում նշանակալից աշխատանք էր կատարվում, այսինքն՝ կայսրը դուրս էր գալիս կայսերական պալատից և վարում հողը՝ օրինակ ծառայելով մյուսներին: Տարվա այս ժամանակահատվածում՝ գարնանամուտին, հյուսիսային Չինաստանում բավականին տաք է՝ բարենպաստ հողը մշակելու համար: Հողամշակման այս արարողությունը ցույց էր տալիս, որ կայսերական գերդաստանը մեծ նշանակություն է տալիս հողագործությանը: Մին և Ցին դինաստիաների կառավարման ժամանակ կայսրերը հողամշակման այս արարողությունը անց էին կացնում նույնիսկ կայսերական արքունիքից դուրս՝ Պեկինի մոտակայքում գտնվող՝ գյուղատնտեսությանը ընծայված տաճարում: Հանդիսության ժամանակ կայսրը խորհրդանշականորեն էր վարում դաշտերը: Ցին դինաստիայի Յոնգժենգ կայսրից հետո այս արարողությունը փոքր-ինչ այլ ընթացք ստացավ, այն սկսեցին անցկացնել ամառային պալատում:

ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Նախնիների հիշատակության հանդիսությունը, որը հայտնի է նաև Կանաչ խոտով զբոսնելու տոն, սովորաբար նշում են Գրիգորյան օրացույցով ապրիլի 5-ին: Այն ոչ միայն լուսնային օրացույցով 24 ընտրված օրերից մեկն է, այլև օր, երբ չինացիները զոհ են մատուցում իրենց նախնիներին: Սովորաբար լինելով արևոտ ու թարմ գարնանային օրերից մեկը, այն նաև հրաշալի է զբոսանքի համար: Հին ժամանակներում այդ օրը կազմակերպվում էին մարզական տարբեր միջոցառումներ:

1. Ծագումը

Նախնիների հիշատակության փառատոնը առաջին անգամ տոնել են դեռ Չժոու դինաստիայի կառավարման ժամանակ. այն ունի մոտավորապես 2500 տարվա պատմություն: Չինական օրացույցում այդ օրը հիշատակվում է «Ցինմին » բառով, որ նշանակում է՝ «ամեն ինչ աճում է մաքուր ու պայծառ մթնոլորտում», և գարնանային այդ օրը մարդիկ կարող են վայելել արևի թարմ շողերը: Տոնը նշվում է ձմեռային արևադարձից 108 օր անց: Չինացիները 108-ը համարում են երջանիկ թիվ. այն խորհրդանշում է կատարելություն, խաղաղություն ու հավերժություն: Այդ օրը մարդիկ հրաժեշտ են տալիս ցուրտ ձմռանն ու դիմավորում տաք գարունը; ամեն ինչ կրկին նոր կյանք է ստանում, կատարյալ ժամանակաշրջան է վար ու ցանքի համար:

Կա նախնիների հիշատակման տոն օրվա առաջացման երկու փաստ: Ըստ առաջին փաստարկի՝ այդ ավանդույթն առաջացել է կայսրերի հիշատակին տուրք մատուցելու սովորությունից և տարիների ընթացքում այն դարձել է նախնիներին երկրպագելու սովորույթ: Ըստ երկրորդ փաստարկի՝ այդ փառատոնը աստիճանաբար դարձել է նախնիներին երկրպագե-

լու տոն՝ Սառը ուտելիքի փառատոնի ազդեցության տակ, որը նշվում է դրանից մեկ օր առաջ, երբ գերեզմաններ են այցելում, մաքրման աշխատանքներ կատարում ու զոհաբերություններ անում:

2. Ավանդույթները

Կան ժողովրդական մի շարք ավանդույթներ, ինչպիսիք են գերեզմաններ այցելությունը՝ տուրք մատուցելու նախնիներին, գյուղական վայրերում զբոսանքը, ճոճանակով ճոճվելը, ցյուխա խաղը, ծառատունկը, վիշապօձ թռչեցնելը, ուռենու ճյուղերի տեղադրումը, հրդեհի կանխումը և այլն:

Այցելություն գերեզմաններ և զոհաբերություն

Նախնիների հիշատակության փառատոնը կարևոր օր է Չինաստանում: Այդ օրը նրանք գերեզմաններ են այցելում և տուրք մատուցում իրենց նախնիներին: Նախնիների հիշատակման փառատոնի ժամանակ, որը սովորաբար կոչվում է նաև Տանչուն, չինացիները զոհաբերություններ են կատարում հանգուցյալների հիշատակին: Նախնիների հիշատակման փառատոնը չի սահմանափակվում այդ օրով, փառատոնը ընդունելի է նաև բուն օրից 3 օր առաջ կամ 4 օր հետո, ինչպես արձանագրված է ժողովրդական բանահյուսության մեջ: Ժամանակի այսպիսի հատված է տրամադրված մարդկանց, որպեսզի նրանք կարողանան տուրք մատուցել նախնիներին: Այդ օրը մեծ ու փոքր գնում են գերեզմանատներ, իրենց հետ տանելով ուտելիք ու խմիչք, ծիսադրամներ ու հոգիներին վերաբերող առարկաներ: Մարդիկ զոհեր են մատուցում գերեզմանաքարի առջև, վառում են ծիսադրամները, նոր հող են ավելացնում շիրմաքարերին, թարմացնում շիրմաքարերի աղոտացած գրվածքները, ուռենու ճյուղեր են դնում շիրմաքարի վրա, հետո խոնարհվելով երկրպագում նախնիներին:

Գարնանային զբոսանք

Գարնանային զբոսանքը հին ժամանակներից եկող ավանդույթ է, որը պահպանվում է մինչ օրս: Մարդիկ ժամադրվում ու գնում են զբոսանքի՝ վայելելու լուսնային 3-րդ ամսվա 3-րդ օրվա բնության չքնաղ տեսարանը: Նախնիների հիշատակման փառատոնը հին ժամանակներում կոչվում էր նաև Մարտ ամսվա տոն: Այդ տոն օրը կարելի է հաճույք ստանալ արևի պայծառ շողերից, հրաշալի ծաղիկներից, փարթամ ծառերից ու խոտերից: Պաշտամունքից հետո բարեկամներով ու ընկերներով հավաքվում ու

գնում են գյուղական վայրեր՝ լեռնամագլցման, նավարկության կամ խնջույք են կազմակերպում ու վայելում հրաշալի գարունը:

Ճոճանակով ճոճվելը

Ճոճանակը պատրաստվում է պինդ պարաններով, որոնք ամրացվում են հաստատուն կետից. Պարանի ծայրերը ամուր կապվում են ներքևի մասում գտնվող տախտակից: Մարդիկ կարող են նստել տախտակի վրա և հետ ու առաջ գնալ: Չինաստանի հյուսիսային տարածաշրջանում ճոճվելու արարողությունը կազմակերպվում էր Նախնիների հիշատակման տոն օրը, գարնան ու աշնան ժամանակաշրջանում: Հին ժամանակներում պարանները պատրաստվում էին կաշվից, իսկ որպես ամրակներ օգտագործվում էին ծառի ճյուղերը, որոնք զարդարվում էին ժապավեններով: Որպես երեխաների կողմից սիրված խաղ, ճոճանակը կարող էր նրանց քաջալերել և նույնիսկ դարձնել առողջ ու համարձակ:

Ցյուչի խաղը

Որպես չինացիների կողմից ստեղծված մարզաձև՝ Ցյուչին համարվում է ժամանակակից ֆուտբոլի նախակարապետը: Հետագայում այն տարածվել է շատ երկրներում՝ Հյուսիսային Կորեայում, Ճապոնիայում, Վիետնամում և այլուրեք: Ցյուչի խաղում են կաշվից պատրաստված գնդակով: Ասում են, որ կայսրերը ստեղծել են այս խաղը՝ զինվորներին մարզելու համար: Որպես ռազմական վարժանք, այս խաղը տարածվել է Չինաստանի տարբեր վայրերում, և առանձնապես այն շատ է սիրվել Հան դինաստիայի մարդկանց կողմից: Ցյուչի խաղի ընթացքում խաղացողները բաժանվում էին երկու խմբի, յուրաքանչյուր թիմի մեջ ընդգրկվում էին 12 խաղացող, հաղթող ճանաչվում էր այն թիմը, որն ավելի շատ գոլ էր խփում:

Ծառատունկ

Նախնիների Հիշատակության փառատոնը ծառատունկի ու գյուղացիների համար վար ու ցանքի տոն է: Տաք եղանակն ու գարնանային անձրևները հրաշալի պայմաններ են ծառատունկի համար: Այդ պատճառով մարդկանց մեջ սովորություն դարձավ այդ փառատոնին ծառեր տնկելը:

Վիշապօձ թռցնելը

Վիշապօձն այն խաղերից մեկն է, որից մարդիկ, իրոք, հաճույք են ստանում, և չինացիները առաջինն էին խաղում այս խաղը: Վիշապօձը վաղ ժամանակաշրջանում պատրաստվում էր փայտից, այդ պատճառով այն կոչվում էր սույուան (փայտաձև): Հետագայում, Հան դինաստիայում փայտը փոխարինվեց բամբուկով ու մետաքսով: Ավելի ուշ վիշապօձ պատրաստվում էր նաև թղթից: Այսպիսով, սույուան վերանվանվեց ժիյուան (թղթե վիշապօձ):

Մեծերն ու փոքրերը զվարճանում են՝ վիշապօձ թռցնելով Նախնիների հիշատակման փառատոնին: Նրանք վիշապօձ թռցնում են ոչ միայն ցերեկով, այլև գիշերով: Լուսնի աղոտ լույսի ժամանակ մարդիկ թելից կախում են փոքր գունավոր լապտերներ, որոնք կոչվում են Աստծո լապտերներ՝ և թռչեցնում, դրանք փայլում են ինչպես շողացող աստղեր: Վիշապօձը եր-

կինք թռցնելուց հետո բաց են թողնում թելը և թողնում, որ քամին քշի այն: Ասում են՝ եթե վիշապօձը հասնի երկրի ծայրը, այն իրենց կբերի հաջողություն և կբուժի հիվանդությունները:

Ուռենու ճյուղերը

Ուռենու ճյուղերի տեղադրումը նույնպես կատարվում է Նախնիների հիշատակության փառատոնին: Մարդկանց մեծամասնությունը ուռենու ճյուղերը կախում են դռան վերևից կամ պատուհաններից, ոմանք դրանցից շղթա են պատրաստում ու դնում իրենց գլխին կամ իրենց երեխաների գլխարկներին: Ավանդություններից մեկի համաձայն՝ այս սովորույթը սկիզբ է առել ի հիշատակ չինական ազգի ընդհանուր նախահայրերից մեկի՝ Շենոնգի: Ըստ մի այլ ավանդության՝ ուռենու ճյուղերի տեղադրումը եղանակի կանխատեսման համար էր: Հին չինական ասացվածքն ասում է. «Եթե ուռենու ճյուղերը կանաչ են, եղանակը անձրևոտ կլինի, իսկ եթե ուռենու ճյուղերը չորանան, եղանակը արևոտ կլինի»: Երրորդ ավանդության համաձայն՝ ուռենու ճյուղերը տեղադրելով, մարդիկ կարող են իրենցից հեռացնել չար բախտը: Նախնիների հիշատակության փառատոնը չինական երեք խոշորագույն՝ հոգեգալստյան փառատոններից մեկն է. տոն, երբ հանգուցյալների համար զոհաբերություններ են անում: Ուռենու ճյուղերը տեղադրում են դռներին կամ դնում են գլխներին՝ ուրվականների ոտնձգությունները խոչընդոտելու համար: Ուռենու լեգենդը սկիզբ է առել բուդդայականությունից: Ավալոկիտեշվարան, ում ճանաչում են գրեթե բոլոր չինացիները, իր ձեռքին միշտ պահում էր ուռենու ճյուղեր ու սուրբ ջրով լի մի շիշ: Ավալոկիտեշվարան այդ շշի սուրբ ջրից միշտ ջուր էր ցանում ուռենու վրա և դրանով օրհնում երկրի վրա գտնվող բոլոր շնչավոր էակներին և վերացնում հիվանդություններն ու աղետները:

Հրաձգություն

Հրաձգությունը հին ժամանակներում խաղ էր՝ աղեղնաձգության հմտությունները վարժեցնելու համար: Ըստ պատմական արձանագրությունների՝ մարտիկները խմբով գնում էին գյուղական վայրեր՝ վարժվելու աղեղնաձգության մեջ: Մի աղավնի էին մտցնում շշադդումի մեջ, հետո այն կախում ուռենու ճյուղից: Կրակելուց հետո, երբ աղավնին ազատվում էր, թռչում էր: Որքան բարձր էր թռչում աղավնին, այնքան բարձրանում էր ռազմիկի մարտական ոգին:

Աքլորակռիվ

Աքլորակռիվը չափազանց հայտնի զվարճություն էր, որը տևում էր-Նախնիների հիշատակության փառատոնից մինչև արևադարձային ամառան վերջը: Աքլորակռիվը մեծ համբավ ուներ Թանգ դինաստիայում, որտեղ, կայսրերից սկսած մինչև սովորական քաղաքացիները, զարմանալիորեն ներգրավված էին այդ խաղի մեջ:

ՋՐՑԱՆԻ ՓԱՌԱՏՈՆ

Որպես ուժեղ էթնիկական առանձնահատկություններով օժտված դայ ազգային փոքրամասնություն եւ Յունանում այլ փոքրամասնություն կազմող ժողովրդի համար կարևոր տոն, Ջրցանի փառատոնը Գարնանային փառատոներին հավասար նշանավոր տոն է: Այն հայտնի է նաև Ֆի Թա Խոն անվանումով: Ջրցանի տոնը նշում են հունվարի կեսերին, Դայ օրացույցով կամ Նախնիների հիշատակման տոնից տաս օր առաջ կամ հետո, և սովորաբար տևում է երեք կամ չորս օր:

1. Ծագումը

Ջրցանի փառատոնը սկիզբ է առել Հնդկաստանում: Այն առաջացել է վաղ ժամանակաշրջանում, Բրահմանիկ ծեսերից, հետո ընդգրկվել է բուդդիզմի մեջ: Չինաստանում առաջին անգամ այն նշվել է 12-րդ դարում, Յունան նահանգի Դայ տարածաշրջանի մարդկանց կողմից և բուդդիզմի միջոցով տարածվել է հարավ-արևելյան Ասիայի երկրներում: Բանահյուսության մեջ կան շատ գեղեցիկ լեգենդներ Ջրցանի փառատոնի առաջացման մասին: Ասում են՝ շատ տարիներ առաջ կար մի դաժան ու չար հրեշ, ով շատ վատ հանցանքներ էր գործում Սիչունգբաննայում: Մի օր նա գողացավ տասնմեկ աղջիկ և դուրս եկավ՝ գողանալու տասներկուերորդին ևս, ով ամենախելացին ու ամենագեղեցիկն էր: Աղջիկը որոշել էր սպանել հրեշին եւ ազատել մարդկանց նրանից: Մի գիշեր նա հրեշին հարբեցրեց ու կեղծ շողոքորթությամբ ասաց. «Ձերդ մեծություն, Դուք այնքան ուժեղ եք, որ ես չեմ կարծում՝ ինչ-որ մեկը կարող է վնասել Ձեզ»: Այդ բառերն այնքան գոհացրին հրեշին, որ նա բացեց իր ուժի գաղտնիքը, ասելով, որ իր ուժը գտնվում է սեփական մազերի մեջ: Աղջիկը հիշեց նրա խոսքը: Այդ գիշեր, երբ հրեշը քնեց, աղջիկն արագորեն ու մեծ զգուշությամբ կտրեց

հրեշի մազերը և, փաթաթելով նրա վզին, խեղդեց նրան: Երբ գլուխը գետին էր ընկնում հրեշի ուսերից, այնտեղ հրդեհ էր առաջանում, այդ պատճառով տասներկու աղջիկները ստիպված էին հերթով ձեռքներին պահել հրեշի գլուխը, որպեսզի հրդեհը չտարածվի: Երբ աղջիկներից մեկը պահում էր գլուխը, մյուսները ջուր էին ցանում նրա վրա, որպեսզի նրա մարմնից արյունը մաքրվի ու նա չայրվի: Այսպես գիշեր ու ցերեկ, օրեր շարունակ պայքարում էին, մինչև, վերջապես, խիզախ աղջիկները կարողացան վերջ դնել չարաղետ կրակին: Սիշունգբաննայի մարդիկ վերջիվերջո կարողացան կրկին ձեռք բերել իրենց խաղաղությունն ու երջանկությունը: Հետագայում, ի հիշատակ գեղեցիկ, խիզախ աղջիկների, դայ ժողովուրդն ամեն տարի, Դայ օրացույցով, Նոր տարին նշում է Զրցանի փառատոնով:

2. Ավանդույթները

Զրցանի փառատոնով հրաժեշտ են տալիս Հին տարվան և դիմավորում Նոր տարին: Այն սովորաբար տևում է երեք կամ չորս օր՝ մինչ Նոր տարվա նախօրյակը: Հանդիսության ընթացքում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, ինչպիսիք են Բուդդային լողացնելը, ջրցանումը, վիշապանավով մրցարշավը, պարկեր նետելը, հրաձգությունը, երկնային լապտերներն երկինք բարձրացնելը:

Բուդդային լողացնելը

Զրցանի փառատոնի առաջին օրվա առավոտյան կրոնապաշտ մարդիկ լողանում են, հագնում մաքուր ու խայտաբղետ շորեր և գնում տաճար՝ Բուդդային երկրպագելու: Մարդիկ տաճարում բուդդայական հավանգները լցնում են ավազով, հետո նստում նրա շուրջն ու լսում Բուդդայի ուսմունքները: Բուդդայի հուշարձանը կեսօրին տեղակայում են բակում, բերում մաքուր ջուր և նախապատրաստվում Բուդդային լողացնելու ծիսակատարությանը, այսինքն՝ մաքուր ջրով փոշուց ազատում են Բուդդայի արձանը:

Զրցան

Զրցանը ամենահանդիսավոր միջոցառումն է, որը տեղի է ունենում Զրցան փառատոնի երկրորդ օրը: Զրցանը խորհրդանշում է երջանկություն, առողջություն և հաջողություն, այն նաև կարող է կասեցնել հիվանդություններն ու դժբախտությունները: Մարդիկ կարծում են, թե որքան շատ են մտահոգված, այնքան ավելի շատ ջուր պետք է ցանել: Զրցանը լինում է 2 տեսակի՝ թեթև ցանում և առատ ցանում: Թեթև ցանումը ավագների համար է; նրանց օձիքն ի վար մի գդալ ջուր են լցնում, որն իր հետ օրհնություն բերելով, հոսում է մեջքով: Առատ ջրցանման ժամանակ մարդիկ վերցնում են ջրով լի դույլեր և իրար վրա ջուր ցանում: Այդ օրը փողոցները լցվում են բերկրանքով ու ծիծաղով:

Վիշապանավով մրցարշավ

Վիշապանավով մրցարշավը տեղի է ունենում Զրցան փառատոնի երկրորդ օրը, Լանգանգ գետի վրա: Փայտե վիշապի տեսք ունեցող նավակները, որոնք զարդարվում են գունագեղ ծաղիկներով, վառ ու տոնական տեսք են ունենում: Մրցարշավին մասնակցում են նաև սիրամարգի ու մեծ ձկան տեսք ունեցող նավակներ: Տասնյակ թիավարներ՝ կին ու տղամարդ, խանդավառ թիավարում են՝ նպատակակետին արագ հասնելու համար: Խաղը սկսելուն պես մարդկանց մի հոծ բազմություն է կանգնում գետի երկու ափին և ծափերով, խլացուցիչ կռնչազանգերով ու թմբկահարություններով ողջունում են մրցողներին: Հաղթողը հարթակում ստանում է իր մրցանակը, իսկ հետո մեծ խնջույք է կազմակերպվում:

Պարկերի նետում

Պարկեր նետելը շատ ռոմանտիկ խաղ է՝ սովորաբար նախատեսված չամուսնացած երիտասարդ տղաների ու աղջիկների համար, ովքեր պետք է հրապուրեն իրար: Գեղեցիկ պատրաստված պարկերը, որոնք սովորաբար լցվում են բամբակի սերմերով, զարդարվում են երփներանգ ծաղիկներով: Կանաչ մարգագետնում աղջիկներն ու տղաները կանգնում են մի գծի վրա, հետո այդ պարկերը նետում իրար՝ հիանալով մեկը մյուսով: Պարկերն իրար վրա նետելով՝ նրանց միջև կապվածություն է առաջանում:

Օդապարիկներով հրավառություն

Օդապարիկներով հրավառությունը տարածված է դայ ժողովրդի շրջանում: Վառոդը լցվում է երկու մետր երկարություն ունեցող բամբուկի ձողի մեջ, հետո այն տեղադրվում է բամբուկից պատրաստված օդապարիկում: Այնուհետև այն վառում են ու անմիջապես բաց թողնում: Բամբուկե օդապարիկը հրթիռի նման երկինք է բարձրանում՝ ստեղծելով հրաշալի հրավառություն: Օդապարիկներով հրավառությունն ընդհանրապես կազմակերպում են գիշերը: Որքան բարձր է թռչում օդապարիկը, այնքան մարդիկ հպարտանում են, որովհետև այն խորհրդանշում է պայծառ ապագա:

Երկնային լապտերներ

Երկնային լապտերը երկարավուն է՝ վեց մետր բարձրությամբ ու շուրջ երկու մետր տրամագծով: Ուշ երեկոյան մարդիկ վերցնում են այդ լապտերները, հավաքվում են հրապարակում և լապտերների մեջ տեղադրված մոմերը վառում: Մոմից արձակվող ծուխն այնպիսի մթնոլորտ է ստեղծում, որ լապտերը դանդաղորեն բարձրանում է: Լապտերների ներքևի մասում կարելի է դնել դյուրավառ յուղեր, որոնք երկինքը գիշերը դարձնում են այնքան պայծառ, որքան ցերեկը: Երկնային լապտերները խորհրդանշում են պայծառ ապագա ու հաջողություն: Մարդիկ այդ յուրօրինակ օդապարիկը բաց են թողնում օրհնություններով ու աղոթքներով՝ հուսալով, որ կիրականանան իրենց երազանքները:

Սիրամարգաճեմ ու փղաքայլով պարեր

Այս դյութական պարը կազմակերպվում է Ձրցան փառատոնի երրորդ օրը: Անկախ սեռից ու տարիքից՝ բոլորը տոնական հագնվում ու հավաքվում են գյուղամիջում և հարվածային գործիքների նվագակցությամբ պարում են, երգում ու զվարճանում: Գեղեցիկ ու հմայիչ սիրամարգի պարը

արժանանում է ծափողջույնների ու հիացմունքի: Մինչդեռ փղաքայլով պարը պարում են շրջան կազմած՝ կրքոտ ու խենթորեն՝ բարձրաձայն երգելով հետաքրքիր հանգավորումով երգեր:

Գանբայ

Գանբայի հանդիսության ժամանակ դայերը պատրաստվում են տաճարում տեղի ունեցող տոնավաճառին: Ամեն տարի, Դայ օրացույցով, Ձրցանի փառատոնին կազմակերպվում են Գանբայի մեծ ծիսակատարություններ: Ամենատարածված արարողությունները տեղի են ունենում Յունան նահանգի Սիչունգբաննա ինքնավար մարզում: Գանբայի հանդիսությունները տեղի են ունենում բոլոր մեծ ու փոքր քաղաքներում ու գյուղերում, ամեն տարի ապրիլի տասներկուսից մինչև տասնինը: Գանբայի տոնավաճառին մարդիկ շտապում են գնելու իրենց դուր եկած ապրանքները:

Տապակա ուտելը

Ձրցանի տոնակատարություններին բոլոր ընտանիքներում պատրաստում են ավանդական ուտեստ: Հիմնականում ընտրում են ախորժաբեր բուրմունքով ուտելիքները, ինչպես, օրինակ, տապակած ձուկը: Ավանդական ուտեստներից ամենահայտնիներն են՝ հաոլոն ու հաան: Հաոլոն պատրաստվում է բրնձի ալյուրով, շագանակագույն շաքարով ու ծաղիկների համեմունքներով, որոնք փաթաթվում են բանանի տերևներով: Շոգեխաշելուց հետո այն կարելի է ուտել: Հաան պատրաստելու համար շոգեխաշում են բրինձը, հետո ծեծում ու դարձնում փափուկ մի զանգված, այնուհետև խառնում են շագանակագույն շաքարավազի հետ և կլորավուն գնդիկներ պատրաստում: Այն չորացնելուց հետո կարելի է թխել կամ տապակել:

ՎԻՇԱՊԱՆԱՎԻ ՓԱՌԱՏՈՆ

Չինական ավանդական փառահեղ փառատոններից մեկը՝ վիշապանավի փառատոնը, ունի հազարավոր տարիների պատմություն և մինչ օրս էլ նշվում է շուքով: Այս փառատոնով ներշնչված՝ արևելյան Ասիայի գրեթե բոլոր վայրերում ևս մարդիկ նշում են նման տոնակատարություն, բայց ազգային սեփական երանգավորումներով: Նույնիսկ չինացիները Վիշապանավի փառատոնի առաջացման վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չունեն: Մարդիկ Ծին-Չուում այս տոնը նշում են՝ երկրպագելու Քյու Յուենին, մինչդեռ Երեք-Չինում՝ ի հիշատակ Ծի Ժիտուիի (7-րդ դար Ք.ա.), Ուու Յե տարածաշրջանում այդ փառատոնը կապված է Ու Ծըչիու անվան հետ: Այսպիսով՝ ե՞րբ է այս փառատոնը սկիզբ առել և քանի-քանի պատմություններ կան՝ կապված դրա հետ:

1. Ծագումը

Նախապատմական նախահայրերը, ովքեր բրինձն ընդունում էին որպես հիմնական սնունդ և ապրում էին՝ ունենալով այնպիսի գյուղատնտեսություն, ինչպիսիք են բրնձաբուծությունն ու ցորենաբուծությունը, մեծ ուշադրություն էին դարձնում տարվա եղանակների արեգակնային համակարգին: Հինգերորդ լուսնային ամսվա հինգերորդ օրը նրանք համարում էին հողագործության համար ամենաբարենպաստ օր: Ուստի այս տոնի առաջացումը նրանք կապում էին գյուղատնտեսության հետ: Վիշապանավի տոնին մարդիկ սովորություն ունեին լողանալ Լանքա ապուրով, այդ պատճառով այն կոչվում էր նաև Լան լոգանքի փառատոն: Բացի դրանից այն կոչվում էր նաև Թինճոնի փառատոն՝ Թան և Սուն դինաստիաներում, և Մայիսյան փառատոն կամ Դստեր փառատոն՝ Մին և Ցին դինաստիաներում: Եվ այդ փառատոների առաջացման մասին կան շատ տարբեր պատմություններ:

Կենդանապաշտության տոն

Ասում են՝ Վիշապանավի փառատոնն ի սկզբանե հանդիսություն էր, որի ժամանակ պաշտում էին վիշապին: «Պատերազմող պետությունների ռազմավարության մեջ» արձանագրված էր, որ Ուու Յե տարածաշրջանում մարդիկ սովորություն ունեին կտրել մազերն ու դաջվածք անել վիշապի տեսքով: Ու Յեում վիշապն ընդունվում էր որպես պաշտամունքի կենդանի: Այդ փառատոնի ամենակարևոր միջոցառումը՝ վիշապանավով մրցարշավն ու ծոնգծը ուտելն առնչվում են վիշապի հետ. մրցարշավի նավը վիշապի տեսք ունի, իսկ ծոնգծընն, որը գետ է նետվում, համարում են սնունդ վիշապի համար: Բնության աղետներից խուսափելու և բարենպաստ եղանակ ունենալու համար նախնիները այնպիսի միջոցառումներ էին կազմակերպում, ինչպիսիք էին վիշապի երկրպագումը, վիշապանավի մրցարշավը, ծոնգծընի պատրաստումը, խնկավառությունն ու մոմավառությունը, մրգերի ու անասունների զոհաբերությունների կազմակերպումը:

Ու Ծընչիուի երկրպագություն

Ու Ծընչիուն ծննդով Չու նահանգից էր: Նրա հայրն ու եղբայրը մահապատժի էին ենթարկվել՝ թագավորի կասկածամտության պատճառով: Որպեսզի գործի մեջ ներգրավված չլինի, նա հենց այդ գիշերն էլ շտապեց Ու նահանգ: Իր շնորհաշատ տաղանդով նա գրավեց Ու նահանգի թագավոր Հընլիի ուշադրությունը: Նա օգնեց թագավորին հնարամիտ ճանապարհով հարձակվել Չու և Յուե նահանգների վրա: Հընլին մահացավ պատերազմում ստացած վերքերից, և նրա որդին՝ Ֆուչայը ժառանգեց գահը: Ու Ծընչիուի օգնությամբ Ֆուչայը գրավեց Յուե նահանգը: Քուծիեն՝ Յու նահանգի թագավորը, զգալի կաշառք տվեց Ու նահանգի վարչապետին, որպեսզի վերջինս թույլատրի, որ իր զորքը հանգստանա Քուայծի լեռան վրա: Ու Ծընչիուն կռահում էր, որ բանակը կրկին կհարձակվի, և նա թագավորին խորհուրդ տվեց՝ ապագայի համար աղետ չստեղծել և ամբողջովին բնաջինջ անել Ու նահանգը: Բայց Ֆուչայը հավատաց վարչապետի՝ Ու Ծընչիուի զրպարտությանը և խաղաղություն հաստատեց Յուե նահանգի հետ՝ վտարելով Ու Ծընչիուին: Սակայն Յուե նահանգի թագավորը գիտեր, որ Ու Ծընչիուին սպանելով՝ միայն ինքը կարող էր կրկին վերականգնել իր թագավորությունը: Ֆուչայը ավելի կասկածամիտ ու նախանձախնդիր դարձավ Ուի հանդեպ, հավատալով իր մյուս մերձավոր պալատականների խոսքերին, ովքեր բավականին մեծ կաշառք էին ստացել Քուծիենից՝ Յուե նահանգի թագավորից: Ուստի Ֆուչայը Ու Ծընչիուին մահվան դատապարտեց: Մահից առաջ նա ասաց, որ Յուե նահանգը անպայման կնվաճի

Ու նահանգը: Լսելով այս խոսքերը Ֆուչայը այնքան բարկացավ, որ հրամայեց Ու Ծըչիուի մարմինը գետը նետել: Բայց Ու նահանգի մարդիկ այնքան էին հարգում նրան, որ նրանք գետից հանեցին Ծըչիուի մարմինն ու թաղեցին Խըյիխո քաղաքում (ներկայիս Յզյանսու նահանգի Սուչժոու քաղաքը): Հետագայում Ու և Յուե թագավորությունների մարդիկ Ու Ծըչիուին համարեցին գետի աստված կամ ալիքների աստված: Նրանք կառուցեցին հուշահամալիր նրա պատվին և սկսեցին երկրպագել նրան: Ու Ծըչիուի երկրպագության ավանդույթը փոխանցվեց մինչ այսօր:

Տուրք Ցյու Յուենին

Որպես Չու դինաստիայի թագավոր Հուայի խորհրդական՝ Ցյու Յուենը կարգ ու կանոն հաստատեց ժողովրդի մեջ իր քաղաքական ազնվության ու կարողությունների շնորհիվ, երկիրը հարստացնելով եւ կազմելով ուժեղ զորք: Դաշնակցելով Ցի նահանգի հետ՝ նա դեմ էր գնում Ցին նահանգին: Ցավոք, նա զրկվում էր Ձիլանի մեծահոգությունից ու հեռացվում իր պաշտոնից եւ նույնիսկ աքսորվում: Աքսորի տարիներին նա գրել է անմոռաց բանաստեղծություններ իր երկրի ու ժողովրդի մասին, որոնք համարվել են գլուխգործոցներ ու դասվել Լիսաոյի, Տիանգվեն Ծյուկի ստեղծագործությունների շարքին: Ցին նահանգի բանակը հանկարծակի հարձակվում էր Չու նահանգի մայրաքաղաքի վրա: Իր հայրենիքի անարգանքների ականատեսը լինելով, հոգեպես ճնշված այդ մարդը, խեղդվե-

լով՝ ինքնասպան է լինում Միլուո գետում, իր վերջին՝ Հուայշա գործը գրելուց հետո, լուսնային օրացույցով հինգերորդ ամսվա հինգերորդ օրը: Հարազատ երկրի հանդեպ տածած բուռն սիրով ու վեհ զգացմունքներով օժտված Ցյու Յուենը մեծ հարգանք էր վայելում Չու նահանգի ժողովրդի կողմից: Վշտահար մարդիկ գնացին գետն ու իրենց հարգանքի վերջին տուրքը մատուցեցին այնտեղ: Ձկնորսները նավակներով երկար փնտրեցին նրա մարմինը, բայց, ցավոք, ապարդյուն: Նրանք ձկների, ծովախեցգետինների համար բրինձ ու բանջարեղեն էին լցնում գետը, որպեսզի նրանք չուտեն Ցյու Յուենի մարմինը: Ծեր բժիշկներից մեկը նույնիսկ գետը լցրեց մկնդեղի սուլֆիդ պարունակող գինի, որպեսզի ջրային կենդանիները հարբեն ու չվնասեն Ցյու Յուենի մարմինը: Այդ օրվանից սկսած, ի հիշատակ մեծ հայրենասեր պոետի, ավանդույթ է դարձել վիշապանավի մրցարշավին ջոնգզի ուտելն ու գինի խմելը:

2. Ավանդույթները

Ասում են, թե Ծինգ-Չու և Ու-Յե տարածաշրջաններում բոլորը հետևում են նավամրցարշավի ավանդույթին, որը նվիրված է Ցյու Յուենի և Ու Ծը-չիուի հիշատակին: Հնագույն ժամանակներից ի վեր մարդիկ Ու-Յեում

միշտ պահում էին վիշապանավակով մրցարշավի ավանդույթը: Յե նահանգում Ու նահանգի թագավորի թագադրումից հետո նա դառնորեն սգաց Ու Ծըչիուի մահը և իր հարգանքն արտահայտեց նրա՝ Ու նահանգի թագավորի հանդեպ ունեցած հավատարմությամբ: Նա ոչ միայն զոհասեղան պատրաստեց ու տասը սպիտակ ձի զոհաբերեց, գետի մոտ տաճար կառուցեց, այլև մարդկանց հանձնարարեց կազմակերպել մրցավազք վիշապանավով՝ ի հարգանս Ու Ծըչիուի: Ի վերջո Ու Ծըչիուի երկրպագությունը դարձավ ավանդույթ նույնիսկ Ու նահանգում: Տարիների ընթացքում, պատերազմների և սահմանների ընդլայնման պատճառով, նավով մրցավազքի այս սովորույթը տարածվեց նաև Չու նահանգում՝ ի հիշատակ Ցյու Յուենի, ով ինքնասպան է եղել՝ խորտակվելով Միլուո գետում:

Ծոնգծը կերակրատեսակը

Ծոնգծը են կոչվում բրնձով պելմենները, որոնք փաթաթված են եղեգի տերևներով: Ըստ ավանդական և աշխարհագրական միջավայրի արձանագրությունների, որոնք գրի են առնվել Ու նահանգում Ճոու Չուի կողմից, երեք թագավորությունների ժամանակաշրջանում, մարդիկ, ովքեր ապրում էին Յանցզի գետի հարավային շրջաններում, ցախավելի ծաղկի սերմերը բրնձի հետ փաթաթում էին եղեգի տերևների մեջ, ջուրը եռացնում էին, հետո մի լավ եփում: Դրանք ուտում էին մայիսի հինգին ու ամառային արևադարձի օրը: Մարդիկ դրանք անվանում էին ծոնգծը կամ բրնձով պելմեններ: Սա ծոնգծի մասին ամենավաղ ժամանակաշրջանի արձանագրություններից էր: Հարավային Լյան դինաստիայից Ու Ջինը «Սյու Ծիսե Ծի»-ում արձանագրել է, որ Չուի մարդիկ, սգալով Ցյու Յուենին, ամեն տարի այդ օրը ուտում էին եղեգի տերևում փաթաթված բրինձ: Յանցզի գետի հարավային շրջանը մի տարածաշրջան է, որտեղ բրինձն ամենաշուտն է հասնում: Կպչուն բրնձի մշակումը սկսում են շատ վաղ: Զարմանալի չէ, որ մարդիկ ջոնգզի ուտելու սովորություն ունեն: Մինչ օրս ջոնգզին, որը Ճըծիան գավառի Ծիյանսի քաղաքում սիրված կերակրատեսակ է համարվում, շատ տարածված է թե՛ հայրենիքում, թե՛ հայրենիքից դուրս:

Պարանի ձգում խոտերում

Այսպես կոչված պարանի ձգումը խաղ է, որին մասնակցում են 2 հոգի: Նրանք ձգում են պարանի ծայրերից. ով ավելի շուտ է բաց թողնում, նա պարտվում է: Ճոնան երգերի գրքում՝ «Ֆույին ազգային ավանդույթնե-

րում» բանաստեղծություն մեջ գեղեցիկ նկարագրված է, թե ինչպես են կանայք ու երեխաները խաղում «պարանի ձգում» խաղը: Ժոնգու Ցիուեն գրքում արձանագրված է պարանաձգման խաղի մասին զվարճալի պատմություն՝ Ու և Սիշի թագավորների մասնակցությամբ: Բույսերի սերմերը, որոնք հաճախ օգտագործվում են այդ խաղի ժամանակ, հարավային բարբառում կոչվում էին արքունական խոտ:

Արծաթափայլ օշինդրի տերևների կախումը

Հնագույն դարաշրջանի մարդկանց կարծիքով՝ մայիսը չարիքներով լի ամիս է, այդ պատճառով մարդիկ բուսական դեղամիջոցներ էին հավաքում անհաջողություններից խուսափելու համար: Ուստի նրանք հավատում էին, որ Վիշապանավի փառատոնի ժամանակ, դռնից կախելով արծաթափայլ օշինդրի տերևներ, կարող էին քշել չար ոգիներին ու աղոթել առողջության համար: Ժողովրդական լեգենդի համաձայն՝ արծաթափայլ օշինդրը կարող է բժշկել տարբեր հիվանդություններ: Այդ պատճառով նրանք դա կախում էին իրենց դռներից, որպեսզի ընտանիքից հեռացվի դժբախտությունը և օրհնություն ստանան ընտանիքի անդամները՝ ունենալու քաջ առողջություն: Եվ այդ ավանդույթը պահպանվել է մինչ այսօր:

Բեյզուոի փաթաթումը

Մարդիկ թևերից գույնզգույն մետաքսյա թելեր են փաթաթում՝ չար բաներից ազատագրվելու համար: Չինաստանը, որը հայտնի է մետաքսի արտադրությամբ, հին ժամանակներից ի վեր շերամ է աճեցրել՝ մետաքս ստանալու համար: Վիշապանավի փառատոնի ժամանակ մարդկանց թևերին փաթաթված բարձրորակ մետաքսյա թելը կոչվում է թյիվին, որը նշանակում է աղոթք՝ համաճարակային հիվանդություններով չվարակվելու համար:

Խաղողի գինի խմելը

Մարդիկ խմում են այս գինին կամ դրանով շփում են երեխաների դեմքը, ճակատը, ականջներն ու քիթը: Գինին, որ փայլուն ու նարնջագույն տեսք ունի և կոչվում է նաև ծիկուանսի, հաճախ է օգտագործվում չինական ավանդական բժշկության մեջ, որպես հակաթույն և միջատասպան դետոկսիկանտ միջոց: Մասնավորապես այն կարող է վնասազերծել այնպիսի միջատներից, ինչպիսիք են հազարոտնանիները, օձերը և այլն:

Չունճեն կայսեր կառավարման տարիներին ավանդույթների մեջ արձանագրվել է, որ գինի խմելով, ցայտեցնելով սենյակներում կամ քսելով այն երեխաների ձեռքերին ու ճակատը, կարելի է հեռացնել չարիքը:

Հովհար նվիրելը

Վիշապանավի փառատոնի ժամանակ հովհար նվիրելու ավանդույթը տարածված էր Թան դինաստիայում: Այդ փառատոնին չամուսնացած երիտասարդները իրենց սիրածներին ամենագեղեցիկ հովհարներն էին նվիրում: Չանդայն քաղաքի շատ տոհմերում նվիրում էին նույնիսկ կախազարդերով հովհարներ: Վիշապանավի տոնին շուկան դառնում էր հովհարների շուկա: Վաճառվում էին փետրահովհարներ, մետաքսյա հովհարներ, սանդալե[1] հովհար:

Ծոնգծը խաղը

Սուն և Թան դինաստիաների կայսերական պալատներում Վիշապանավի տոնից առաջ պատրաստում էին մեծաքանակ բրնձով պելմեններ՝ ծոնգծը, և փառատոնի ժամանակ խաղում ծոնգծը խաղը: Մարդիկ կանգնում էին դեմ դիմաց, մեկը կամարաձև եղջյուրով ծոնգծը էր նետում, մյուսը պետք է բռներ ու ուտեր: Հետո բացում էին այդ յուրատեսակ պելմենի տերևները և համեմատում՝ ում տերևն ամենաերկարն էր լինում, նա էլ հաղթող էր ճանաչվում:

Սխտորով եփած ձվի ուտեստ

Ամեն տարի մայիսի 5-ին, Չինաստանի կենտրոնական շրջանների գյուղերում տնային տնտեսուհիները վաղաժամ են արթնանում, նախապես սխտորով պատրաստում ձվեր, ոմանք նույնիսկ ավելացնում են արծաթափայլ օշինդրի տերևներ, և ամբողջ ընտանիքով նախաճաշում են: Այդպիսի արարողությամբ, ըստ հավատալիքի, նրանք դուրս են քշում թունավոր արարածներին և ուժ ու եռանդ ստանում:

[1]*Սանդալ - Մշտադալար, արևադարձային ծառի տեսակ, սանդալազգիների ընտանիքից: Սանդալի յուղը լայնորեն օգտագործվում էր օծանելիքի, կոսմետիկայի և բժշկության մեջ:*

Խնկեղեգի կախումը դռնից

Խնկեղեգը մոտավորապես 40 սմ բարձրությամբ խոտաբույս է, հիմնականում աճում է լեռնային մանրախճերում: Այն ունի միտքը թարմացնող հատկություն, կարող է մանրէազերծել մարմինն իրենից տարածվող յուղի շնորհիվ: Մայիսի 5-ին մարդիկ այդ բույսի տերևներին սրի տեսք են տալիս, հետո դրանք կախում կտուրի ստորին մասից, որպեսզի փորձանքը վերածվի օրհնության: Որոշ մարդիկ նույնիսկ լոգանք են ընդունում այդ խոտաբույսերով, որպեսզի ազատվեն հիվանդություններից:

Նռան ծաղիկ՝ մազերի մեջ

Լուսնային օրացույցով հինգերորդ ամսվա հինգերորդ օրը Չինաստանի հյուսիսային շրջաններում փոքրիկ աղջիկներին գեղեցիկ հագցնում են և մազերը զարդարում նռան ծաղիկներով: Այդ պատճառով հանդիսությունը կոչվում է նաև Դուստրերի փառատոն: Նախքան Վիշապանավի փառատոնը, նոր ամուսնացած կանայք պետք է այցելեն իրենց հայրական օջախները, որը նշանակում է՝ խուսափել Վիշապանավի փառատոնից:

ՎԱԼԵՆՏԻՆԻ ՏՈՆԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Վալենտինի փառատոնը կոչվում է նաև Ցիցիաոյի տոն, Հուլիսի յոթի տոն, Աղջիկների օր, Գրքերը արեւկող տալու օր: Այդ տոնի հիմքում ընկած է սերը: Քանի որ արևմտյան մշակույթում ևս նշվում է Վալենտինի տոնը, ուստի Չինաստանում այն կոչվում է Չինական Վալենտինի տոն:

1. Ծագումը

Չինական Վալենտինի տոնն ունի հրաշալի ռոմանտիկ պատմություն: Երկար տարիներ առաջ, Նիշիա գյուղում Բուֆալո անունով մի խելացի, ազնիվ ու գեղեցիկ տղա կար, ով ծնողների մահից հետո ապրում էր իր եղբոր ու հարսի հետ: Նա աշխատասեր էր և շատ բարեհամբույր: Եղբոր կինը ձեռքի տակ բանեցնում էր նրան: Նա տղային չարաշահում էր, նրան շատ աշխատանք էր տալիս: Մի անգամ ուշ աշնանը հարսը Բուֆալոյին ինը գլուխ անասուն տվեց, որպեսզի տանի արոտավայր, և ասաց. «Եթե տասը գլուխ անասուն չբերես տուն, հետ չգաս»: Բուֆալոն վերցրեց անասունները, քշեց դրանք գյուղից և տարավ մի խոր անտառ: Երբ նա կոտրված սրտով նստել էր մի ծառի տակ ու խորհում էր՝ ինչպես ինը գլուխ անասունը տասը դարձնի, ճերմակամորուք մի ծեր մարդ հայտնվեց նրա կողքին ու մեղմորեն հարցրեց, թե ինչու է նա անհանգիստ: Լսելով տղայի պատմությունը՝ ծերուկը ժպտաց ու ասաց. «Մի տխրիր: Ֆունի Սարի մոտ մի ծեր, հիվանդ անասուն կա, դու կարող ես գնալ այնտեղ ու հոգ տանել նրա մասին: Երբ նա կլավանա, դրան կտանես քեզ հետ»:

Հետևելով ծերունու ցուցումին՝ Բուֆալոն, հաղթահարելով շատ դժվարություններ, մի կերպ գտավ այդ անասունին: Տղայի բերած թարմ խոտը ուտելուց հետո անասունը գլուխը բարձրացրեց ու ասաց, որ ինքը երկնքում գտնվող Նիրրթաուա անասուններ հոտից է: Երբ նա, երկնային կանոնները խախտելով երկնքից իջավ երկիր, կոտրեց ոտքը և ստիպված մի քանի օր մնաց սարերում: Անասունը նրան ասաց, որ ինքը կլավանա միայն հարյուրավոր ծաղկաթերթերի վրա գտնվող ցողով: Ուստի Բուֆալոն սկսեց հոգ տանել անասունին: Նա արթնանում էր վաղ առավոտյան և հարյուրավոր ծաղկաթերթերից հավաքում ցողը անասունի համար: Մեկ ամիս անց նա բուժվեց և իր տասը գլուխ անասունը տուն տարավ: Նրա հարսը, ով երբեք չէր պատկերացնում, որ տղան հետ կգա, շատ զարմացավ՝ կրկին տեսնելով նրան: Դժվարությամբ հաշտվելով այն մտքի հետ, որ նա կրկին պետք է ապրի իրենց հետ, հարսը սկսեց ուղիներ փնտրել՝ ազատվելու նրանից: Ամեն անգամ նա փորձում էր վնասել տղային, բայց

ծեր անասունը փրկում էր տղայի կյանքը: Ի վերջո, չար կինը գազազեց ու արգելեց նրան տուն վերադառնալ:

Բուֆալոն սկսեց ապրել անասունների հետ: Տեսնելով, որ տղան միայնակ է, երկնային անասունի մոտ մի միտք ծագեց: Նա որոշեց օգնել՝ ամուսնացնելով նրան երկնքից իջած փերիի հետ: Երկնային փերիները սովորություն ունեին դուրս գալ սուրբ պալատից՝ լողանալու Ծիր-Կաթինում: Բոլոր աղջիկները ոչ միայն հաճելի էին, այլև շատ գեղեցիկ: Երբ նրանք վայելում էին իրենց լոգանքը, Բուֆալոն, ով թաքնվել էր եղեգներում, հանկարծ դուրս եկավ և գողացավ փերիներից մեկի հագուստը: Վախեցած փերիները արագ հագնվեցին ու թռան-գնացին: Միայն ջուլիակուհի աղջիկը մնաց, որովհետև չկային նրա շորերը: Ստացած հստակ հրահանգներով առաջնորդվելով՝ տղան իր սիրտը բացեց աղջկա առջև և ամուսնության առաջարկ արեց: Հասկանալով, որ նա շատ ազնիվ ու արդար տղա է, փերին՝ ջուլիակուհին, ընդունեց ամուսնության առաջարկը: Որպեսզի զույգը երջանիկ կյանքով ապրեր, անասունը, վտանգելով իր կյանքը, մտավ Սուրբ պալատ և գողացավ շերամ, թթենի ու ջուլիակահաստոց և ջուլիակությամբ զբաղվելու անհրաժեշտ պարագաներ նրանց համար: Նրանք ամուսնացան, երեխաներ ունեցան և ապրում էին ուրախ ու երջանիկ: Տարիներ անց ծեր անասունը հիվանդացավ ու սատկեց: Մինչև սատկելը Բուֆալոյին ասաց, որ նա պետք է հոգ տանի իր կնոջ համար: Ասաց նաև, որ տղան պետք է քերթի իր կաշին և անհրաժեշտության դեպքում օգտագործի: Զույգը մեծ դժվարությամբ արեց այն, ինչ անասունը ասել էր և վառեց նրա մարմինը սարերում:

Այն փաստը, որ Բուֆալոն և ջուլիակուհին ամուսնացել են առանց ծնողների թույլտվության, շուտով տարածվեց երկնային կայսրությունում և Մայր Թագուհու սուրբ պալատում: Թագուհին այնքան էր զայրացել, որ հրամայեց բերել փերիին՝ պատժելու: Չնայած մյուս աստվածները մեծ համակրանք էին տածում զույգի հանդեպ, նրանք փերիին բերեցին, երբ Բուֆալոն դրսում էր: Երբ Բուֆալոն տուն վերադարձավ և տեսավ, որ կի-

նը չկա, հասկացավ, որ նրան տարել են սուրբ պալատ: Նա հագավ անասունի կաշվից պատրաստված կոշիկները, երկու երեխաներին դրեց ուսերին և գնաց կնոջ հետևից: Տեսնելով, որ ամուսինը եկել է ջուլիակուհուն տանելու, Մայր Թագուհին անմիջապես նրա մազերից հանեց ոսկյա հերակալը և Ծիր-Կաթինում անցք բացեց, որպեսզի Բուֆալոն չկարողանար առաջ գնալ: Պարզկա Ծիր-Կաթինը իսկույն մթագնեց և խոչընդոտեց նրան՝ առաջ գնալ: Այդ ժամանակից ի վեր առաջացած անդունդի պատճառով զույգերը կարող էին միայն իրար տեսնել հեռավորության վրա և կիսվել արցունքներով: Սակայն հետագայում նրանք արժանացան Մայր Թագուհու համակրանքին, և նա թույլատրեց ամուսիններին իրար հետ տեսակցվել տարին մեկ անգամ՝ հուլիս ամսվա յոթերորդ օրը: Ըստ լեգենդի՝ այդ գիշեր միլիոնավոր կաչաղակներ էին թռչում երկինք, որպեսզի անդունդի վրայով կամուրջ գցեին և Բուֆալոն ու ջուլիակուհին կարողանային վայելել իրենց միությունը: Տարիներ անց ավանդույթ առաջացավ: Չամուսնացած աղջիկները հավաքվում են գիշերը և երկնքում փնտրում Սիրիուս և Վեգա ամենապայծառ աստղերը, ընդունելով, որ դրանք Բուֆալոն ու ջուլիակուհին են և փորձում են լսել նրանց սիրո խոստովանության շշուկները: Աղջիկները ցանկանում են, որ զույգը վերամիավորվի և ուզում են, որ իրենք լինեն ջուլիակուհու նման խելացի, իսկ իրենց ամուսինները՝ Բուֆալոյի նման բանիմաց:

2. Ավանդույթները

Փառատոնը անց է կացվում տարբեր ավանդույթներով, դրանցից են՝ Ցիցիաոն, աղոթքը երեխաների համար, ընկույզ ուտելը, աստղեր երկրպագելը, գրքերն ու հագուստը արևկող տալը:

Ցիցիաո

Ցիցիաոն Վալենտինի տոնի ամենամեծ միջոցառումն է, ուստի այդ տոնը կոչվում է նաև Ցիցիաոյի փառատոն: Ամեն տարի յոթերորդ լուսնային ամսվա յոթերորդ օրը երիտասարդ աղջիկները գիշերը հավաքվում են բակում՝ Վեգային աղոթելու իմաստության ու շնորհքի համար: Ցիցիաոն Չինաստանի տարբեր մարզերում տարբեր են տոնում՝ ասեղ թելելով, ցանցեր հյուսելով, ասեղներ նետելով և այլն:

Ծեր անասունի ծննդյան օրը

Այդ օրը երեխաները գնում են ծաղիկ հավաքելու և դնում անասունի եղջյուրի վրա, նշում նրա ծննդյան օրը: Բանահյուսության համաձայն՝ Մայր թագուհին անցք է բացել Ծիր-Կաթինում և խոչընդոտել զույգի հանդիպումը: Անասունի խնդրանքով՝ քերթած կաշվով պատրաստված կոշիկներով Բուֆալոն կարողացել է գնալ երկինք և տեսնել սիրած կնոջը: Այս ավանդությամբ մարդիկ հիշում են անասունի անձնուրաց նվիրումը:

Վեգայի երկրպագությունը

Միայն աղջիկները կարող են երկրպագել Վեգային: Փերիի սիրո հավատը դրդում է երիտասարդ աղջիկներին միասին հավաքվել և երկրպագել նրան: Չինական Վալենտինի տոնին աղջիկները՝ իրենց բարեկամներով ու ընկերներով հավաքվում են և երկրպագում Վեգային: Արարողությունը հիմնականում տեղի է ունենում գիշերը և դրան մասնակցելու համար պահանջվում է 5-10 աղջիկ: Հրաշալի լուսնալույսի տակ սեղանի վրա դնում են թեյ, գինի, միրգ՝ որպես զոհաբերություն և երկրպագում Վեգային: Սեղանի երկու կողմում գտնվող ծաղկամանների մեջ կարմիր թղթով փաթաթած մի քանի ծաղկեփունջ են դնում, իսկ ծաղկամանների առջև՝ խունկ: Աղջիկները, ովքեր ու-

զում են երկրպագել, պետք է նախորդ օրը ձեռնպահ մնան մսից եւ ցնցուղ ընդունելուց, հետո հավաքվում են նշանակված վայրում և երկրպագություն անում: Արարողությունից հետո աղջիկները աղոթում են Վեգային՝ կատարյալ ամուսին ունենալու համար և ուտում ընկույզ ու սեխի սերմեր: Ամուսնացած կանայք հաճախ երեխա ունենալ են ցանկանում:

Ցիաքուո ուտեստ

Ցիաքուոն հատուկ պատրաստում են այս տոնի համար: Նրա պատրաստման ձևն ու ընթացքը տարբեր են: Այնուամենայնիվ, այն միշտ մատուցում են որպես տապակած՝ բարակ ու երկար խմորեղեն: Այն պատրաստելու համար խառնում են հալեցրած շաքարավազ, ալյուր ու քնջութ, և այդ խառնուրդը թողնում ափսեում չորանալու, հետո կտրատում են: Կտրտած մասերը ձիթայուղում տապակում են: Որոշ հնարամիտ աղջիկներ նույնիսկ այդ կտրտած մասերին տարբեր ձևեր են տալիս Չինական Վալենտինի օրվան համապատասխան, օրինակ՝ թռչուններ կամ ծաղիկներ են պատրաստում և զարդարում սեխի սերմերով: Այս ձևը կոչվում է հուակուա:

Մազ լվանալը

Հարավային Չինաստանի շատ վայրերում կանայք սիրում են այդ օրը մազերը լվանալ գետափին: Ասում են, որ այդպես կարող են իրենցից վանել կեղտն ու վիշտը: Նրանք գետի մոտ մազերը լվանում են նոճու տերևներով ու դեղձենու ճյուղերով եփած ջրով: Այս ավանդույթով նրանք երկրպագում են սուրբ ջուրը: Նրանք հավատում են, որ այդ օրը գետից վերցրած ջուրը Ցիր-Կաթինի ջուրն է, և այդ պատճառով այդ ջուրը կոչվում է Վեգայի սուրբ ջուր: Աղջիկները կօրհնվեն և կպաշտպանվեն Վեգայի կողմից, երբ նրանք լվանան իրենց մազերն այդ սուրբ ջրով:

Երկրպագություն աստղերին

Այս փառատոնը ժողովրդից ընկալվում է նաև որպես բնության երկրպագություն: Չինացի հին աստղագետները կարծում էին, որ կան աստղերի յոթ խմբեր, որոնք գտնվում են երկնքում, և դրանք կազմում են 28 համաստեղություն: Դրանցից ամենապայծառը կոչվում է Մեծ շերեփ, որն ուղղակի կարող ենք տեսնել գիշերը: Մեծ շերեփի առաջին աստղը կոչվում է Գլխավոր աստղ: Երբ թագավորական քննությունները դարձան համատարած, առաջին գիտնականը կոչվեց երկրի Մեծ շերեփ, ինչը նշանա-

կում է լավագույնը: Այդ ժամանակից սկսած՝ հուլիսի յոթը գիտնականների կողմից կոչվեց Գլխավոր աստղ-փառատոն: Մարդիկ ընդունում են, որ հուլիսի յոթը Գլխավոր աստղի ծննդյան օրն է: Ահա ինչու մարդիկ, ովքեր ուզում են թագավորական քննություն հանձնել, հուլիսի յոթին երկկրպագում են Գլխավոր աստղին՝ հուսալով, որ իրենք կլինեն թիվ մեկ գիտնականը և կունենան վառ ապագա:

Գրքերն ու շորերն արևկող տալը

Գրքերն ու շորերն արևկող տալը հանրահայտ միջոցառում է, որը կազմակերպվում է հուլիսի յոթին: Ըստ ավանդույթի՝ հին ժամանակներում մարդիկ սովորություն ունեին արևի տակ դնել գրքերը հուլիսի յոթին: Մի անգամ այդ օրը Հաո Լոնգ անունով մի մարդ շորերն ու գրքերը արևի տակ դնելու փոխարեն, ինքն էր նստել արևի շողերի տակ ու վայելում էր արևի ջերմությունը: Մարդիկ հարցրին նրան, թե ինչու էր նա այդպես անում: Նա պատասխանեց, որ ինքը ևս այդ գործին է՝ նկատի ունենալով, որ արևային լոգանքի է տալիս իր ուղեղում գտնվող գիտելիքները:

ՃՈՒՆԳՅՈՒԵՆԻ ՓԱՌԱՏՈՆ

Ճունգյուենի փառատոնը, որը կոչվում է նաև Հոգիների փառատոն, Յուլանփան փառատոն կամ Միջհուլիսյան օր, ավանդական տոն է, որը չինացիները նշում են՝ իրենց նախնիներին զոհ մատուցելու համար: Այն տոնում են լուսնային օրացույցով հուլիս ամսվա տասնհիգերորդ օրը: Ճունգյուենի տոնը նույն Հալոուինի տոնն է, որը տոնում են արևմտյան երկրներում: Այդ օրը զոհեր են մատուցում և աղոթում խաղաղության համար:

1. Ծագումը

Ճունգյուենի տոնը առաջացել է դաոսականությունից: Ըստ այդ ուսմունքի՝ երեք յուենները՝ երկինքը, երկիրը և ջուրը ամեն ինչի հիմքն են: Երկինքն ու երկիրը հիմքն են տիեզերքի, ջուրը՝ կյանքի: Ըստ այդմ՝ հայտնի են Երկնային գուեն, Երկրային գուեն և Ջրի գուեն անվանումները, և առաջին, յոթերորդ ու տասներորդ լուսնային ամսվա տասնհինգերորդ օրերը համապատասխանաբար կոչվում են շանգյուեն, ճունգյուեն և սյայուեն: Օրհնության արարողությունը սովորաբար կատարվում է Շանգյուեն տոնի ժամանակ, այն հայտնի է նաև Լապտերների փառատոն անվանումով, որը տեղի է ունենում լուսնային հունվար ամսվա տասնհինգերորդ օրը: Լուսնային հուլիս ամսվա տասնհինգերորդ օրը կոչվում է Ճունգյուեն կամ՝ Սոված հոգիների տոն, այն տոնում են մեռյալների մեղքերին քավություն շնորհելու համար: Սյույուենի տոնը, որը նշվում է լուսնային հոկտեմբեր ամսվա տասնհինգերորդ օրը, հնարավորություն է տալիս մարդկանց ազատվել դժբախտություններից կամ՝ մեղավորների համար առիթ է խոստովանության համար: Տասնյակ կրոնական ծիսակատարություններ են կատարվում Ճունգյուենի տոնին՝ աղոթում են բարենպաստ եղանակի, բարգավաճ ու խաղաղ երկրի համար: Դաոսիզմում կա մի առասպել, որտեղ ներկայացվում է երեք յուենների առաջացումը: Ցի Ցիտա անունով մի մարդ ամուսնացել էր Վիշապ թագավորի աղջկա հետ: Ամուսնությունից հետո թագավորի աղջիկը երեք որդի էր ունեցել՝ Երկինք Գուենը, Երկիր Գուենը և Ջուր Գուենը, համապատասխանաբար լուսնային առաջին, յոթերորդ ու տասերորդ ամիսների տասնհինգերորդ օրը: Հատուկ հմտություններով ու անսահման ուժով օժտված երեք եղբայրներին Երկնային կայսեր կողմից շնորհվեց երեք հզոր Յուենների կոչումը: Նրանց առանձին-առանձին շնորհվեց նաև օրհնության ուժ, ներման շնորհք ու աղետի հեռացման

շնորհք: Նրանց հիշատակին կառուցվեց Երեք Յուեննեհջ տաճարը: Հետևաբար, Ճունգյուենի տոնը կարևոր օր է նախնիներին զոհաբերություն մատուցելու համար:

Այս փառատոնը կոչվում է նաև Յուլյանխեն: Յուլյան՝ սանսկրիտերեն «հեռացում», նշանակում է «ինչ-որ մեկը կախվել է»: Իսկ խենը նշանակում է ինչ-որ առարկա՝ պաշտամունքային նվերները հավաքելու համար: Բուդդայական ուսմունքում կա մի պատմություն՝ «Ինչպես է Մուլյենը փրկում իր մորը»: Մուլյենը՝ Շաքյըմունիի աշակերտը, խորացրեց իր գիտելիքները բուդդայական ուսմունքի մեջ և անսահման զորության տեր դարձավ: Նա իր խորաթափանց աչքերով տեսավ, թե ինչպես էր մայրը անասելի ցավերով տառապում դժոխքում: Հիշելով մոր անսահման սերն ու հոգատարությունը մանկության տարիներին՝ այս բարի ու ծնողասեր մարդը փորձում էր կերակրել մորը բրնձով: Սակայն, երբ բրինձը հասնում էր մոր ձեռքերին, այն փոշի էր դառնում: Չնայած իր մոգական ուժին, նա ոչինչ չէր կարողանում անել, ուստի դիմեց Բուդդայի օգնությանը: Բուդդան ասաց, որ նրա մայրը միայն վանականների ուժով կարող է ազատվել ցավերից, որովհետև իր նախկին կյանքում նա շատ մեղքեր է գործել: Բուդդան նրան կարգադրեց՝ պատշաճ տուրք մատուցել տարբեր վայրերից եկած վանականներին՝ նրանց զանազան տեսակի ուտելիքներով հյուրասիրելով հուլիսի տասնհինգին, այն ժամանակ, երբ վանականները վերջացնում էին իրենց աղոթքը: Միայն այդ դեպքում նրա մայրը կարող էր փրկվել: Այսպիսով, նմանատիպ արարողություն է կատարվում ամեն տարի հուլիսի տասնհինգին: Այդ օրը աղքատները հյուրասիրվում են ընտիր ուտելիքներով: Բուդդայական սուրբ գրքում գրված է, որ այսպես մեռած մարդկանց հոգիները կարող են ազատվել դժոխքից:

Չինական բանահյուսության մեջ Ճունգյուենը համարվում է Հոգիների օր: Ասում են՝ հոգիներն ու ոգիները դժոխքի թագավորի թույլտվությամբ

կարող են հուլիսի մեկին երկիր գալ՝ տեսնելու ողջ մարդկանց կատարած չար ու բարի գործերը: Մարդիկ հավատում են, որ հոգիները այցելում են իրենց նախկին տները և հաճույք ստանում զոհաբերված ծիսական ուտելիքից և գրավիչ ծիսադրամներից, որոնք վառվում են ընտանիքի կողմից: Դժոխք վերադառնալու վերջնաժամկետը հուլիսի տասնհինգն է, այլապես երկրի ու դժոխքի միջև դուռը կփակվի և նրանք կաքսորվեն: Այդ օրը մարդիկ գետի երկայնքով լապտերներ են վառում, որպեսզի հոգիները կարողանան վերադառնալ մյուս աշխարհ:

2. Ավանդույթները

Յուլյանխեն տոնին նվիրված շատ ավանդույթներ կան՝ նախնիների երկրպագությունը, լապտերների վառումը, հոգիների հետ կռիվը, Ճոն Քուեյի դրամայի ներկայացումը, Յուլյանխենի ծիսակատարությունը և այլն:

Նախնիների երկրպագություն

Լուսնային օրացույցի յոթերորդ ամսվա տասնհինգերորդ օրը տեղի ունեցող նախնիների երկրպագությունը կոչվում է նաև Նախնիների երկրպագության միջհուլիսյան օր: Դա ամռան վերջին և աշնան առաջին օրն է: Շոգ ամառը վերջանում է, զով աշունն է հայտնվում: Մարդիկ հավատում են, որ այդ օրը նախնիները վերադառնում են հարազատ տները՝ տեսնելու իրենց ժառանգորդներին, այդ պատճառով մատուցվում են ծիսական նվիրաբերություններ ու ծիսադրամներ: Ծիսակատարությունները տարբեր են տարածաշրջանից տարածաշրջան: Բայց բոլորն էլ կատարվում են հուլիսի տասնհինգին: «Երեք օր առաջ և երեք օր հետո» ասույթը նշանակում է, որ ծիսադրամները կարող են վառվել և ծիսական ուտելիքը կարող է պատրաստվել Ճունգյուեն փառատոնից երեք օր առաջ կամ չորս օր հետո, որը տարածված է շատ վայրերում: Չնայած բազմազան ծեսեր են կատարվում, դրանք սովորաբար կատարվում են մեկը մյուսի հետևից, հուլիսի տասնհինգին: Յուրաքանչյուր ծեսի համար խունկ են վառում՝ երկրպագելու նախնիներին: Մինչև փառատոնի ավարտը՝ առավոտյան, կեսօրին ու երեկոյան մատուցվում են երեք ուտեստ: Եթե մահացած մարդ է լինում, լուսանկարը պետք է դնել դահլիճում կամ պատից կախել: Ընտանիքի անդամները հերթով պետք է ծնկի գան՝ երկրպագելու նրան: Ընտանիքի երեցները մյուս անդամների հետ միասին նախահայրերին պետք է զեկուցեն վերջին տարվա ընթացքում կատարված իրադարձությունների

մասին, հետո երեցները խոնարհվում են նախահայրերի առջև և աղոթում իրենց ընտանիքների խաղաղության ու երջանկության համար:

Ճյանսու և Ճոծյան նահանգներում տարածված սովորություն կա՝ երկրպագության ժամանակ ուտել սոյայի հատիկներ: Սոյայի բերքահավաքը հենց այդ ժամանակ է լինում: Արարողությունից հետո ամբողջ ընտանիքով հավաքվում են, զրուցում անցած իրադարձությունների մասին և ուտում աղաջրի մեջ եփած սոյայի հատիկներ: Ի հիշատակ Մին դինաստիայի բանակի գեներալ Լի Դեյվենի, Շանհայի բնակիչները սովորաբար ճունգյուեն տոնից առաջ յոթերորդ լուսնային ամսվա տասնչորսերորդ օրը խմում են սոյայի կաթ: Ըստ առասպելի՝ ճգնաժամ էր, երբ Ցին դինաստիայի բանակը հարձակվեց Մին դինաստիայի վրա Շանհայի հարավային մասում: Սակայն Լի Դեյվինի բանակը համառ դիմադրություն ցույց տվեց, և Ցին դինաստիայի բանակը չկարողացավ հեշտությամբ գրավել քաղաքը: Նրանք պաշարեցին քաղաքը, և քաղաքում մարդիկ մնացին առանց ջրի ու սննդի: Մարդիկ ամբողջ սնունդը տվեցին բանակին, սակայն ուտելիքը սպառվեց մեկ ամսում: Հուլիսի տասնչորսին՝ գեներալ Լիի ծննդյան օրը, նա իր տանը մնացած սոյայի հատիկները ճզմեց և կաթ պատրաստեց՝ կերակրելու սոված զինվորներին, որը բարելավեց նրանց վիճակը: Իմանալով, որ քաղաքում մի քանի օր է՝ ուտելիք չկա, Ցին դինաստիայի բանակը հարձակվեց կրկին և դժվարությամբ գրավեց այն: Լին հրամայեց իր զորքին՝ ճեղքել-անցնել շրջափակումը: Իսկ ինքը վերադառնալով տուն՝ ինքնասպան եղավ՝ թողնելով մի երկտող Ցին բանակի համար՝ հույս հայտնելով, որ նրանք, սպանելու փոխարեն, հոգ կտանեն Շանհայի անմեղ քաղաքացիներին: Հետագայում, ի հիշատակ գեներալ Լիի, «Քաղաքի Աստծո» տաճար կառուցեցին և նրան երկրպագում էին որպես Շանհայի Աստված: Մարդիկ ամեն տարի լուսնային հուլիս ամսվա տասնչորսերորդ օրը՝ Լիի ծննդյան օրը, Շանհայում սոյայից պատրաստում են կաթ՝ իր հայրենիքի համար ինքնասպան եղած, սիրված առաջնորդի պատվին:

Լողացող լապտերներ

Ճունգյունի տոնը նվիրված է նահատակներին: Ջրի վրա լապտերներ կարող էին դնել՝ երկրպագելու մահացածներին: Տեղական ժողովրդական ավանդապատումներից մեկում նշվում է, որ դա կրոնական ծիսակատարություն է, որով հոգիներն ազատագրվում են տառապանքներից: Վառվող լապտերները ջրում դնելով՝ նրանք հիշում են իրենց նահատակներին, և այս ավանդույթը աստիճանաբար հայտնի դարձավ: Լապտերները

ձևավորում են տարբեր ձևերով, ամենատարածվածը լոտոսի տեսքով ձևավորվածներն են, կան նաև կաղամբի ու ձմերուկի տեսքով ձևավորված լապտերներ: Լապտերները պատրաստվում են մեծ, գույնզգույն թղթերից՝ կարմիր, բաց կարմիր, դեղին, կանաչ, մանուշակագույն: Դրանք միևնույն չափսի քառակուսիներով կտրում են և կպցնում ուրիշ թղթի վրա, որից հետո չորս անկյուններից ձգում են, և ստացվում է լոտոսի տեսքով լապտեր: Այն թուղթը, որին կպցրել են, պետք է մտցնել սոճու յուղի մեջ և թողնել բակում, որ չորանա և ամրանա, որպեսզի այն դառնա անջրանցիկ: Լապտերները պատրաստելուց հետո դրանք վառում են և դնում գետի երկայնքով, իսկ դաոսական քահանաներն ու վանականները նվագում են շենգ (տավիղ) և հուսյաո (սրինգ) ժողովրդական գործիքների վրա:

Ծիսադրամներ վառելը

Պաահին, որը կոչվում է նաև պաաֆու, թղթե պայուսակ է, որի մեջ դնում են թղթե փողեր հոգիների համար: Չինական ժողովրդական բանահյուսության մեջ կա մի գաղափար, ըստ որի՝ նոր մահացածների հոգիները տուն են այցելում հուլիսի մեկից մինչև յոթը, իսկ երեք տարուց ավելի մահացածները տուն են այցելում հուլիսի ութից մինչև տասնհինգը: Երբ հուլիսի կեսը մոտենում է, ընտանիքներում սկսում են պատրաստել ուանգշընն, այսինքն՝ ծիսադրամներ: Սովորաբար տան կանայք գնում են բուդդայական կամ դաոսական տաճար՝ հոգիների համար փող ձեռք բերելու, և պաաֆու պայուսակի վրա նրանք խնդրում են գրել «հարգարժան մահացած xxx մայրիկին կամ xxx հայրիկին», կողքին դնում են իրենց անուններով ստորագրությունները: Պայուսակի կնիքի մասում կարելի է

հենց այնպես գրել ԿՆԻՔ: Պատրաստելով բրինձ, ձուկ, միս և տոֆու[2], տանտիկինը փակում է դուռը, թասերն ու փայտիկները դարսում դահլիճի սեղանին և բրինձը լցնում թասերի մեջ: Այդ ամենը վայելելու համար նրանք հուլիսի տասներկուսից տասնհինգն ընկած ժամանակահատվածից մի օր են ընտրում: Տան տղամարդը վառում է թղթե պայուսակները սուրբ սեղանի առջև և երկրպագություն անում՝ հուսալով, որ նախնիները կօրհնեն իր ընտանիքը: Չամուսնացած որդին ու դուստրը նույնպես պետք է խոնարհվեն: Այդ արարողությունից հետո ամբողջ ընտանիքով ճաշում են:

Յուլյանփենի տոն

Յուլյանփենը բուդդայական մեծ տոն է: Այն իր անվանումը ստացել է «Մուլյենի՝ մորը դժոխքից փրկելու» պատմությունից: Այս փառատոնով մարդիկ ցույց են տալիս իրենց երախտագիտությունը ծնողների հանդեպ: Ավանդույթը Չինաստան է հասել Հնդկաստանից: Այն տարածվել է բանիմաց մի քահանայի միջոցով, արևելյան Չին դինաստիայում: Մահացած ծնողների հոգիները ազատվում են տառապանքներից բուդդայական Սուրբ գրքի գրությունների ընթերցմամբ և ծիսակատարությամբ, որոնք

2. Տոֆու - Այն անվանում են նաև սոյայի շոռ, սոյայի ունդերից պատրաստված սպիտակուցով հարուստ սննդամթերք:

համապատասխանում են Կոնֆուցիոսի բարեպաշտությանը: Սրան սատարում էին բոլոր դինաստիաների կայսրերը: Հարավային դինաստիայի Լյան Ուդիի ժամանակաշրջանում ամեն տարի կատարվում էին Յուլենփեն ի ծիսական արարողությունները, որոնցով մարդիկ հատուցում էին իրենց նախնիներին բարության համար և հուսալով ունենալ հավիտենական երկիր: Այս գաղափարն այնքան իշխող էր, որ Յուլյանփեն փառատոնը նշվում էր և ազնվականների, և հասարակ մարդկանց կողմից՝ իրենց բարօրության համար:

Ցյանկու

Ճունգյուեն փառատոնի ժամանակ ցյանկուի ավանդույթը յուրահատկորեն տարածված է հարավում գտնվող Ֆուժիե քաղաքի մարդկանց շրջանում: Այդ օրը մարդիկ բարձր սյուների վրա դրոշ կամ մի այլ բան (որպես զոհաբերություն) են կախում, որոնց մակերեսին քսուկ է լինում քսված: Շատերը բարձրանում են սյուներն ի վեր և իրար հետ մրցում, թե ով զոհաբերությունը կամ դրոշը շուտ կվերցնի: Ով ամենաշուտն է հասնում զոհաբերությանը կամ դրոշին, նա հաղթող է ճանաչվում: Հաղթողը պարգևատրվում է ոչ միայն այդ ավարով, այլև օրհնություն է ստանում հոգիների կողմից:

ՆԱԴԱՄԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ-ՓԱՌԱՏՈՆ

Նադամի տոնավաճառը տեղի է ունենում տարին մեկ անգամ, մոնղոլ բնակչության համար: Ամեն տարի լուսնային օրացույցով հուլիս և օգոստոս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում կայանում է մեծ տոնակատարություն: Այդ օրը, մարդիկ հագնելով իրենց լավագույն հագուստները կամ մրցումներին համապատասխան շորեր՝ ժամանում են տարբեր վայրերից՝ փառատոնին մասնակցելու համար: Նադամ մոնղոլերեն նշանակում է զվարճանք կամ խաղեր: Այն մոնղոլների համար ոչ միայն տոնակատարություն է, այլև լավ ֆիզիկական աշխատանք:

1. Ծագումը

Նադամի տոնավաճառի մասին պատմությունը մեզ է հասել Հան դինաստիայից: Ասում են՝ մոնղոլները հնագույն ժամանակներում ունեցել են այսպիսի կրոնական ավանդույթ՝ զոհ մատուցել Առբաոյին: Այսպես կոչված Առբաոն իրականում քարերի կույտ է, որոնք սովորաբար շարված են ամուր պագոդայի տեսքով, որի վրա փորագրված են աստվածների պատկերները: Բացի դրանից, կողքին տեղակայված է երկար մի սյուն, որը զարդարված է սուրբ գրություններ ունեցող ժապավեններով կամ եղջյուրներով, կամ՝ փաթաթված բրդով: Քարե պագոդայի համար սովորաբար ընտրում են գեղեցիկ տեսարանով բաց սարահարթ: Մոնղոլները հավաքվում են Առբաոյի շուրջը և զոհաբերությունների միջոցով ցույց են տալիս իրենց երախտագիտությունը բնության հանդեպ՝ իրենց դաստիարակելու համար: Չինգիզ խանի կառավարման տարիներին մոնղոլները կազմակերպում էին Նադամի ծիսակատարություններ: Արևմտյան Ասիայում հաղթանակ տոնելուց հետո, Չինգիզ խանը, տունդարձի ճանապարհին, իր զորքի հետ մեծ շուքով նշեց Նադամի տոնակատարությունը: Դրանից հետո այդ փառատոնը դարձավ ամենակարևոր հանդիսությունը մոնղոլների համար:

2. Ավանդույթները

Սկզբնական շրջանում Նադամի փառատոնի ժամանակ հիմնականում անց էին կացվում երեք մրցախաղ՝ ըմբշամարտ, աղեղնաձգություն ու ձիավարություն: Դրանք համարվում էին այն երեք հմտությունները, որոնց տղամարդն անպայման պետք է տիրապետի: Հետագայում, փառատոնն ավելի ճոխ դարձնելու համար, դրանց ավելացրին նաև նետումը, պոլոն և այլ միջոցառումներ:

Ըմբշամարտ

Ըմբշամարտը հայտնի խաղ է մոնղոլների համար, և Նադամի տոնավաճառին ամենագրավիչ միջոցառումն է: Ըմբշամարտը Մոնղոլիայում կոչվում է պոկ, իսկ ըմբշամարտիկները՝ պոկինգներ: Ըմբշամարտիկները պետք է մրցեն էթնիկական՝ հատուկ ըմբշամարտի համար՝ մինչև ծնկները հասնող հագուստով՝ վերևում վիշապի կամ թռչնի զարդանախշերով, ներքևում՝ հինգ գույն ունեցող պատկերով, իսկ գոտկատեղում կապում են կաշվե կամ մետաքսե գոտի:

Մոնղոլական ըմբշամարտն ունի հետևյալ առանձնահատկությունը՝ մարտիկները տարածաշրջանային և քաշային սահմանափակում չունեն: Ընդամենը մեկ փուլից հետո որոշվում է հաղթողը: Մասնակիցների թիվը պետք է զույգ լինի՝ չորս, ութ, տասնվեց և այլն: Մինչև խաղը սկսվելը ընտրվում է մի ազնիվ ու հեղինակավոր մարդ՝ մրցությունը ղեկավարելու համար: Օրհներգն երգելուց հետո մարտիկները թափահարում են ձեռքերը՝ ողջունելով ներկաներին և պարելով մտնում խաղադաշտ: Երկու ըմբշամարտիկ պետք է ողջունեն հարթակի նախագահներին՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ: Հետո նրանք սպասում են մրցավարի՝ խաղը սկսելու հրամանին: Մինչ խաղի սկիզբը մարտիկներն իրար ձեռքով բարևում են: Չնայած կան ըմբշամարտի հարյուրից ավելի ձևեր, տասներեք հիմնական սկզբունք պահպանվում են գրեթե բոլոր ըմբշամարտերի համար: Մոնղո-

լական ըմբշամարտի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ չի կարելի բռնել մրցակցի ոտքից, հարվածել երեսին, ոտքով հարվածել փորին, ձգել մրցակցի մազերից և այլն:

Հաղթողը պարգևատրվում է ոչխարով կամ թեյի մի քանի աղյուսով5, իսկ համեմատաբար ավելի մեծ մրցակցության դեպքում չեմպիոնը ստանում է թամբած ձի: Եթե ըմբշամարտիկը կրում է լիգայի չեմպիոնի տիտղոսը, նա իրավունք է ունենում կրել հանծյա՝ հինգ գույն ունեցող մետաքսե վզնոց: Հանծյա կրելը շատ ըմբշամարտիկների համար երազանք է:

Աղեղնաձգություն

Մոնղոլներն երկար ժամանակ ապրում էին քոչվորական և որսորդական կյանքով, այդ պատճառով նետն ու աղեղը անհրաժեշտություն էին նրանց համար: Նրանց ազատ ժամերի զվարճանքը նետ ու աղեղով զբաղվելն էր, ուստի աղեղնաձգության մրցությունը գոյություն ունի վաղուց ի վեր: Ներկայումս աղեղնաձգությունը սպորտաձև է, որի ընթացքում մարզում են ձեռքի մկաններն ու տեսողությունը: Մոնղոլական նետաձգության մրցությունը կազմակերպվում է երկու ձևով՝ կանգնած եւ ձի հեծած: Կանգնած նետաձգության ժամանակ մրցակիցը կրակում է նշանակետի վրա, որը գտնվում է կրակակետից քառասուն կամ հիսուն մետր հեռավորության վրա: Մրցակիցը ունենում է մեկ մետր լայնությամբ և երկու մետր երկարությամբ կաշվե պայուսակ: Մրցակիցները բաժանվում են խմբերի և մրցումն սկսում են նախօրոք ընտրված նետաձգության վայրից: Մրցությանը կարող է մասնակցել ցանկացած մարդ՝ իր ճկունության ու ճարպկության շնորհիվ: Ձիով նետաձգությունը սովորաբար կազմակերպվում է տոնավաճառի եւ ուրախ տոնակատարությունների ժամանակ: Մրցությունը տեղի է ունենում հատուկ ընտրված մրցուղու վրա՝ ութսունհինգ մետր երկարությամբ և չորս մետր լայնությամբ: Մրցուղու վրա տեղադրվում են երեք նշանակետ, որոնք գտնվում են իրարից քսանհինգ մետր հեռավորության վրա: Մրցության հաղթող ճանաչվում է այն մասնակիցը, ով սահմանափակ ժամանակում կարողանում է կրակել ուղիղ նշանակետին:

Ավանդական աղեղը սովորաբար պատրաստում են փայտից, որի երկու ծայրերը միանում են ցլի մազերով: Աղեղի հետևի մասը կիսաշրջան է, միջին մասը կլորանում է, երբ ձգում ես ցլի պոչի մազերով՝ երկու ծայրերը իրար ագուցած աղեղնալարը: Նետը, մոտավորապես, ունենում է մեկ մետր երկարություն, որը հիմնականում պատրաստվում է երկաթից կամ ոսկորից: Երբեմն տեգի հետևի մասը եռաշարք զարդարված է լինում թռչնի փետուրներով:

Ձիերով մրցավազք

Անտիկ ժամանակներից ի վեր մոնղոլները համարվում էին լավագույն հեծյալները: Նրանք ձգտում էին հմտանալ ձիավարության մեջ, դեռ ավելին, դա նրանց մեծագույն նպատակն էր:

Կան մրցավազքի տարբեր ձևեր, հիմնականում տարածված են ձիաքայլը, ձիավարգը և ձիարշավը: Ձիարշավը սովորաբար տեղի է ունենում հարթավայրում կամ դաշտավայրում: Ըստ սահմանված կարգի՝ մրցակիցները մեկնարկային գծից դուրս են գալիս միասին և հասնում նպատակակետին առանց ժամանակի սահմանափակման: Մրցման երթուղուն նրանք նախօրոք ծանոթանում են: Սովորաբար ոչ պաշտոնական մրցարշավներում ձիու թամբը չեն օգտագործում, որպեսզի զերծ մնան ավելորդ բեռից՝ պաշտպանելու մրցակիցներին ծանր վնասվածքներից, երբ նրանք ընկնեն: Մրցակիցները չեն հագնում հեծյալի կոշիկներ, նրանք սիրում են հագնել խայտաբղետ թիկնոցներ և գլխներին կապել կանաչ գլխաշոր, որը մրցակիցներին ավելի գրավիչ, ինչպես նաև պայծառ ու խիզախ է դարձնում:

Ձիախաղերի մեջ ընդգրկվում են ձիավարգն ու ձիաքայլը: Ձիավարգը Նադամի տոնավաճառում ամենագրավիչ իրադարձությունն է, որին մասնակցում են տարբեր տարիքի հարյուրավոր մրցակիցներ: Սովորաբար մրցում են նաև երեխաները: Ամենափոքր մրցակիցը կարող է լինել ընդամենը յոթ-ութ տարեկան, մեծամասամբ մասնակցում են տասներկու- տասներեք տարեկան երեխաներ: Ձիավարգում կարևոր է արագությունը, և միայն ուղիղ մրցավազքում կարող ես տեսնել վազող ձիերի արագությունը: Մրցավազքային ուղին բաժանվում է մասերի՝ 20կմ, 30կմ և 40կմ: Հաղթող համարվում է այն հեծյալը, ով առաջինն է հասնում նպատակակետին: Ձիաքայլի մրցումը գնահատվում է ձիու քայլի ամրության ու թեթևության հիման վրա: Մրցակիցներից շատերը չափահաս են, ձիաքայլի մրցությունը հատկապես կախված է հմտությունից: Մրցությանը մասնակցող ձիերի քանակը անսահմանափակ է:

Նետում

Մոնղալները խանդավառությամբ են խաղում «նետում» խաղը: Նետման իրը նման է կարճ կոթ ունեցող մանգաղի: Խաղացողը որոշ հեռավորությունից հատուկ նշանակետի վրա նետում է փայտե մանգաղանման իր, որի կոթը պատրաստվում է կապարից կամ պղնձից, երկաթից կամ այլ մետաղներից: Մրցության համար նախատեսված նետման պարագան սովորաբար լինում է 500 գրամ, երբեմն այն կարող է նաև տարբեր կշիռ ունենալ: Մրցության համար նախատեսված վայրը 750 մ2 տարածք ունեցող ուղղանկյունաձև հարթություն է: Հարթության վերջում, գետնի վրա գծվում է նետման եզրագիծը, իսկ մյուս ծայրում տեղադրվում է 50սմ բարձրություն ունեցող երեք կլոր ցից: Յուրաքանչյուր մրցակից կարող է նետել երեք անգամ՝ երեսուն վայրկյանի ընթացքում: Ցանկացած դիրքում նետումը ընդունելի է: Նետման միավորները հետևյալն են՝ երեք նետումը տաս միավոր է, երկու նետումը՝ վեց, մեկ նետումը՝ երկու: Ընդհանուր հաշիվը երեք նետման համար պետք է կազմի 30 միավոր: Տեղերը որոշվում են ըստ շահած միավորների:

Պոլո

Պոլոն շատ սիրված մոնղոլական խաղ է: Երկու կողմի մասնակիցները խաղին մասնակցում են՝ ձեռքներին T-աձև ձողիկներ: Խաղացողները, ձիերը հեծած, պետք է այդ ձողիկներով գնդակը դարպասը գցեն: Ամբողջ մրցակցությունը ընթանում է մոլեգին, հուզիչ և հետաքրքիր: Պոլո խաղի յուրաքանչյուր փուլի տևողությունը կազմում է ութ րոպե: Ընդմիջմանը պետք է փոխել ձիերը, այլապես ոչ մարզիկները և ոչ էլ ձիերը չեն կարող դիմանալ մինչև խաղի ավարտը: Պոլո խաղի համար կարևոր են ձիերը, հեծյալների հմտություններն ու դաշտի պայմանները:

ՄԻՋԱՇՆԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Միջաշնանային փառատոնը, որը հայտնի է նաև Միջօգոստոսյան կամ Լուսնային փառատոն անվանումներով, նշվում է 8-րդ լուսնային ամսվա 15-րդ օրը: Այդ օրվա լիալուսինը խորհրդանշում է վերամիավորում, այդ պատճառով Չինաստանում այն կոչվում է թուայնյուեն փառատոն: Միջաշնանային տոնը ևս կարևոր հանդիսություն է Գարնանային, Նահատակների հիշատակման և Վիշապանավի փառատոններից հետո: Այն ընտանիքների վերամիավորման և հաղորդակցման ավանդական տոն է:

1. Ծագումը

Միջաշնանային տոնի առաջացման մասին կա երեք լեգենդ: Ըստ առաջին լեգենդի՝ այն առաջացել է վաղնջական մարդկանց՝ լուսնի երկրպագությունից: Երկրորդ լեգենդի հիմքում ընկած է այն փաստը, որ այն ի հայտ է եկել լուսնի տակ կատարյալ կողակից փնտրելու սովորույթից: Եվ համաձայն երրորդ լեգենդի՝ հնագույն ժամանակներից ավանդույթ է դարձել աշնանը Երկրի Աստծուն զոհ մատուցելը: Միջաշնանային տոնը որպես փառատոն նշվել է Թան դինաստիայում և այն ժամանակ կոչվել է Տյուանցի ամիս: Այդ օրը բազմաթիվ միջոցառումներ էին կազմակերպվում: Աստիճանաբար այդ միջոցառումները վերածվեցին ավանդույթի: Այն պաշտոնական տոն էր Սուն դինաստիայում և հետագայում կարևոր տոնակատարություն դարձավ նաև Մին ու Ցին դինաստիաներում: Այժմ իր նշանակությամբ այն դասվում է չինական Նոր տարվա կողքին, որն ամենակարևոր տոնն է Չինաստանում:

2. Ավանդույթները

Միջաշնանային տոնին կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ զոհաբերություն են անում լուսնին, երախտագիտություն հայտնում լուսնին, լուսնային թխվածք են ուտում, սեխ են ուղարկում և այլն: Հյուսիսային տարածաշրջանի Ֆուժիե նահանգում տարածված է նաև հատուկ միջոցառում, որը կոչվում է լուսնային թխվածքի խաղ:

Զոհաբերություն լուսնին

Այս ավանդույթը համարվում է փառատոնի ամենահին միջոցառումը: Լուսնին զոհաբերությունը գալիս է վաղնջական ժամանակներից: Ցենգին, ում կերպարով ստեղծվել են մարդիկ, համարվում էր Լուսնի աստվածուհին: Զոհաբերություններ կատարվում էին ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը: Աշնանային զոհաբերությունը Երկրի Աստծուն՝ մարդկանց համար իրենց երախտագիտությունը հայտնելու մի ձև էր, միաժամանակ, նրանք աղոթում էին առատ բերքի համար: Մինչդեռ Լուսնի աստվածուհին ևս արժանի էր երկրպագության: Նախնիք հավատում էին, որ բույսերն աճում են լուսնի դրած ցողի շնորհիվ: Դեռ ավելին, հողագործության ժամանակը որոշվում էր ըստ լուսնի նվազման:

Լուսնին զոհաբերություն անելու արարողությունը սովորաբար կատարում են գիշերը: Արարողության ժամանակ մարդիկ խունկ են վառում և աղոթում հարգալից լռությամբ: Երախտագիտության արտահայտման ձևերն առանձին շրջաններում տարբեր են, բայց մեծամասամբ երկրպագողները ծնկի են գալիս՝ հայացքով դեպի այն կողմը, որտեղից բարձրանում է լուսինը: Հյուսիսային Չինաստանում, որպես զոհաբերություն, մատուցում են սեխ, տանձ, խնձոր, խաղող, ձմերուկ, հարավային Չինաստանում՝ գրեյֆրուտ, տարո, ադամաթուզ, խուրմա, գետնանուշ և լոտոսի արմատներ: Երբ լուսինը սկսում է կամաց-կամաց բարձրանալ դեպի զենիթ,

մարդիկ վառում են առաջին խունկը: Սկզբում կանայք են երկրպագում, հետո՝ երեխաները: Արարողությունից հետո զոհասեղանը վերցնում են, իսկ նրա վրա դրված զոհաբերությունները բաժանում այն մարդկանց, ովքեր երկրպագության են գնացել:

Երախտագիտություն լուսնին

Միջաշնանային փառատոնին լուսնին երախտագիտություն հայտնելը տարածված սովորույթ էր: Դեռ Ձին դինաստիայում մարդիկ սովորություն ունեին նստել նավակների մեջ ու վայելել լուսնի աստվածային լույսը: Թան դինաստիայի կայսրը՝ Ցյուենծոն և Յանգ Յուխեյնը Միջաշնանային փառատոնի գիշերն այցելում էին Թայ Ծիին և վայելում լիալուսնի շքեղությունը: Միջաշնանային փառատոնի գիշերը, Սուն դինաստիայում հարուստ ընտանիքները հավաքվում էին տաղավարներում, նստում պատշգամբներում կամ ճոճաթոռների վրա և վայելում լուսնի չքնաղ լույսը, մինչդեռ հասարակ մարդիկ շտապում էին տաճարներ՝ իրենց շնորհակալությունը հայտնելու լուսնին: Երեխաները զվարճանում էին, ողջ գիշեր գործում էր գիշերային շուկան: Ցին դինաստիայում տարածված էր քայլել լուսնի տակ: Այդ գիշեր կանայք գեղեցիկ հագնվում էին և զբոսնում ընկերների հետ: Նրանք այնքան ժամանակ էին զբոսնում, մինչեւ լուսաբացին աքաղաղը կանչում էր:

Ցենգիի թռիչքը դեպի լուսին

Միջաշնանային փառատոնի ժամանակ մարդիկ նայում են լուսնին և վայելում նրա գեղեցկությունը: Ժողովրդական բանահյուսության մեջ կա մի պատմություն, որ փոխանցվել է սերնդեսերունդ: Դա Ցենգի՝ լուսին թռչելու հետաքրքիր պատմությունն է:

Ասում են՝ հին ժամանակներում կային տաս արև, որոնք չորացնում էին հողը, ցամաքեցնում ծովերը և բազմաթիվ մարդիկ մահանում էին ծարավից ու տապից: Հոուվի անունով մի մարդ որոշում էր մարդկությանը ազատել այդ տաս արևի առկայության անտանելի բեռից: Նա բարձրացավ Կունլուն լեռան գագաթը, կախարդական զորությամբ քաշեց իր աղեղը և ինը նետ արձակեց արևների վրա՝ թողնելով միայն մեկ արև՝ երկրի վրա շողացողը: Մի մեծ ամբոխ հավաքվեց՝ նրան շնորհակալություն հայտնելու և նրանից հմտություն սովորելու համար: Սակայն այդ մարդկանցից Փենգմեն անունով մեկը ծածուկ մտքեր ուներ: Հոուվին միշտ իր գեղեցկուհի կնոջ՝ Ցենգիի կողքին էր լինում, բացի այն ժամերից, երբ գնում էր

որսորդության կամ ուսուցանելու: Տեսնելով այս սիրող զույգին՝ Փենգ-մենն ավելի ու ավելի էր թշնամությամբ լցվում նրանց հանդեպ: Մի օր Մայր թագուհին Հոուվիին կանչեց իր մոտ և նրան անմահության էլիքսիր տվեց, ասելով, որ նա կանմահանա այդ էլիքսիրն ընդունելուց հետո: Սակայն նա չէր ուզում հեռանալ իր կնոջից, ուստի նա այդ դեղը տվեց Ցենգիին և խնդրեց՝ այն թաքցնել: Իսկ Փենգմենը, ով չար մտադրություններ ուներ, իմացավ այդ մասին: Երբ Հոուվին ու նրա աշակերտները գնացին որսորդության, նա մնաց տանը՝ պատճառաբանելով, որ հիվանդ է: Հետո նա ներխուժեց Հոուվիի տուն և Ցենգիից պահանջեց անմահության էլիքսիրը: Ցենգին իմանալով, որ այլևս չի կարող դեղը նրանից թաքցնել, շտապեց խմել այն: Հանկարծ նա աստիճանաբար պայծառացավ և թռչեց դեպի լուսին: Բայց նա այնքան էր կարոտում Հոուվիին, որ լուսնի վրա կանգ առավ՝ երկրին ամենամոտ տեղը: Երեկոյան տուն գալով և տեղեկանալով կատարվածի մասին, Հոուվին գնաց սպանելու Փենգմենին, սակայն վերջինս արդեն փախուստի էր դիմել: Հոուվիին մնաց միայն նայել երկնքին և, ողբալով՝ կանչել կնոջը: Այդ պահին նրան թվաց, թե լուսինը պայծառացավ և Ցենգիի կերպարանքով մի կին դուրս ելավ այնտեղից: Նրանք պարտեզում խնկարկության համար սեղան ունեին, որը Ցենգիին շատ էր դուր գալիս: Հոուվին արագորեն նրա վրա դրեց Ցենգիի սիրած մրգերը՝ հուսալով, որ լուսնի վրա միայնակ ապրող կինը կարող է նրանից սեր ու հոգատարություն ստանալ: Իմանալով, որ Ցենգը լուսին է թռչել, մարդիկ հետևեցին Հոուվիի օրինակին և իրենք էլ զոհաբերություններ մատուցեցին Ցենգին՝ նրանից խնդրելով խաղաղություն ու ապահովություն:

Քանի որ Ցենգին դարձել է Լուսնի աստվածուհին, նա համարվում է անմահ և պատասխանատու է հասարակ մարդկանց ամուսնությունների համար: Հետևաբար, ամուսնական հարաբերություններ կարգավորող անձին բանահյուսության մեջ անվանում են «լուսնի տակ գտնվող ծեր մարդ»:

Լորդ Նապաստակ

Ցենգիի հետ ապրում է մի նապաստակ, ով նրան առաջնորդում է լուսնի վրա: Մի պատմության համաձայն՝ Ու Գան անունով մի մարդ տնից հեռացել է և երեք տարի կախարդություն է սովորել: Նրա կինը՝ Յոլֆուն սիրահարվել է Յան կայսեր թոռ՝ Պոլինի վրա, և նրանք երեք տարվա մեջ երեք երեխա ունեցան: Այդ ճշմարտությունն իմացավ Հյու Դի կայսրը: Ու Գանին տեղեկացնելով այդ պատմության մասին, նրան վտարեց Լուսնի պալատ: Ամաչելով ու ափսոսալով տեղի ունեցածի համար՝ Յոլֆուն իր երկու որդիներին ուղարկեց, որպեսզի Ու Գանին ուղեկցեն Լուսնի պալա-

տում, բայց նապաստակի կերպարանքով: Այդ պատճառով նապաստակի կավե արձանը, որը կոչվում է Թյուղի Յե, այսինքն՝ Լորդ Նապաստակ, օգտագործվում է Միջաշնանային փառատոնին՝ զոհաբերության արարողության ընթացքում:

Լուսնային թխվածք ուտելը

Մարդիկ Միջաշնանային փառատոնի ժամանակ ուտում են յուրահատուկ թխվածք, որը կոչվում է լուսնային թխվածք: Լուսնային թխվածքի մասին կան շատ լեգենդներ: Ասում են՝ Թան դինաստիայի առաջին կայսրը՝ Լիյուենը, իր արձակուրդն անց էր կացնում հասարակ մարդկաց հետ: Նա հիացմունքով էր ողջունում մարդկանց և համտեսում գործարարների կողմից առաջարկվող թխվածքը: Մի անգամ նա մատնացույց արեց երկնքում գտնվող լուսնին և ցածր ձայնով ասաց. «Որքան է այդ թխվածքը նման երկնքում գտնվող լուսնին»: Այս խոսքերով էլ նա թխվածքը կիսեց զինվորների ու գեներալների հետ: Այսպիսով լուսնային թխվածք ուտելու ավանդույթը հասել է հնագույն ժամանակաշրջանից: Այդ թխվածքը դարձել է Միջաշնանային փառատոնի գիշերը ընտանեական խնջույքի ժամանակ մատուցվող հիմնական ուտելիքը: Ընտանիքի անդամները հավաքվում են և վայելում լիալուսինը՝ ուտելով լուսնային թխվածք: Որոշ վայրերում մարդիկ նստում են լճի ափին և վայելում հրաշալի գիշերային տեսարանը կամ՝ այդ գիշեր նավով զբոսնում են:

Լուսնային թխվածքը ոչ միայն լավ համ ունի, այլև՝ յուրահատուկ տեսք: Այն տարբեր շրջաններում տարբեր ձևերով են թխում: Ընդհանրապես, գոյություն ունեն թխվածքի չորս հիմնական ձևեր՝ թխվածք պեկինյան ոճով, կանտոնի ոճով, սյու ոճով և չաոհու ոճով: Պեկինի ոճի թխվածքները, որոնք հանդիսանում են բուսական ուտեստ, տարածված են Չինաստանի հյուսիսային մասում, հատկապես Պեկինում և Թինծինում: Կանտոնի ոճի թխվածքները քաղցրահամ են և տարածված են Գուանդունում և մոտակա տարածքներում: Սյու ոճի թխվածքները փխրուն թխվածքներ են և տարածված են Ցզյանսուում, Չծյանում և Շանհայում: Եվ վերջապես չաոհու ոճի տափակ թխվածքները տարածված են Չաոհույում և Շանթոյում:

Սեխ ուղարկելը

Միջաշնանային փառատոնը տոն է, երբ ընտանիքներում աղոթում են երեխա ունենալու համար: Ամուսնացած կանանց կողմից լուսնին զոհաբերություն մատուցելու ավանդույթը տարածված է շատ շրջաններում: Երեխա խնդրելու համար սեխ զոհաբերելը տարածված է Չինաստանի Հենան նահանգում: Եթե հարուստ ընտանիքում մի քանի տարի ամուսնությունից հետո երեխա չեն ունենում, բարեկամները սեխ են զոհաբերում այդ փառատոնին: Ընտրած սեխը պետք է լինի սպիտակ դդումի նման փոքր: Ի դեպ, այս փաստը պետք է ծածուկ պահել նաև այգու տիրոջից: Սեխին տալիս են մարդու կերպարանք՝ դրա վրա գունավոր գունանյութով դիմագծեր նկարելով: Հետո մեծահասակները սեխը ձեռքներին՝ երաժշտության ու ճայթռուկների ուղեկցությամբ այցելում են այդ հարուստ ընտանիքը: Նրանք սեխը դնում են մահճակալի վրա, այն ծածկում վերմակով ու շշնջում. «Ինչ ցանել եք, այն էլ կհնձեք»: Այդ ամենից հետո բոլոր բարեկամներն ու ընկերները հյուրասիրվում են տանտիրոջ կողմից ու միասին աղոթում երեխա ունենալու համար: Երբ կինը ստանում է սեխը, ուտում է այն՝ հուսալով եկող տարի ունենալ առողջ երեխա:

Լուսնային թխվածքախաղ

Լունային թխվածքախաղը սիրված արարողություն է Միջաշնանային փառատոնի ժամանակ, որը սկիզբ է առել Մինյանի տարածաշրջանում և տարածվել հարավարևելյան Ասիայի չինաբնակ շրջաններում: Այդ փառատոնի գիշերը բարեկամներ ու ընկերներ հավաքվում են սեղանի շուրջ և ճենապակյա թասի մեջ հերթով զառ նետում: Թասի մեջ նետում են 6 զառ, հաղթող է ընտրվում զառի նետման արդյունքում շատ միավորներ հավաքած անձը: Որպես մրցանակ՝ հաղթողը ստանում է լուսնային թխվածք և այն բաժանում բոլորին: Իսկ ներկայումս մրցանակը ոչ միայն լուսնային թխվածք է, այլև առօրյա անհրաժեշտ պարագաներ կամ կոնֆետներ: Բարեկամներն ու ընկերները հավաքվում են այդ օրը՝ ստանալու «մի կտոր հաջողություն»:

ՉՈՆԳՅԱՆԻ ՓԱՌԱՏՈՆ

Չոնգյանի փառատոնը կոչվում է նաև Սեպտեմբերի ինի, Կրկնակ ինի, Քրիզանթեմի, Դուստրերի, Ծերունիների տոն և այլն: Լուսնային օրացույցի սեպտեմբեր ամսվա իններորդ օրը ոչ միայն օր է, երբ արտասահմանում գտնվող չինացիները ցույց են տալիս իրենց կարոտը հայրենիքի հանդեպ, այլև օր է՝ աղոթելու երկարակեցության համար:

1. Ծագումը

Չոնգյան բառի ծագումը արձանագրված է «Փոփոխությունների գրքի» մեջ: Անտիկ աշխարհում չինացիները կարծում էին, որ ինը, այսինքն՝ Յանը, ամենամեծ թիվն է, և լուսնային օրացույցով իններորդ ամսվա իններորդ օրը համարվում էր կրկնակ ինի օր, չոնգը չինարեն նշանակում է կրկնակի: Այս փառատոնի երկար պատմությունը գալիս է դեռևս Ցին դինաստիայի հաստատումից առաջ ընկած ժամանակաշրջանից:

Լեռներ բարձրանալու, գինի խմելու, հոն հավաքելու ավանդույթի մասին կա գեղեցիկ մի լեգենդ: Հարավային Հան դինաստիայում գտնվող մի ընտանիքում երջանիկ ապրում էր Խուան Ծին անունով մի երիտասարդ: Գյուղում դժբախտություն տեղի ունեցավ՝ հանկարծակի տարածվեց ժանտախտը: Գրեթե բոլոր տներում ժանտախտով հիվանդ մարդ կար: Խուան Ծինի ծնողները նույնպես մահացան: Երբ Խուանը երեխա էր, մեծահասակներից լսել էր, որ մի սատանա Հուխ գետով ամեն տարի ժանտախտ է բերում մարդկանց: Խուանը որոշեց գնալ ուսուցչի մոտ և սովորել՝ ինչպես կարելի է գյուղացիներին ազատել սատանայից: Ուսուցիչ փնտրելիս նա լսեց, որ լեռներում ապրում էր Ցի Ճանգֆան անունով աստված: Նա գնաց այդ աստծո մոտ և նրանից սատանա սպանող սուր ստացավ, որով պարապում էր ամեն օր՝ արթնանալով աքաղաղը կանչելուն պես: Մի տարի անց, երբ մի օր, ինչպես միշտ, Խուանը պարապում էր, Ցի Ճանգֆանը նրան ասաց, որ այդ սատանան գետից դուրս կգա լուսնային իններորդ ամսվա իններորդ օրը: Խուանը որոշեց գնալ և մարդկանց ազատել այդ չարիքից: Ցի Ճանգֆանը նրան տվեց մի պարկ հոնի տերևներ ու մի շիշ քրիզանթեմի գինի և խնդրեց, որ գյուղացիներին ասի՝ աղետից խուսափելու համար բարձրանան լեռները: Նա վերադարձավ հայրենի գյուղ և արեց այն, ինչ կարգադրել էր Ցի Ճանգֆանը: Իններորդ լուսնային ամսվա իններորդ օրը նա գյուղացիներին լեռը բարձրացրեց, նրանց տվեց հոնի տերևները՝ ասելով, որ դրանք նրանց կպաշտպանեն սատանայից և, քրի-

զանքեմի գինին տալով ասաց, որ գինին էլ նրանց կպաշտպանի ժանտախտով վարակվելուց:

Խուան Ցինին համոզվելով, որ գյուղացիները ապահով են, վերադարձավ գյուղ: Նա, Ցինլոնյան սուրը ձեռքին, նստեց տանը և սպասեց սատանային: Որոշ ժամանակ անց մի տարօրինակ քամի փչեց, և սատանան մռնչալով գետից դուրս եկավ ու քայլերն ողղեց դեպի գյուղ, սակայն նա գյուղում ոչ ոքի չգտավ: Նա վերև նայեց ու տեսավ, որ գյուղացիները միասին բարձրացել են լեռը: Վազելով հասավ լեռնալանջ, սակայն հոնի տերևների ու քրիզանքեմի գինու հոտը նրան թույլ չտվեց մի քայլ անգամ առաջ գնալ: Սատանան կրկին գյուղ վերադարձավ: Տեսնելով, որ ինչ-որ մեկը նստած է տանը, սատանան մռնչալով նետվեց նրա վրա: Խուան Ցինը սուրը վերցրեց ու ելավ նրա դեմ: Որոշ ժամանակ կռվելուց հետո սատանան, հասկանալով, որ պարտության է մատնվում Ցինի կողմից, փախավ: Սակայն Խուան Ցինը իսկույն նրա հետևից նետեց Ցինլոնյան սուրը: Սուրը մխրճվեց սատանայի սիրտը և գետին տապալեց նրան: Դրանից հետո Հուխը գետի մոտերքին այլևս սատանա չհայտնվեց: Խուան Ցինի հերոսական արարքի և վտանգից խուսափելու համար լեռներ բարձրանալու մասին պատմությունը փոխանցվեց սերնդեսերունդ: Ուստի լեռներ բարձրանալու ավանդույթը Չոնյանգ փառատոնին պահպանվել է առ այսօր:

2. Ավանդույթները

Չոնգյան փառատոնի մասին ժողովրդական բանահյուսության մեջ արձանագրված են բազմաթիվ ավանդույթներ, դրանցից ամենահայտնիներն են՝ զբոսնելն ու բարձունքներ ելնելը, չոնգյան թխվածք ուտելը, հոն տուն տանելը, քրիզանթեմ վայելելը, քրիզանթեմի գինի խմելը, ծովերի աստծուն զոհ մատուցելը, ամուսնացած աղջիկների՝ ծնողներին այցելության գնալն ու տարեցներին հարգանքի տուրք մատուցելը և այլն:

Զբոսնելն ու բարձունքներ ելնելը

Չոնգյան տոնին սարեր բարձրանալու ավանդույթը եկել է հնագույն ժամանակներից: Այս տոնը կոչվում է նաև Տենծյայի տոն /Տենծյա՝ չինարեն նշանակում է բարձունք ելնել/: Ավանդույթը առաջացել է Վեյ-Ցի հարավային և հյուսիսային դինաստիաների ժամանակաշրջանում: Այն շատ տարածված էր Թան դինաստիայում, երբ բանաստեղծները բարձրանում էին բլուրները և, բարձրությամբ հիացած՝ բանաստեղծություններ էին գրում ընկերների հետ: Հատուկ կանոն չկա՝ որտեղ պետք է բարձրանալ: Մարդիկ, մեծամասամբ, ընտրում են սարերն ու աշտարակները: Բարձունք ելնելը կատարյալ ռոմանտիկա է: Պեկինի Բուրավետ բլուրը, Շանդունի Արջառի բլուրը, Նանչանի Արքայազն Թանի տաղավարը հայտնի տեսարժան վայրեր են, որտեղ մարդիկ հաճույքով են բարձրանում: Մարդիկ աշնանը չեն կարողանում իրենց հայացքը կտրել գեղեցիկ տեսարանից և չեն հագենում թարմ օդից՝ բարձրանալու ժամանակ: Դեռ ավելին, բարձունք ելնելը առողջության գրավականն է բոլոր տարիքի մարդկանց համար:

Չոնգյան թխվածք ուտելը

Չոնգյանի տոն օրը չոնգյան թխվածք ուտելը մի իսկական հաճույք է: Այն կոչում են նաև ծաղիկ-թխվածք, քրիզանթեմի թխվածք կամ հնգագույն թխվածք: Տարբեր շրջաններում այն թխում են տարբեր ձևերով ու համով: Երբ Կրկնակ ինի տոնը մոտենում է, բոլոր ընտանիքներում գոլորշու վրա

թխվածք են թխում: Որպեսզի ախորժալի համ ունենա, թխվածքի մեջ լցնում են նռան հատիկներ, շագանակներ, գինկգոյի[3] պտուղներ, սոճու սերմեր, և հաճախ այն պատրաստում են կենդանիների տեսքով: Այս թխվածքները մարդիկ իրենց հետ անպայման վերցնում են բլուր բարձրանալիս:

Հոն տանելը

Կրկնակ ինի տոնին հոն տուն տանելը յուրաքանչյուր ընտանիքում ավանդույթ է դարձել: Այդ պատճառով Կրկնակ ինի տոնը կոչվում է նաև Հոնի փառատոն: Հոնի հոտը օգտակար է թրթուրներից ազատվելու, խոնավությունից զերծ մնալու համար, հակաբակտերիալ է, վերացնում է ստամոքսում կուտակված լեղին, օրգանիզմից դուրս է հանում մրսածությունը և այլն: Ու և Հյուեծիաո տարածաշրջանների /Ուն և Հյուեն Ծիանյան նահանգի որոշ տարածաշրջանների հին անվանումներն են/ հոնը, որ առատ է Ծիանյան նահանգում, ամենաբարձր որակի հոնի տեսակներից է: Մարդիկ կարծում են, որ Կրկնակ ինը օր է՝ անհաջողությունը հաջողության վերածելու համար, այդ պատճառով նրանք հոն են բերում՝ խուսափելու անհաջողությունից ու աղետից: Այդ օրը հոն բերելու ավանդույթը տարածված էր Թան դինաստիայում: Ոմանք այն բերում էին ձեռքերում, ոմանք՝ գոտկատեղում կապած փոքրիկ պայուսակներում, մյուսները՝ նույնիսկ իրենց քունքերին: Հոնը մեծամասամբ բերում էին կանայք ու երեխաները: Բայց տղամարդիկ նույնպես կարող էին բերել:

Քրիզանթեմի ու քրիզանթեմի գինու վայելումը

Սեպտեմբեր ամիսն այն ժամանակաշրջանն է, երբ քրիզանթեմները ծաղկում են ամբողջ շքեղությամբ, այդ պատճառով սեպտեմբեր ամիսը կոչվում է նաև քրիզանթեմի ամիս: Քրիզանթեմ ուտելու ավանդույթի մասին հիշատակվում է Չյուուենի «Լիսաո» բանաստեղծության մեջ: Մարդիկ հավատում են, որ քրիզանթեմն իր բուժիչ

3. Գինկգոն՝ տերևաթափ խոշոր ծառ է, մոնոպոդիալ ճյուղավորվածությամբ:

հատկությամբ երկարացնում է կյանքը, պաշտպանում չարից, այն կարևոր է այնքան, որքան հոնը: Քրիզանթեմով հիանալու ավանդույթը անհրաժեշտություն էր դարձել դեռ վաղ ժամանակաշրջանից՝ Ցին դինաստիայում: Թան դինաստիայում տարածված էր մի ասույթ՝ «Ինչ Չոնգյան փառատոն առանց քրիզանթեմի», այդ պատճառով այս փառատոնը կոչվում է նաև Քրիզանթեմի օր: Քրիզանթեմը շատ նուրբ, գեղեցիկ, նրբագեղ և հաճելի դեկորատիվ ծաղիկ է: Այժմ ևս բոլոր տեսակի քրիզանթեմները Չոնգյան փառատոնին տոնական մթնոլորտ են հաղորդում:

Ծովերի աստծուն զոհ մատուցելը

Չինաստանի հարավ-արևելյան շրջաններում մարդիկ հավատում էին, որ Մածու աստվածուհին հաջողություն է բերում մարդկանց ծովային ճանապարհորդությունների ժամանակ: Կրկնակ իննի օրը այն ժամանակահատվածն է, երբ ծովի աստվածուհի Մածուն երկինք է բարձրանում, այդ պատճառով մարդիկ ամեն տարի մեծ զոհաբերություններ են կատարում Չոնգյան փառատոնի ժամանակ:

Իրական Մածու աստվածուհին՝ Լին Մոնյանը, ծնվել է հյուսիսային Սուն դինաստիայում: Բարեսիրտ աղջիկը հաճախ էր լուծում ժողովրդի դժվար խնդիրներն ու թեթևացնում նրանց տառապանքները: Դեռ ավելին, նա միշտ սովորեցնում էր մարդկանց կատարել բարի գործեր և առաջնորդում էր նրանց դեպի բարին ու լավը, հեռու պահում աղետներից: Քանի որ նա ապրում էր ծովափին, կարողանում էր լավ լողալ: Նա հաճախ էր օգնում ծովագնաց նավերին, ուստի մարդիկ նրան կոչում էին Աստվածուհի կամ Վիշապ-արքայադուստր: Երբ նա քսանութ տարեկան էր, իր երիտասարդ կյանքը տվեց՝ աղետից փրկելու հորն ու եղբորը, երբ նրանք ծովագնացության էին մեկնել: Մահից հետո նա ստացավ «Ծովի Աստվածուհի կոչումը»: Կրկնակ իննի օրն այն օրն է, երբ Մածուն երկինք է բարձրանում, այսպիսով կատարվում են տարբեր ծիսակատարություններ և զոհաբերում ամեն տեսակի բանջարեղեն ու միրգ:

Ամուսնացած աղջիկների այցը հայրական տուն

Կրկնակ իննի օրը ամուսնացած աղջիկները վերադառնում են տուն՝ իրենց ծնողներին տեսակցելու: Այդ պատճառով այդ օրը կոչվում է նաև Աղջիկների օր: Աստիճանաբար ավանդույթ է դարձել, երբ ամուսնացած աղջիկները գալիս էին տեսակցելու իրենց ծնողներին կամ ծնողներն էին նրանց իրենց տուն հրավիրում՝ հյուրասիրելու Չոնգյան թխվածքով:

Հարգանքի տուրք մատուցելը տարեցներին

Կրկնակ ինների տոնը նշվում է նաև որպես Տարեցների տոն: Քանի որ ինը համարվում էր ամենամեծ թիվը, այն իր մեջ ընդգրկում էր նաև տարեցներին հարգանքի տուրք մատուցելու նշանակությունը: Տուրք մատուցելով՝ նրանց ցանկանում են առողջություն ու երկարակեցություն: Հետևաբար տարեցներին հարգանքի տուրք մատուցելն ու երիտասարդներին հոգ տանելը դարձել է չինական ազգային ավանդույթ:

ՁՄԵՌԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

Ինչպես Նախնիների հիշատակման եւ Ճունգյուենի փառատոները, այնպես էլ Ձմեռային հագուստի փառատոնը հանդիսություն է նախնիներին զոհ մատուցելու համար: Չինաստանում այն նշվում է լուսնային օրացույցով հոկտեմբեր ամսվա առաջին օրը: Ըստ տարվա եղանակների հերթափոխության՝ Չինաստանում ձմեռը մտնում է հոկտեմբեր ամսով: Լուսնային օրացույցով հոկտեմբերի մեկը հյուսիսային Չինաստանում խորհրդանշում է ձմռան մուտքը: Չինական ավանդույթի համաձայն՝ այդ օրը մարդիկ իրենց բարեկամներին հագուստ են ուղարկում՝ պաշտպանվելու ձմռան ցրտից: Ժամանակի ընթացքում այս փառատոնը համարվեց նաև նախնիներին զոհ մատուցելու օր: Որպես հարգանքի տուրք՝ մահացածների համար թղթե հագուստներ են զոհաբերվում:

1. Ծագումը

Հնագույն ժամանակներում, երբ Ձմեռային հագուստի տոնը գալիս էր, կանայք բարեկամների համար բամբակյա հագուստներ էին պատրաստում՝ պաշտպանվելու ձմռան ցրտից: Իսկ եթե բարեկամը մահացած էր, նրանք թղթե հագուստ էին պատրաստում և այդ օրը դրանք վառում նրանց գերեզմանների առջև: Ահա ինչու այդ օրը կոչվում է Ձմեռային հագուստի օր:

Ձմեռային հագուստի տոնը կապված է տխուր սիրո պատմության հետ: Ասում են՝ Ցին դինաստիայի արքա Ցին Շի Հուանդին միավորել է Չինաստանը և այն դարձրել նոր միասնական երկիր: Ցին Շի Հուանդին ցոփ ու շվայտ կյանքով էր ապրում: Նա երկրով մեկ աշխատողներ հավաքագրեց և Մեծ պարիսպ կառուցեց՝ 10000 լի երկարությամբ, երկիրը մասնատումից եւ քոչվոր բարբարոսների հետ միաձուլումից պաշտպանելու համար: Նա կառուցեց նաև իր սեփական գերեզմանը:

Հարավում գտնվող հրաշալի Յանցզի գետի ափին մի ընտանիք էր ապրում՝ Մըն ընտանեկան անունով: Ծեր ամուսինները այնքան էին իրար սիրում, որ ոչինչ չէր կարող բաժանել նրանց: Ազատ ժամանակ նրանք նկարում կամ բանաստեղծություններ էին գրում: Նրանք տնամերձում դդում էին աճեցրել: Սրա ամուր ցողունները պատված էին բազմաթիվ տերևներով: Ցողուններն այնքան էին երկար, որ ծածկել էին ամբողջ պատը և նույնիսկ անցել հարևանի բակ: Շուտով մի մեծ դդում աճեց հարևանի՝ Ծիանի բակում: Աշնանը Մընն ասաց Ծիանին. «Արի դդումը կիսենք և յուրաքանչյուրս կես դդում վերցնենք»: Բայց երբ դդումը կիսեցին, նրա մեջ գտան մի գեղեցիկ, սպիտակ ու առողջ աղջնակ: Երկու ընտանիքներով որոշեցին, որ Մընը կդաստիարակի աղջկան, անունն էլ կդնեն Մըն Ծիանիի: Մըն Ծիանիին շատ հնազանդ աղջիկ էր և հավասարապես հոգ էր տանում երկու ընտանիքների մասին, այսպիսով երկու ընտանիքներում էլ շատ էին սիրում այս աղջկան: Մի օր, երբ աղջիկը փորձում էր ավազանից ջուր հանել, Ֆան Քըսիվի անունով մի երիտասարդ տեսավ ու օգնեց նրան: Աղջիկը շնորհակալություն հայտնեց՝ աչքի տակով նայելով նրան, հետո մի քիչ զրուցեցին, և Մըն Ծիանիին սիրահարվեց երիտասարդին: Ծնողների թույլտվությամբ Մըն Ծիանիին և Ֆան Քըսիվին ամուսնացան: Նրանց հարսանիքի օրը մի քանի զինվոր ներս խուժեցին և Ֆան Քըսիվիին բռնի ուժով տարան: Նա ևս ներգրավված էր Ցին Շի Հուանդիի՝ «Մեծ պարսպի» կառուցման համար ընտրված բանվորների ցուցակում: Ինչևիցե, Ֆան Քըսիվիի հեռանալուց հետո Մըն Ծիանիին շատ էր կարոտում ամուսնուն և գիշեր-ցերեկ տխրում էր: Հոկտեմբերի մեկին առատ ձյուն էր տեղացել: Մըն Ծիանիին աչքերը հառել էր մոմին: Տեսնելով, թե ինչպես էր ձյուն գալիս, նա հիշեց՝ երբ ամուսնուն տարան, տաք հագուստ չէր վերցրել իր հետ, որ չմրսի ցուրտ եղանակներին: Հիշում էր, և արցունքները գետի պես հոսում էին: Որպեսզի ամուսինը ցուրտ եղանակին չմրսեր, նա ամբողջ գիշեր նստեց և բամբակյա վերարկու կարեց նրա համար՝ որոշելով այն տանել ամուսնուն: Նա վերարկուն դրեց պայուսակում, մի քիչ փող վերցրեց և հրաժեշտ տալով ծնողներին՝ տրտում դուրս եկավ տնից: Նա մեծ չարչարանքով անցավ ճանապարհը: Բարի մարդկանց օգնության շնորհիվ վերջապես գտավ կառուցողական աշխատանքների վայրը, սակայն բանվորները նրան վատ լուր հայտնեցին: Ասացին, որ Ֆան Քըսիվին աշխատանքը գերակատարելուց մահացել է, իսկ նրա մարմինը թաղել են Մեծ պարսպի տակ: Լսելով այս լուրը՝ նա լացում էր և խփվում պատին: Մըն Ծիանիին ճչալով տալիս էր ամուսնու անունը և մեղադրում Ցին Շի Հուանդիին դաժանության համար: Նրա ճիչը ցնցեց երկինք ու երկիր: Հանկարծ ուժեղ քամի փչեց, որին հաջորդեցին որոտն ու կայ-

ծակը: Բարձր ձայնից երկինքն ու երկիրը պատռվեցին, Մեծ պարսպից մի մաս էլ ճեղքվեց և տակից սպիտակ ոսկորների մի կույտ երևաց: Մըն Ծիանհին մի քանի օր շարունակ լացում էր այդ ոսկորներ մոտ նստած: Հետո նա վառեց իր կարած վերարկուն, որի ծուխը քամու հետ բարձրանալով՝ երեք անգամ պտտվեց Մըն Ծիանհիի շուրջը, և ընկավ ոսկորների վրա: Այս պատմությունը տարածվեց հազարավոր մղոններ այն կողմ: Եվ ի հիշատակ Մըն Ծիանհիի՝ լուսնային օրացույցով հոկտեմբերի մեկը համարվում է Ձմեռային հագուստի օր: Այդ օրը մարդիկ գունավոր թղթերից շորեր են պատրաստում և վառում դրանք հարազատների ու բարեկամների գերեզմանների առջև՝ այդպես արտահայտելով իրենց վիշտը:

Ձմեռային հագուստի վառումը

Հոկտեմբերի մեկի նախօրդ օրը մեծերը վերցնում են իրենց ընտանիքի անդամներին ու գնում գերեզման՝ նախնիների շիրմին հող ավելացնելու: Ըստ ավանդույթի՝ հողը իբր զամբյուղ է, որի մեջ կարելի է լցնել շորերը: Հետևաբար, այդ օրը շորերի հետ միասին նաև հող են տանում: Որքան շատ են ընտանիքի անդամները, այնքան շատ հող են տանում: Հոկտեմբերի մեկին, հովվապետի առաջնորդությամբ, ընտանիքի տղամարդիկ ծիսակատարություն են անում՝ մեծ զոհեր մատուցելով գերեզմաններում՝ ի հիշատակ իրենց նախնիների: Ծիսակատարությանն անմիջապես հետևում է ձմեռային շորերի այրումը: Նախկինում այդ օրը մարդիկ գունավոր թղթերից հագուստ էին պատրաստում և մեջը բամբակով լցնում: Նրանք հավատում էին, որ մահացածները դրանք օգտագործում են որպես վերարկու կամ վերմակ: Չինական ավանդույթի համաձայն՝ այդ իրերը միայն վառելով կարող են հանձնել մահացածներին: Բոլորն ամբողջությամբ պետք է այրվի: Եթե նույնիսկ մի կտոր մնա, այն չի կարող հասնել մահացածին:

Թղթե հագուստների այրումից բացի, մարդիկ սովորաբար բամբակե վերարկուներ են ուղարկում բարեկամներին, որպեսզի վերջիններս դիմավորեն ձմեռը: Որոշ շրջաններում կանայք իրենց երեխաների համար նոր վերարկուներ են գնում Ձմեռային հագուստի օրը, որպեսզի օգնեն նրանց նախապատրաստվելու ցուրտ ձմռանը: Եթե նույնիսկ եղանակը տաք է լինում և հարմար չէ վերարկու հագնելու համար, կանայք երեխաներին խնդրում են հագնել վերարկուն՝ հաջողություն ունենալու համար: Տանտերը մաքրում է ծխնելույզը կամ բուխարին՝ տաքությունն ընտանիքում ապահովելու համար, երբ ձմեռը գա:

Կարմիր լոբի ուտելը

Հարավային Չինաստանում մարդիկ այդ օրը ուտում են մի թաս լիքը լոբի: Այս ավանդույթը առաջացել է հետևյալ պատմությունից: Շատ-շատ տարիներ առաջ ապրում էր մի խելացի տղա, ով տավարած էր: Նրա ծնողները այնքան էին աղքատ, որ չէին կարողանում հաջողությամբ մեծացնել իրենց որդուն: Ուստի նրան ուղարկեցին մի մեծահարուստի մոտ, որպեսզի պահի նրա կովերը: Մի օր տղայի անզգուշության պատճառով կովն ընկավ ժայռից ու սատկեց: Երբ տանտերը իմացավ այս մասին, շատ ջղայնացավ և տղային դաժանորեն ծեծեց ու կշտամբեց: Տղայի աղաչանքներին նա ուշադրություն չդարձրեց և շարունակեց ծեծել: Տղան զգալով, որ տանտերը մտադիր է մինչև շունչը փչելը ծեծել իրեն, դանակը հանեց և սպանեց տանտիրոջը: Տղայի՝ գետնին թափած արյան հետևանքով բրինձը կարմիր գույն ստացավ: Այս դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի մեկին: Որպեսզի հիշեն տղային, մարդիկ այդ օրը կարմիր լոբի են ուտում:

Թղթե փողերի ծիսադրամ վառելը

Չմեռային հագուստի տոն օրը, առավոտյան ամբողջ ընտանիքով գնում են գերեզմանատուն, որպեսզի շիրիմներին թղթե փողեր վառեն և աղոթեն նախնիների օրհնության ու պահպանության համար: Ժողովրդական բանահյուսության համաձայն՝ Չմեռային հագուստի օրը զոհեր մատուցելն ու ծիսադրամներ վառելը կապված է Ցայ Լյուընի՝ թուղթ հայնաբերելու պատմության հետ:

Ըստ պատմաբանների հետազոտությունների՝ թուղթը հայտնաբերվել է Ցայ Լյուընի կողմից: Հիմնվելով նախորդների փորձի վրա՝ Ցայ Լյուընը թուղթ ստանալու համար օգտագործել է ծառի կեղև, ձկան ցանց, մանրաթղթեր: Թուղթը հատնաբերելուց հետո շատերն էին գալիս ու թուղթ

գնում: Առևտուրը բարգավաճում էր: Որպեսզի ընդլայնի առևտուրը, նա թղթի գործարան բացեց և ամբողջ ընտանիքով զբաղվում էին այդ գործով: Նրա եղբոր՝ Ցայ Մոյի պատրաստած թուղթը ցածրորակ էր և չէր վաճառվում: Ցայ Մոյի կինը՝ Հուեյնյանը, մտածում էր՝ ինչպես անել ամուսնուն այդ դժվար վիճակից հանելու համար: Մի գիշեր Հուեյնյանը ձևացավ, թե հիվանդացել ու մեռել է: Ցայ Մոն շատ վշտացած էր: Կնոջ դագաղի առջև նա թուղթ վառեց և ասաց. «Ես մտադիր էի սովորել թուղթ պատրաստելը իմ փոքր եղբոր հետ: Բայց ես այնքան էլ նվիրված չէի այդ գործին: Թղթի որակը այնքան վատ էր, որ դու հիասթափվեցիր ու հեռացար: Այժմ ես վառում եմ այս թղթերը, որպեսզի կարողանամ վերացնել քո ատելությունը»: Ցայ Մոն թղթերը կույտ կույտի հետևից բերում ու վառում էր: Այդ պահին Հուեյնյանը դագաղի միջից գոչեց. «Բացեք դագաղը, ես հետ եմ եկել»: Սա սարսափելի վախեցրեց մարդկանց: Մարդիկ դանդաղ բացեցին դագաղը, և Հուեյնյանը դուրս ելավ միջից ու ասաց նրանց. «Այս աշխարհում գոյություն ունեցող թղթերը փող են մահացածների համար: Եթե թղթերը չվառվեին ու փող չդառնային, ոչ մեկն ինձ չէր կարող հետ բերել: Ես գնացել էի դժոխք և տեսել դժոխքի թագավորին: Նա անպայման ինձ տանջանքների կենթարկեր, բայց իմ սիրելի ամուսինը թղթերը դժոխքի համար փող դարձրեց և կաշառեց հոգիներին, նրանք էլ բացեցին հետևի դուռը և ազատեցին ինձ»: Այս ամենը լսելով՝ Ցայ Մոն շատ զարմացավ և ասաց իր կնոջը. «Իրո՞ք վառված թղթերը փող էին դարձել մահացածների համար»: Հուեյնյանը համաձայնության նշան տվեց: Ցայ Մոն շտապեց բերելու ևս մի քանի կույտ թուղթ, որպեսզի վառեր իր ծնողներ համար: Նրա շուրջ հավաքված մարդիկ գնեցին այդ թղթից: Շուտով այս պատմությունը տարածվեց ամենուր: Մարդիկ նույնիսկ շատ հեռու տեղերից գալիս էին ու գնում այս թղթերից, որպեսզի վառեին մահացած բարեկամների համար: Հուեյնյանը դժոխքից վերադարձել էր չինական լուսնային օրացույցով հոկտեմբերի մեկին: Մարդիկ սկսեցին ամեն տարի զոհ մատուցել իրենց նախնիներին՝ վառելով թուղթը, որպեսզի երկրպագեն մահացած բարեկամներին:

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐԵՎԱԴԱՐՁԻ ՓԱՌԱՏՈՆ

Ձմեռային արևադարձը, որը համընկնում է դեկտեմբերի քսանմեկի և քսաներեքի հետ, հանդիսանում է կարևոր օր՝ լինելով արեգակնային տարվա 24 շրջափուլերից մեկը՝ ըստ չինական ավանդական լուսնային օրացույցի: Այն ժողովրդական ավանդական փառատոն է Ձմեռային փառատոն անվանումով, որը զգուշացնում է ձմռան գալստյան մասին: Ձմռան արևադարձի փառատոնը ևս կարևոր հանդիսություն է, ինչպես Գարնանային փառատոնը: Հին ժամանակներում մարդիկ Ձմեռային արևադարձի տոնը անց էին կացնում ճիշտ այնպես, ինչպես Գարնանային փառատոնը:

1. Ծագումը

Ձմեռային արևադարձ տերմինը ի սկզբանե արեգակնային համակարգին վերաբերող տերմին էր: Ըստ հնագույն գրականության արձանագրությունների՝ այդ օրը արևի շողալու ժամանակահատվածն ամենակարճն է, իսկ նրա ստվերի առկայությունն երկրի վրա ներառում է ամենաերկար ժամանակամիջոցը: Այդ պատճառով այն կոչվում է Ձմեռային արևադարձ: Մի այլ ասույթի համաձայն՝ Ձմեռային արևադարձը կապված է յին և յան չինական փիլիսոփայական հասկացությունների հետ (յին՝ նշանակում է ցուրտ, խեղճ, յան՝ նշանակում է տաք, ուժեղ): Չինական մշակույթում յին և յան հասկացությունները խորհրդանշում են կյանքի ներդաշնակությունը: Ձմեռային արևադարձը տարվա ամենացուրտ և ամենավճռական օրն է: Հետո այդ սառնությունը աստիճանաբար անցնում է «յան» ջերմության՝ ազդարարելով գարնան մուտքը: Կան լեգենդներ Ձմեռային արևադարձի փառատոնի հետ կապված: Ասում են՝ ինչ-որ մեկին անհրաժեշտ էր ուտել խուենքուեն՝ ձմեռային արևադարձին և արիշ-

տա՝ ամառային արևադարձին: Լեգենդի համաձայն՝ Հան դինաստիայում բարբարոս քոչվոր ցեղերը հաճախ էին հարձակվում Կենտրոնական հարթավայրում ապրող մարդկանց վրա: Կենտրոնական հարթավայրը գտնվում է Դեղին գետի միջին և ստորին հատվածներում: Այդ բարբարոս ցեղում կային երկու նշանավոր առաջնորդ՝ Խուենը և Թուենը: Մարդիկ միշտ ապրում էին վախի մեջ և այդ երկու մարդասպանին այնքան էին ատում, որ մսով լցոնված կերակրատեսակը անվանեցին խուենթուեն ՝ միացնելով այդ երկու առաջնորդների անունները: Ուտելով այս կերակրատեսակը՝ նրանք արտահայտում էին իրենց նողկանքը պատերազմի հանդեպ և աղոթում էին խաղաղության համար: Այդ ժամանակից ի վեր նշյալ սովորույթը փոխանցվել է սերնդեսերունդ: Ձմեռային արևադարձի տոնը մեծ փառատոն է զոհաբերության համար: Ջոու դինաստիայի օրացույցի համաձայն՝ Ձմեռային արևադարձի օրը նոր տարվա առաջին օրն է, և նրա նախորդը՝ հին տարվա վերջին օրը: Դեռ Ջոու դինաստիայում մարդիկ արդեն նշում էին այս տոնը: Այդ օրը կայսրերը հրահանգում էին նախարարներին՝ կազմակերպել դիտարժան տոնակատարություն, որպեսզի արժանապատվորեն դիմավորեին Նոր տարին: Այդ տոնակատարության ժամանակ նրանք պետք է տոհմական տաճարում զոհ մատուցեին աստվածներին և նախնիներին: Բացի դրանից, կայսրերը երգում ու պարում էին՝ երկրպագելով աստվածներին և աղոթում բարենպաստ կլիմայի, բարեկեցիկ նահանգի, նույնիսկ արվարձանների համար: Ջոու դինաստիայի օրացույցից օգտվում էին մինչև Հան դինաստիա ժամանակաշրջանը, նոր օրացույցի ընդունումից հետո Ձմեռային արևադարձը դեռ համարվում էր ամենակարևոր տոնական օրը: Հան դինաստիայի կայսրերը հարյուրավոր նախարարների հետ միասին մեծ շուքով նշում էին այդ օրը: Ժողովրդական բանահյուսության մեջ Ձմեռային արևադարձը համարվում էր Նոր տարվա սկիզբ: Նույնիսկ աղքատ մարդիկ էին այդ օրը նոր շորեր հագնում, հրավիրում բարեկամներին ու ընկերներին և միասին տանը կատարում նախնիների երկրպագման և երեցների հարգման արարողություն:

2. Ավանդույթները

Ձմեռային արևադարձի տոնին անցկացվող շատ արարողություններ կապված են գյուղատնտեսական ապրանքների և սննդակարգի հետ: Հյուսիսում մարդիկ ոչխար են մորթում, ուտում են պուդինգ ու խուենթուեն, իսկ հարավում սովորաբար ուտում են բրինձ ու երկար արիշտա: Շատ վայրերում, որպես ավանդույթ, պատրաստում են շան մսով ուտեստ:

Շան միս ուտելը

Ասում են՝ այս ավանդույթը ներկա ժամանակներ է հասել Հան դինաստիայից: Լյու Պանը՝ Հան դինաստիայի նշանավոր մի կայսր, միշտ պատերազմում էր հեռավոր երկրներում: Այդ պատճառով նա ախորժակ չէր ունենում: Ֆան Քուայ անունով մի նախարար մի օր շան մսով ապուր պատրաստեց և հյուրասիրեց կայսրին: Կայսրը մեծ ախորժակով կերավ այս համեղ կերակուրը և շատ գովեց: Դրանից հետո այս ավանդույթը շրջանառվեց ժողովրդի մեջ: Նրանք շոգեխաշում էին շան միսը և խառնում բժշկական նշանակություն ունեցող տարբեր տեսակի բույսերի հետ ու սնվում դրանով՝ հուսալով հաջողություն ունենալ գալիք տարում:

Կարմիր լոբով ողորկ, կպչուն բրինձ ուտելը

Յանցզի գետի հարավային մասում ամբողջ ընտանիքով հավաքվում են և վայելում այս ուտեստը Ձմեռային արևադարձի տոնին: Կա մի զվարճալի պատմություն այս ավանդույթի մասին: Կար մի չար ուրվական, որ միշտ վնասում էր Յանցզի գետի հարավում ապրող մարդկանց: Երբ մութն ընկնում էր, բոլորը վախից մտնում են տուն և փակում դռները: Սակայն ուրվականն ուներ անխուսափելի մի թուլություն՝ նա վախենում էր կարմիր լոբուց: Այդ պատճառով մարդիկ ուտում էին ողորկ կպչուն բրինձ կարմիր լոբով, որպեսզի քշեին ուրվականին, կանխեին աղետն ու խուսափեին հիվանդություններից:

Պուդինգ ուտելը

Հենան քաղաքում մարդիկ ուտում էին «սառեցված ականջներ», որոնք մեզ հայտնի են պուդինգ անվանումով: Կա մի պատմություն այս ավանդույթի մասին: Ասում են՝ Ճան Ճոնգծին անունով մի բժիշկ էր ապրում, ով պաշտոնապես աշխատում էր տնից հեռու: Ձմեռային արևադարձին նա պաշտոնաթող դարձած՝ տուն վերադարձավ՝ հայրենի Նանյան: Տեղացի-

ների հետ կատակով խոսելով «սառեցված ականջների» մասին՝ Ճան Ճոնգծինը տխրեց, երբ վերջիններս հակաճառեցին նրան: Նա վերցրեց իր աշակերտներին և քաղաքի ծայրին բժշկական վրան խփեց: Նրանք շոգեխաշում էին ոչխարի միսը, ավելացնում կարմիր պղպեղ ու որոշ դեղորայք, որոնք կարող էին բժշկել մրսածությունից: Այս ամենը մի լավ ծեծում էին և լցնում ալյուրով պատրաստած ու ականջի ձև տված խմորի մեջ: Այն լցնում էին թասի մեջ և եփում՝ դեղ ստանալու համար: Այն անվճար բաժանվում էր հասարակ մարդկանց: Այս դեղն ընդունելուց հետո մարդկանց սառած ականջները բուժվում էին: Այդ ժամանակից ի վեր այս ավանդույթը փոխանցվեց սերնդեսերունդ, որովհետև նրանք հավատում էին, որ այս պուդինգն ուտելով՝ նրանք կարող էին բժշկվել ցրտահարությունից ու խուսափել հիվանդություններից:

Բրնձով թխվածք ուտելը

Բրնձով թխվածքը չինական յուրահատուկ համ ունեցող խորտիկ է և փոքրերի, և մեծերի համար: Հարավում, Ձմեռային արևադարձի օրը մարդիկ սովորաբար ուտում են իրենց սիրած՝ տարբեր համերով բրնձով թխվածքը: Առավոտյան նախաճաշին մատուցվում է բրնձով թխվածք՝ քնջութով և սպիտակ շաքարով: Մարդիկ ճաշին ուտում են տապակած բրնձով թխվածք՝ լցոնած բանջարեղենով, բամբուկի մատղաշ ճյուղերով, որոնք նույնպես օգտագործում են որպես բանջարեղեն, մանր կտրտած մսով և այլն: Ընթրիքին գերադասում են ուտել բրնձի թխվածքով ապուր բանջարեղենով, բամբուկի մատղաշ ճյուղերով և կտրտած մսով: Ըստ ժողովրդական բանահյուսության՝ այս թխվածքն ուտելը օգնում է տարեցտարի ավելի բարձրահասակ դառնալ և ունենալ հաջողություն:

Խուենթուեն ուտելը (ողորկ բրնձով գնդակներ)

Խուենթուենը, որը տարածված ուտեստ է Ձմեռային արևադարձին, ունի ազգային յուրահատուկ համ: Տարբեր վայրերում խուենթուեն պատ-

ռաստում են տարբեր ձևերով՝ կատվի, շան, ճագարի նմանությամբ, որպեսզի երեխաներին դուր գա: Բայց, ընդհանրապես, այն կլոր է լինում: Խուենթուեն ուտելն ունի իր յուրահատկությունը: Օրինակ, զույգ խուենթուեն ուտելը հաջողության ակնկալիք է: Եթե երկու խուենթուեն են թողնում ափսեում, նշանակում է ամեն ինչ այնպես կլինի, ինչպես ամուսնացած մարդիկ կցանկանան: Եթե ընդամենը մեկ խուենթուեն են թողնում ափսեում, նշանակում է ամեն ինչ այնպես կլինի, ինչպես չամուսնացած մարդիկ կցանկանան:

Կոշիկ նվիրելը

Կոշիկ նվիրելը ժողովրդական ավանդույթ է Ձմեռային արևադարձին: Ասում են՝ Հան դինաստիայում կար այնպիսի սովորություն, երբ սիրած զույգը իրար կոշիկ էր նվիրում: Աստիճանաբար այդ սովորությունը դարձել է ավանդույթ, և հորեղբայրներն ու հորաքույրերը կամ մորեղբայրներն ու մորաքույրերը կոշիկ կամ գլխարկ են նվիրում իրենց զարմիկ-զարմուհիներին՝ արտահայտելու իրենց լավագույն ցանկությունները: Նախկինում, տղամարդկանց նվիրում էին ձեռագործ կոշիկներ շան կամ, մեծամասամբ, վագրի տեսքով կամ այլ գազաններ էին ասեղնագործում դրանց վրա: Իսկ կանանց նվիրում էին փյունիկի տեսքով կոշիկներ՝ ասեղնագործած ծաղիկներով և թռչուններով:

Ուսուցիչներին պատվելը

Հին ժամանակներում ուսուցիչներին Ձմեռային արևադարձի օրը հրավիրում էին ճաշի, որպես ավանդույթ: Աշակերտները խոնարհվում էին ուսուցիչների առջև, հետո ուսուցիչները նրանց առաջնորդում են դեպի Կոնֆուցիոսի հուշատախտակ՝ երկրպագելու նրան: Շանսայի բանահյուսության մեջ կա այսպիսի մի ասացվածք. «Ուսումը ստացեք Ձմեռային արևադարձի օրից»: Շատ վայրերում այժմ ևս տարածված է ուսուցիչներին ճաշի հրավիրելու ավանդույթը: Հատկապես հյուսիսում ուսուցիչներին սովորաբար հյուրասիրում են շոգեխաշած ոչխարի մսով:

Ձմեռային գինի խմելը

Սուչժոու քաղաքում գինին պարտադիր խմիչք է Ձմեռային արևադարձի օրը: Ձմեռային գինու մեջ խառնում են բրինձ ու օսմանթուսի ծաղիկներ, որպեսզի ավելի գրավիչ համ ունենա: Երեկոյան գինու հետ մարդիկ ուտում են համեմած տավարի, ոչխարի միս կամ թասում շոգեխաշած այլ ուտելիք: Սուչժոուի բնակիչները հավատում են, որ գինին ոչ միայն կանխում է մրսածությունը, այլև իրականացնում է իրենց բաղձանքները:

ԼԱԲԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ

Լաբայի տոնը չինական ավանդական հանդիսություն է, որը տեղի է ունենում ամեն տարի՝ տասներկուերորդ ամսվա ութերորդ օրը: Ժողովուրդը տասներկուերորդ ամիսը կոչում է «Լա»՝ ամիս, իսկ «բա»՝ կոչվում է ութ, այդ պատճառով տվյալ փառատոնը կոչվում է Լաբա: Լաբայի փառատոնը նախնիներին ու աստվածներին երկրպագելու տոն է: Երկրպագություն անելով՝ մարդիկ հույս են պահում՝ ունենալ առատ բերք ու բարեհաջող տարի: Շատ վայրերում, հնագույն Նյուո մշակույթից ծագած ծիսակատարություններ են կատարվում՝ հուսալով այդ օրն ազատվել հիվանդություններից: Ինչպես նաև այդ օրը Բուդդայի պայծառացման օրն է, հետևաբար և Լաբայի փառատոնը մեծ տոնակատարություն է բոլոր բուդդայականների համար:

1. Ծագումը

Տասներկուերորդ լուսնային ամիսը տարվա վերջին զոհաբերության ժամանակահատվածն է: Չինական հին հասարակության մեջ տասներկուերորդ լուսնային ամսվա երկրպագությունը կապում էին գյուղատնտեսության հետ: Ժողովուրդը հավատում էր, որ առատ բերքը աստծո օրհնությունն է, ուստի և նրանք ծիսակատարություններ էին կատարում և զոհեր մատուցում՝ աստվածներին՝ իրենց երախտագիտությունն արտահայտելու համար: Ոչ միայն հասարակ ընտանիքներում, այլև արքունական տներում ևս կատարվում էին այդ արարողությունները, այսինքն՝ երկրպագում էին աստծուն և աղոթում բարենպաստ կլիմայի և պետության բարգավաճման համար:

Լաբա փառատոնի ժամանակ անցկացվող միջոցառումները հիմնականում նվիրվում են երկնային աստվածների, սրբերի, նախնիների ու հոգիների երկրպագությանը, որպեսզի նրանք կանխարգելեն աղետները: Հետագայում ավանդույթ է դարձել կարմիր լոբու, ընկույզով ու չորացրած մրգերով լաբա շիլայի օգտագործումը: Միաժամանակ Լաբա փառատոնը նպաստում է բուդդայական հավատքի տարածմանը: Ասում են՝ տասներկուերորդ լուսնային ամսվա ութերորդ օրը Շաքյըմունիին՝ բուդդայականության հիմնադիրը, լուսավորվում է, այդ պատճառով այդ օրը կոչվում է նաև Բուդդայի պայծառացման տոն: Մինչ լուսավորումը նա վեց տարի ինքնուրացման ու ճնշման մեջ էր և շատ քիչ էր ուտում: Հետո մի հովվուհի նրան բրինձ տվեց, և նա պայծառացավ Բոդի սուրբ ծառի տակ: Այդ օր-

վանից սկսած՝ բոլոր տաճարներում Լաբայի տոնին շիլա են պատրաստում և բաժանում հավատացյալներին: Ըստ ժողովրդական բանահյուսության՝ հետագայում մարդիկ հմտացան շիլայի պատրաստման վարպետության մեջ և լաբա շիլայի համար օգտագործում էին տարատեսակ հացահատիկ, ինչը աստիճանաբար ավանդույթ դարձավ: Ժողովրդական բանահյուսության մեջ, ըստ կարմիր լոբու մասին լեգենդի՝ Կոնկոն ծովային հրեշի որդու մահանալուց հետո այն հոգի էր դարձել, ով տարածում էր ժանտախտը: Այդ հոգին վախենում էր միայն կարմիր լոբուց, ուստի կարմիր լոբի ուտելը դարձավ հոգի հեռացնելու ավանդույթ: Կարմիր լոբով շիլա պատրաստելը կապված է այս պամության հետ: Այժմ լաբա շիլան պատրաստում են նաև կոշտ բրնձով, ողորկ կպչուն բրնձով, կորեկով, տարատեսակ լոբիներով, նուշով, սեխի սերմերով, գետնանուշով և սոճու սերմերով, որը մարդիկ վայելում են Լաբայի փառատոնի ժամանակ: Հետագայում սկսեցին պատրաստել նաև նմանատիպ խորտիկ՝ ութ գանձ բրնձով քաղցրաբլիթ անվանումով:

2. Ավանդույթները

Լաբայի փառատոնի ժամանակ մարդիկ ոչ միայն շիլա են ուտում և երկրպագման ծիսակատարություններ կատարում, այլև գնում են որսորդության, որպեսզի լրացնեն հին ժամանակների պակասը: Որոշ վայրերում նույնիսկ այդ որսը պետք է որպես զոհ մատուցեն նախնիներին՝ երջանկություն, բարգավաճում, երկարակեցություն ու ընտանեական պաշտպանվածություն ունենալու համար:

Լաբա շիլա

Այս ուտեստը տոնական նշանակություն է կրում Լաբայի փառատոնի ժամանակ: Կա մի այլ պատմություն այս շիլայի հետ կապված: Հեռավոր մի գյուղում ապրում էր մի ընտանիք՝ հայրը, մայրն ու միակ զավակը: Այս ընտանիքի բարեգութ զույգը միշտ պատրաստ էր իր սեփական ուտելիքով օգնել մյուսներին, երբ վերջիններս դժվարությունների էին

հանդիպում կամ նրանց ամբարը գրեթե դատարկ էր լինում, իսկ բերքը դեռ չէր հասել: Տարեցտարի նրանց որդին մեծանում էր և դառնում առողջ ու ուժեղ տղամարդ: Սակայն նա շատ ծույլ էր: Փայփայված մեծանալով՝ տղան ընդհանրապես չէր սիրում հողագործությամբ զբաղվել: Հետագայում նա դառնում էր մի իսկական անբան, ով ուտելուց ու քնելուց բացի ոչինչ չէր կարողանում անել: Ինչևիցե, շուտով ծեր զույգը օգնում էր տղային կին գտնել: Դժբախտաբար, աղջիկը ևս տղայի նման ծույլ ու անբան էր և ոչինչ չէր անում տանը, պարզապես սիրում էր ամբողջ օրը քնել:

Մի քանի տարի անց ծեր ամուսինները լուրջ հիվանդացան և մահացան: Մինչ մահանալը նրանք կանչեցին իրենց որդուն ու հարսին և ասացին. «Եթե ուզում եք լավ ապրել, մի մոռացեք ջանասեր աշխատել: Տղամարդը պետք է զբաղվի գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ կինը՝ մանածագործությամբ ու հյուսելով»: Նրանք հազիվ ավարտեցին իրենց խոսքն ու փչեցին վերջին շունչը: Տղան ու հարսը դիմեցին հարևաններին՝ ծնողներին թաղելու արարողությունը կատարելու համար: Երեկոյան, երբ գնացին քնելու, ամուսինը հարցրեց կնոջը. «Տեսար, որ ամբարը լիքն է բրնձով, իսկ պահարանը՝ բամբակյա հագուստով: Մենք ունենք բավականին ուտելիք ու հագուստ, ինչու՞ պետք է ծանր աշխատանք կատարենք»: «Իրոք,- համաձայնվեց կինը,- պահարանում կան և գարնանային և ձմեռային հագուստ, իմ ինչին են պետք մանածագործությունն ու հյուսելը»: Շուտով երիտասարդ զույգը մոռացավ նաև ծնողների խորհուրդը: Մի տարի անց հողն ամբողջությամբ ծածկվել էր տատասկով ու մոլախոտով: Ուտելիքն էլ ավելի ու ավելի էր պակասում: Սակայն ամուսինները դեռ չէին անհանգստանում այնքան ժամանակ, մինչև մնաց ընդամենը մի բուռ բրինձ: Աշուն էր, գյուղում բոլորը զբաղված էին բերքահավաքով, իսկ նրանք չեն էլ նախապատրաստվում մի բան անել: Շուտով ամբողջ ուտելիքն ու հագուստը սպառվեց, և երիտասարդ ընտանիքը նեղության մեջ ընկավ: Ծույլ զույգը տառապում էր սովից ու ցրտից: Հանուն մահացած ծնողների հարևանները օգնում էին նրանց՝ հաց ու ապուր էին տալիս: Այնուամենայ-

նիվ, երիտասարդ զույգը չէր պատրաստվում աշխատել: Նրանք մտածում էին, որ կարող են ապրել նաև մուրացկանությամբ: Տասներկուերորդ ամիսն անտանելի ցրտաշունչ էր: Ութերորդ օրը ջերմությունն այնքան էր իջել, որ ջրերը սառել էին: Ամուսինները ցանկացան կրակ վառել ու տաքանալ, բայց ոչինչ չունեին: Նրանք իրար ամուր գրկեցին և կծկվեցին մահճակալում: Ամբողջ սենյակը աչքերով տնտղեցին ու հանկարծ պատի ճեղքում մի քանի լոբու հատիկ գտան: Նրանք մատներով մեկ-մեկ հանեցին լոբու հատիկները: Հետո հատակի ճեղքերում բրնձի հատիկներ գտան և դրանք էլ հանեցին: Նրանց համար այդ մի քանի հատիկն էլ մեծ նշանակություն ուներ քաղցից չմեռնելու համար: Նրանք ամբողջ հացահատիկը լցրին թասի մեջ, հետո մահճակալը կոտրեցին ու լցրին վառարանը, որպեսզի շիլա եփեն: Շիլայի մեջ կային կորեկ, եգիպտացորեն, սոյայի հատիկներ, տարբեր բույսերի տերևներ, այն ամենը, ինչը կարող էր քաղցից փրկել: Նրանք աճապարելով եփեցին դրանք, երբ հանկարծ անսպասելիորեն փոթորիկ բարձրացավ և տունը փլվեց: Երիտասարդ զույգը մնաց տան փլատակների տակ: Երբ հարևաններն եկան, նրանք արդեն մահացած էին, իսկ շիլան դեռ թասում էր: Այդ օրվանից, երբ տասներկուերորդ լուսնային ամսվա ութերորդ օրը գալիս էր, ծնողները շիլա էին պատրաստում իրենց երեխաների համար և պատմում այս պատմությունը, որպեսզի նրանց սովորեցնեն լինել ջանասեր ու աշխատասեր: Եվ մինչ այժմ էլ փոխանցվել է այդ օրը շիլա ուտելու ավանդույթը:

Կան լաբա շիլայի պատրաստման տարբեր եղանակներ, հիմնականում տարբեր տեսակի բաղադրիչներ են խառնում բրնձի հետ և շոգեխաշում: Այդ բաղադրիչներից են՝ կարմիր խուրման, լոտոսի սերմերը, ընկույզը, գետնանուշը, խաղողը, վարդագույն ու կարմիր լոբին և այլն: Մարդիկ սովորաբար շիլան սկսում են պատրաստել տասներկուերորդ լուսնային ամսվա յոթերորդ օրը՝ այն շոգեխաշելով մարմանդ կրակի վրա՝ կեսգիշերից մինչև հաջորդ առավոտ: Շիլան, սկզբում որպես զոհաբերություն ու երկրպագություն, մատուցում են մահացած նախնիներին, հետո մինչև կեսօր դրանով հյուրասիրում են բարեկամներին ու ընկերներին: Վերջում ամբողջ ընտանիքով նստում ու վայելում են մնացած շիլան: Ուտել շիլայի մնացած մասը՝ լավ նախանշան է, դա նշանակում է ստանալ ավելին, քան ցանկանում ես ամեն տարի: Ավելին, աղքատներին շիլա հյուրասիրելով՝ մարդիկ ցույց են տալիս իրենց ողորմածությունը:

Լաբա տոֆու[4]

Լաբա տոֆուն չինական ժողովրդական բանահյուսության մեջ առանձնահատուկ սննդամթերք է: Երբ տասներկուերորդ լուսնային ամսվա ութերորդ օրը գալիս է, երկրի գրեթե բոլոր ընտանիքներում տոֆու են պատրաստում և այն դնում արևի տակ: Բնական ճանապարհով չորացած տոֆուն կոչվում է Լաբա տոֆու:

Եփած լոբի

Որոշ վայրերում մարդիկ շիլա են պատրաստում, բայց Լաբա շիլա ասելու փոխարեն ասում են հինգ լոբիներով շիլա: Ոմանք այն եփում են տասներկուերորդ լուսնային ամսվա ութերորդ օրը, ոմանք՝ հինգերորդ օրը: Մինչ շիլան կեփի, դրան ավելացնում են լոբի և այն տալիս հարևաններին: Որոշ վայրերում մարդիկ մինչև տասներեքերորդ օրը եփած լոբի են ուտում, որը նշանակում է տարեցտարի ավելի շատ բերք ունենալ:

Լաբա արիշտա

Չինաստանի հյուսիսային շրջաններում ապրող մարդիկ Լաբայի փառատոնին շիլայի փոխարեն արիշտա են պատրաստում: Մարդիկ սովորաբար դրա մեջ լցնում են գրեթե ամեն տեսակի բանջարեղեն ու միրգ և եփում են այն Լաբայի տոնից մեկ օր շուտ: Տասներկուերորդ լուսնային ամսվա ութերորդ օրը առավոտյան ամբողջ ընտանիքով ուտում են համեղ Լաբա արիշտան:

4. Տոֆու - լոբով կարկանդակ

ՉԻՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՆԱԽԱՇԵՄ

Չինական Նոր տարվա նախաշեմը՝ լուսնային տարվա վերջին օրը, ամենակարևոր տոնն է Չինաստանում, այնպես, ինչպես Սուրբ Ծննդի նախաշեմը արևմտյան երկրներում: Այն նաև կոչվում է լուսնային տարվա երեսուներորդ օր, որն այնքան բազմանշանակ է, որքան լուսնային տարվա առաջին օրը: Այն ընտանիքների վերամիավորման խորհրդանիշն ունի: Որոշ վայրերում մարդիկ սովորաբար ամբողջ գիշեր զվարճանում են և միասին դիմավորում գալիք Նոր տարին:

1. Ծագումը

Նոր տարվա նախաշեմի տոնը սկիզբ է առել հին չինական մշակույթից, որ կոչվում է Նյուո, և համաճարակ հեռացնելու ծիսակատարությունից: Ժոու դինաստիայում, երբ տարեվերջը գալիս էր, մարդիկ կատարում էին Նյուո տոնական ծեսեր: Նրանք հանգնվում էին հոգիների նման, դնում հոգիների, սատանաների ու հրեշների դիմակներ, որպեսզի հեռացնեին ժանտախտը: Փոխված Նոր տարվա նախաշեմ անվանումը լայնորեն տարածվեց Հան դինաստիայում: Իսկ ամբողջ գիշեր արթուն մնալու ավանդույթը գալիս է Թան դինաստիայից: Նոր տարվա նախաշեմին ամբողջ ընտանիքով հավաքվում էին սեղանի շուրջ՝ ուտելով, խմելով ու զրուցելով դիմավորում Նոր տարին: Մին և Ցին դինաստիաներում արդեն սկսեցին կազմակերպել տարբեր տոնական միջոցառումներ Նոր տարվա նախաշեմին: Այդ օրը ոմանք սիրում էին ուտել քաղցրաբլիթ, մյուսները՝ բրնձով թխվածք և խարույկ վառել՝ նշելու այս տոնը: Գրիգորյան օրացույցի գործածումից հետո տարվա մեջ փոփոխություններ տեղի ունեցան: Տվյալ ժամանակաշրջանի կառավարությունը օրենքով նախատեսեց առաջին լուսնային ամսվա առաջին օրը նշել Գարնանային փառատոնը, իսկ նրա նախօրյակին նշել Նոր տարվա նախաշեմի տոնը, և հետո լուսնային ամսվա առաջին օրից մինչև տասնհինգերորդ օրը՝ համատեղ գարնանային փառատոներ կամ ըստ ժողովրդական բանահյուսության՝ Նոր տարվա տոներ:

Ժողովրդական բանահյուսության մեջ կա մի հետաքրքիր պատմություն Նոր տարվա տոնի մասին: Ըստ լեգենդի՝ շատ տարիներ առաջ գլխին երկար շոշափուկ ունեցող մի անգութ ու անողորմ հրեշ էր ապրում ծովի ընդերքում, որը կոչվում էր Նիան: Ամեն տարի՝ Նոր տարվա նախաշեմին նա ափ էր դուրս գալիս՝ դաշտերից հացահատիկ, գյուղացիներից՝

անասուն գողանալու: Երբեմն էլ հարձակվում էր մարդկանց վրա և սպանում նրանց: Այդ պատճառով գյուղերում ապրող մարդիկ, Նոր տարվա նախաշեմին, մեծ ու փոքր գնում էին անտառ՝ պաշտպանվելու Նիան հրեշից: Հերթական Նոր տարվա նախաշեմն էր: Առավոտյան, մարդիկ վերցնելով անասուններն ու ոչխարները, շտապում էին անտառ: Բոլորն այնքան վախեցած էին, որ երեխաները չէին դադարում լացել, իսկ մեծերը, ովքեր դժկամությամբ էին լքում իրենց հայրենի տները, աղմկում ու աղաղակում էին: Այդ պահին մի ծեր մուրացկան էր հայտնվում: Բոլորն այնքան էին շտապում, որ ոչ ոք նրան ուշադրություն չէր դարձնում: Մի ծեր կին, ով նույնպես փախուստի ճանապարհին էր, մի պահ կանգ առավ, նրան ուտելիք տվեց և խորհուրդ տվեց իրենց հետ փախչել անտառ՝ Նիան վիշապից փրկվելու համար: Բայց ծեր մուրացկանը այնքան էլ վախեցած չէր երևում: Նա ժպտաց ու ասաց. «Դուք շատ բարի կին եք: Թույլ տվեք ես այս երեկո ապրեմ Ձեր տանը, ես երդվում եմ, որ կարող եմ օգնել Ձեզ՝ քշելու Նիան վիշապին»: Երդումը լսելով, կինն անակնկալի եկավ ու ասաց. «Վիշապն այնքան սարսափելի է, որ ավելի լավ է փախչեք՝ ձեզ գովելու փոխարեն»: Ծեր կինը մյուսների հետ անտառ գնաց՝ թողնելով նրան գյուղում:

Երբ մութն ընկավ, գյուղում ամենուր խավար ու լռություն էր տիրում: Այդ ժամանակ Նիան հրեշը հայտնվեց և սկսեց ուտելիք փնտրել դատարկ տներում: Նա կերավ ամբողջ ուտելիքը՝ եգիպտացորեն, հացահատիկ, միրգ և այլն: Կշտանալով՝ դուրս եկավ և լկտիորեն շրջում էր գյուղում, երբ մի վառված լույս տեսավ: Նրան շատ հետաքրքրեց, թե ով է այդ համարձակը, որ մնացել է գյուղում փախչելու փոխարեն: Լույսը վառած տունը ծեր կնոջ տունն էր: Երբ վիշապը տեսավ, որ դռան վրա կպցրած է մի կարմիր թուղթ, տունն էլ լուսավորված է պայծառ լույսով, նա վախից բարձրաձայն բղավեց: Նիանը այնքան էր վախեցած, որ երդվեց տղային բռնել, և սկսեց նրան փնտրել բակում: Հանկարծ ճայթռուքների բարձր ձայները այնպես ցնցեցին նրան, որ նա չհամարձակվեց առաջ գնալ: Պարզվեց, որ վիշապը վախենում էր կարմիր գույնից ու կրակի լույսից: Ծեր կնոջ դուռը բացվեց, և կարմիր հագած մի ծեր տղամարդ բակ դուրս եկավ՝ բարձր ծիծաղելով: Նիանը, որքան հնարավոր էր, արագ փախավ:

Հաջորդ օրը՝ Նոր տարվա առաջին լուսնային ամսվա առաջին օրը, մարդիկ, ովքեր, փախել էին անտառ, վերադարձան տները: Նրանք շատ զարմացան, երբ տեսան, որ գյուղը ինչպես թողել գնացել էին, այնպես էլ մնացել էր, և հավաքվեցին՝ իմանալու ճշմարտությունը: Այդ ժամանակ ծեր կինը հիշեց մուրացկանին հանդիպելու դեպքը և գյուղում պատմեց ողջ եղելությունը: Լսելով դա՝ գյուղացիները որոշեցին գնալ ծեր կնոջ

տուն ու տեսնել: Նրանք տեսան դռան վրա փակցրած կարմիր թերթը, բակում թափված, ամբողջությամբ վառված բամբուկները, իսկ տանը դեռ վառվում էր կարմիր մոմը: Որպեսզի տոնեին վիշապի հեռացման հաջողությունը, գյուղացիները հագան նոր շորեր, դրեցին նոր գլխարկներ և շնորհավորեցին բարեկամներին ու ընկերներին: Դրանից հետո Նոր տարվա նախաշեմին մարդիկ ընտանիքների դռներից կախում էին կարմիր թղթեր և խարույկ վառում Նոր տարին դիմավորելու համար: Մարդիկ սիրում են այցելել ընկերներին ու բարեկամներին հաջորդ օրը՝ առաջին լուսնային ամսվա առաջին օրը և շնորհավորել իրար: Այս ավանդույթը ավելի ու ավելի լայն տարածում ստացավ և դարձավ ամենակարևոր ավանդական փառատոնը Չինաստանում:

2. Ավանդույթները

Ընտանիքի վերամիավորման ճաշ Նոր տարվա նախաշեմին

Նոր տարվա նախաշեմի տոնը ամենանշանավոր տոնն է և լավ առիթ ընտանիքի վերամիավորման համար: Այդ օրը մարդիկ ողջ ընտանիքով հավաքվում են՝ դիմավորելու Նոր տարին: Նույնիսկ հեռուներում գտնվող բարեկամներն այդ օրը վերադառնում են, որպեսզի միասին նշեն այդ տոնը: Կանայք խոհանոցում խնջույքի համար պատրաստում են համեղ ուտեստներ, իսկ տղամարդիկ մաքրում են տունը և Գարնանային փառատոնի համար երկտողեր կպցնում: Երեխաների համար մի իսկական տոն է՝ զվարճանալու, ձնեմարդ պատրաստելու համար և հաճույք ստանալ հրավառությունից: Քաղցրաբլիթը անհրաժեշտ ուտեստ է այս տոնին: Չինացիների կարծիքով՝ Գարնանային փառատոնը չի կարող կատարյալ լինել առանց քաղցրաբլիթի: Ամանորի նախաշեմին բոլոր ընտանիքներում զբաղված են լինում միս ու բանջարեղեն կտրտելով, որպեսզի քաղցրաբլիթ պատրաստեն: Իսկ հրավառության ձայները լցվում են փողոցները: Մարդիկ նոր շորեր են հագնում և ժպիտը երեսներին՝ զրուցում իրար հետ, նրանք իրենց ուրախությամբ ստեղծում են երջանիկ ու հաճելի մթնոլորտ:

Գարնանային փառատոնի երկտողեր

Դռնից երկտողեր փակցնելը կարևորագույն ավանդույթ է այս փառատոնին: Երկտողերի բովանդակությունը Ամանորի ու երջանիկ կյանքի մասին է: Ժողովրդական բանահյուսության մեջ կա մի հետաքրքիր պատմություն Գարնանային փառատոնի երկտողերի հետ կապված: Մի օր երկու եղբայր դեղձի ծառեր տնկեցին: Մեծ եղբայրը պետք է տնկեր և ջրեր ծա-

ռերը, մինչդեռ փոքրը պատասխանատու էր ծառերի ճյուղերի ձևավորման ու պարարտացման համար: Հարևանները հիանում էին դեղձենիներով և կարծում էին, որ դրանք գերբնական են: Մի օր հողատերը, անցնելով դրանց կողքով, որոշում է ուտել դեղձերից, մտածելով՝ եթե ուտի դեղձը, կարող է անմահանալ: Նա ուղարկեց իր ծառաներին՝ թալանելու դեղձը, բայց եղբայրները արգելեցին նրանց: Ինչևիցե, հողատիրոջ ծառաները չէին հրաժարվում թալանելու մտքից, ամեն կերպ ուզում էին հասնել իրենց

նպատակին: Նրանք ուրվականի նման մտան դեղձենու այգին, որ վախեցնեին եղբայրներին: Բայց եղբայրները, այնուամենայնիվ, չվախեցան և որոշեցին միասին բռնել այդ մարդկանց: Մեծ եղբայրը օգտագործեց դեղձի ճյուղերը, իսկ փոքրը՝ մի խուրձ ծղոտ՝ նրանց բռնելու ու կապելու համար: Երկու եղբոր հերոսական արարքը շուտով տարածվեց ամենուր: Սակայն եղբայրները շուտով մահացան: Այդ գյուղում և նրա հարեւան գյուղում ապրողները շատ տխրեցին ու մխիթարվում էին միայն նրանով, որ եղբայրները անմահացան երկնքում՝ Յու Դի կայսեր կողմից: Մարդիկ կարծում էին՝ նրանց տնկած դեղձենիներն իրենց պաշտպանում են չար հոգիներից: Այդ ժամանակից ի վեր, Ամանորի նախաշեմին մարդիկ գնում են դեղձենու այգի և կտրում դեղձենու երկու փայտակտոր: Հետո դրանց վրա փորագրում են երկու եղբոր դեմքերը՝ դժբախտությունից խուսափելու համար: Այդ փայտակտորները յուրահատուկ թալիսմաններ դարձան, որոնք տարիների ընթացքում վերափոխվեցին Գարնանային փառատոնի երկտողերի:

Պատուհանների ձևավորում թղթերով

Պատուհանները ձևավորելու համար կարմիր թղթից կտրում են մարդկային ու կենդանական աշխարհին վերաբերող պատկերներ և փակցնում պատուհաններին: Թե հյուսիսում և թե հարավում մարդիկ միշտ պատուհաններին փակցնում էին այսպիսի թղթեր Գարնանային փառատոնի ժամանակ: Մանավանդ գյուղերում, գրեթե բոլոր ընտանիքներում պատուհաններից ու դռներից կախում էին այդպիսի թղթե պատկերներ՝ ցույց տալու համար իրենց ուրախությունը տոնի կապակցությամբ:

Շնորհավորական բացիկներ

Ներկայումս Ամանորին միմյանց շնորհավորական բացիկներ ուղարկելը դարձել է շատ հայտնի ավանդույթ աշխարհի ցանկացած ծայրում: Արևելյան երկրներում բացիկ ուղարկելը տոնական անհրաժեշտություն է Սուրբ Ծննդի տոնին: Երբ Գարնանային փառատոնը գալիս է, չինացիները իրար նվիրում են բացիկներ, որոնք կոչվում են գարնանային շնորհավորական բացիկներ: Ի դեպ, Չինաստանը առաջին երկիրն է, որտեղ սկսել են օգտագործել բացիկները: Չինական հին շնորհավորական բացիկները ներկայիս այցեքարտերի նշանակությունն էին կրում: Այսպիսով, գարնանային տոնին մարդիկ այցելում էին իրար այդ այցեքարտերով, որոնց վրա գրվում էին նաև բարեմաղթանքներ: Իրար հետ ծանոթանալու համար նրանք միմյանց նվիրում էին այդպիսի՝ դռանը փակցնելու թղթեր՝ ցույց տալու համար իրենց ինքնությունը: Միևնույն ժամանակ, այդ քարտերի վրա գրվում էին նաև օրհնության խոսքեր, բարեմաղթանքներ՝ կիսելով իրենց ուրախությունը: Աստիճանաբար, այդ բացիկները, որպես այցեքարտեր կորցրին իրենց ուժը, այսինքն՝ բացիկների վրա իրենց ներկայացնելու փոխարեն գրվում էին օրհնության խոսքեր: Այժմ, երբ գարնանային փառատոնը գալիս է, մարդիկ իրար նվիրում են շնորհավորական բացիկներ՝ լավագույն բարեմաղթանքներով:

Դռնից «福» արտահայտությունը կախելը

Գարնանային փառատոնին մարդիկ դռներից միշտ կախում են չինական «福» արտահայտությունը, որը նշանակում է երջանկություն ու հաջողություն: Այդ արտահայտությունը յուրահատուկ տոնական նշանակություն ունի Գարնանային փառատոնին: Օտարերկրացիները միշտ շփոթվում են, որովհետև այդ արտահայտությունը շրջված տեսքով այլ իմաստ



ունի, ինչը նշանակում է՝ «եկել է»: Շատ դեպքերում չինացիները այդ արտահայտությունն ուղիղ կախելու փոխարեն շրջված են կախում: Դռան վրայից շրջված «福» կախելը չինական մշակույթի մեջ նշանակում է՝ երջանկությունն ու հաջողությունը դռան շեմին է, այսինքն՝ երջանկությունն ու հաջողությունը արդեն քո տանն են:

Ամանորի նկարներ փակցնելը

Ամանորի նկարները ներկայացնում են չինական յուրօրինակ արվեստ: Ամանորի նկարները մեծամասամբ փորագրված են լինում փայտի վրա, և իրենց վառ գույներով վառ մթնոլորտ են ստեղծում՝ դյութելով բոլորին: Մարդիկ իրենց լավագույն ցանկություններն արտահայտում են ամանորյա նկարների միջոցով՝ ծաղիկների, թռչունների, կենդանիների, հեքիաթների, առասպելների կամ տարբեր պատմությունների միջոցով:

Նոր տարվա նկարների ընդհանուր թեման Աստծո պաշտպանությունն է: Աստծո պաշտպանության մասին կա մի հետաքրքիր պատմություն: Ասում են՝ Թան դինաստիայում, Չանղայն արվարձանի մոտով անցնող գետում ապրում էր Վիշապ կայսրը: Քանի որ Վիշապ կայսրը խախտել էր երկնային կանոնները, Յու Դի կայսրը հրամայել է գլխատել նրան: Գլխատման գործակատարը հայտնի պաշտոնյա էր: Այդ պատճառով Վիշապ կայսրը խնդրեց Թան դինաստիայի Թայծոն կայսրին՝ պատիժը չեղարկել: Մի գիշեր, երբ Թայծոն կայսրը խոր քուն էր մտել, Վիշապ կայսրը սողոսկեց նրա երազի մեջ և նկարագրեց ողջ եղելությունը: Թայծոն կայսրը մեծ համակրանքով լցվեց Վիշապ կայսեր հանդեպ և խոստացավ ազատել նրան: Սակայն, այնուամենայնիվ, Յու Դի կայսեր նշանակած օրը պաշտոնյան գլխատեց նրան: Հետագայում Վիշապ կայսրը ուրվական դարձավ և որոշեց մահվան վտանգի ենթարկել Թայծոն կայսրին:



Թայծոն կայսրը վախենում էր քնել: Որպեսզի թեթևացնեն կայսեր տառապանքները, պաշտոնյան հրամայեց երկու զորավարի կանգնել պալատի դարպասների առջև և ամբողջ գիշեր հսկել կայսրին: Այդ օրվանից Վիշապ կայսրը այլևս չհամարձակվեց վնասել նրան: Պատմությունը շուտով տարածվեց ժողովրդի մեջ, և հասարակ մարդիկ ապահով լինելու համար նկարում էին այդ երկու զորավարների դիմանկարները և դրանք փակցնում իրենց դռներից՝ ազատվելու ուրվականներից ու հրեշներից:

Ամանորյա բրնձով թխվածք ուտելը

Ամեն տարի Գարնանային փառատոնին, Չինաստանի հարավային մասում մարդիկ կպչուն բրնձի ալյուրով պատրաստում են թխվածք: Ըստ համի՝ կան երկու տեսակի թխվածքներ՝ հարավային և հյուսիսային: Իրականում, հարավային ամանորյա թխվածքն ավելի լավ համ ունի: Ամենահամեղ հարավային թխվածքները պատրաստում են Սուչժոուում, Գուանդունում, Նինգբոյում: Թխվածքները լինում են երեք համի՝ աղի, քաղցր և անուշաբույր: Կան այդ թխվածքների պատրաստման շատ եղանակներ՝ շոգեխաշման, տապակման, եփման, որոնք չինական համեղ խոհանոցի մի մասն են կազմում:

Տաճարի տոնավաճառում շրջելը

Գնումներ կատարելու համար մարդիկ նախընտրում են Տաճարի տոնավաճառը, որտեղ կարելի է գնումներ կատարել, զվարճանալ եւ նույնիսկ երկրպագություն կատարել: Սա տոնական ավանդույթ է չինական մշակույթում: Տաճարի տոնավաճառը կապված է կրոնական ծիսակատարությունների հետ: Հարավային և Հյուսիսային դինաստիաներում բոլոր տիրակալները ընդունում էին բուդդայականությունը, ուստի նրանք ամենուր տաճարներ էին կառուցել: Երբ կրոնական ծիսակատարություններ էին տեղի ունենում, մարդիկ չորս կողմից գալիս ու գնում էին: Վաճառող-

ները հավատացյալներին ցույց էին տալիս իրենց ապրանքները՝ տաճար տանող փողոցի երկու կողմերում, եւ այդ գործն աստիճանաբար վերածվեց տոնավաճառի: Այժմ տաճարի տոնավաճառում կան բազմաթիվ՝ սննդի տաղավարներից մինչև տարբեր ապրանքների տաղավարներ: Միաժամանակ, երջանիկ մթնոլորտ ստեղծելու համար, կազմակերպվում են նաև տարբեր ներկայացումներ և նույնիսկ ավանդական չինական օպերա: Տոնավաճառին կազմակերպվում են նաև ժողովրդական մշակույթը ներկայացնող տարբեր միջոցառումներ: Ժամանակի ընթացքում հսկայական փոփոխություններ են կատարվել տոնավաճառի հետ կապված: Տաճարի տոնավաճառի ժամանակ կազմակերպվում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են առյուծապարը, ծաղիկների ցուցահանդեսը, ձեռքի աշխատանքների ու գրքերի ցուցահանդեսը, որի ընթացքում ծաղիկները, ձեռքի աշխատանքներն ու գրքերը վաճառվում են զեղչված գներով: Ներկայացվում են չինական ավանդական օպերա, ռազմական արվեստ, ակրոբատիկա և այլ յուրահատուկ միջոցառումներ, որոնք այդ վայրը այցելության համար ուշագրավ են դարձնում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լապտերների փառատոն.....5
Փետրվարյան երկրորդ լիալուսնի փառատոն.....11
Նախնիների հիշատակության փառատոն.....16
Ջրցանի փառատոն.....22
Վիշապանավի փառատոն.....27
Վալենտինի տոնը Չինաստանում.....35
Ճունգյուենի փառատոն.....41
Նադամի տոնավաճառ-փառատոն.....48
Միջաշնանային փառատոն.....53
Չոնգյանի փառատոն.....59
Ցմեռային հագուստի փառատոն.....65
Ցմեռային արեւադարձի փառատոն.....70
Լաբայի փառատոն.....76
Չինական Նոր տարվա նախաշեմ.....81

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

ՓԱՌԱՏՈՆԵՐ

Անգլերենից թարգմանությունը՝
Քրիստինե ԲԱԼԱՅԱՆԻ

Չինարենից անգլերեն թարգմանությունը՝
Շեն Յինժուո

Ստեփանակերտ 2017

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն. ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016

«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Հեռ.: +37497252323